

Ան. Զ/Կրկանագր-

Զանգու

1920

291. 99

P-68

Հրատարակութիւն «ԿԵԼԻԿԻՍ» Դրականառանցի — ԹԻՎ 9

ՇԻՐՎԱՆՁԱԴԷ

ՆԱՄՈՒՍ

Դրամա չորս տարումով
Փոխադրուած հեղինակի ձեռնով՝ իւր նոյնանուն վէպից

ԵՐԿՐՈՐԳ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Եւրպ.
ԱՅԿԱՇԵՆ — ԹԻՎ 4

891.99
6-66

Կ. ՊՈԼԻՍ

1921

ՏՊԱԳՐ. ՍԱՆՃԱԳԵԱՆ

Դր. 50

75 ՍԷՆԹ

ՏՊԱԳՐ. ԱՐՐՈՂԱՍԵԱՆ

ԲԵՐԹԵՐԻ ԳՈ. ԳՆԱՎ

ՏՈՒՄՆԵՐ

ԱՆԱԹԷՄՅ, 5 արար, Լ. Անդրէա	75
ԱՍԼԱՆ ՊԷԿ, 3 արար, Շահան Նաթալի	40
ԱՐՑՈՒՆԻՔԻ ՀՈՎԻՏԸ, 5 արար, Ա. Անարոնեան	75
ԲԺԻՇԿԸ, 3 արար, Վ. Վալադեան	40
ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ, 4 արար, Վ. Վալադեան	75
ԹԱԳԱՒՈՐ, 4 արար, Իշկէւիչ	50
ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ (6 կտոր)	150
ԻՕԱՆՆ ԱՀԵՂԻ ՄԱՀԸ, 5 արար, Կոմս Ա. Տօլստոյ	50
ԿԵՆԴԱՆԻ ԴԻՍԿ, 6 արար, Կոմս Ն. Տօլստոյ	50
ԿՈՅՐ ԵՐԳՉՈՒՀԻՆ, 3 արար, Ճ. Տէյպս	25
ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ, 4 արար, Լ. Շանթ	80
ՀԻՏՐԱ, 5 արար, Շարլ Մէրէ	100
ՀԱՄԱՐՈՒՆ ՎՐԱՅ, 5 արար, Լ. Շանթ	30
ՄԱՆՅՐԷԴ, 3 արար, Լորտ Բայրըն	25
ՄԱՐԻԱ ՍԴԻԱՐԴ, 5 արար, Շիլլէր	50
ՈՐ ՄԷԿՈՒՆ ԵՏԵՒԷՆ, 5 արար, Թլլատինցի	40
ՈՒԺԻՆ ՎՃԻՌԸ, 2 արար, Օ. Շէրիտհան	20
ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ, 3 արար, Լ. Շանթ	30
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ, 3 արար, Հ. Իրսէն	50
ՋԻՈԿՈՆԴԱ, 5 արար, Գ. Դ'Անտոնի	40
ՍԱՍՈՒՆԸ ԱՅՐԻՈՒՄ Է, 5 արար, Բ. Այվադեան	75
ՎԱՐԴԱՆԱՆՔ, 3 արար, Լէօ	40
ՎԱՐԴԱՆԱՆՔ, 5 արար, Ս. Բիւրատ	15
ՅԱՌԻՍ, Վ. Կէօթէ	80
ՅԷՇԵՐ ԻՕԱՆՆՈՎԻՉ ԱՐՔԱՆ, 5 արար	40

ՇԻՐՎԱՆՋԱԴԷԻ

ԱՐՄԵՆՈՒՀԻ, 4 արար	100
ԱԻԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ, 4 արար	100
ԵԻԳԻՆԷ, 3 արար	75
ՆԱՄՈՒՍ, 4 արար, Բ. տպ	50
ՉԱՐ ՈԳԻ, 4 արար, Բ. տպ	50
ՊԱՏՈՒ ՀԱՄԱՐ, 4 արար, Բ. տպ	40

46P

891.99

Ե-66

ՇԻՐՎԱՆՋԱԴԷ

Ն Ա Մ Ո Ւ Ս

Դրամա չորս արարումով

Փոխադրում հեղինակի ձեռնով իւր նոյնանուն վեպից

ԵՐԿՐՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ա. ՇԱՐԲ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՀԱՅԿԱՇԵՆ — ԹԻԻ 4

Կ. ՊՈԼԻՍ

1920

ՏՊԱԳՐ. ՍԱՆՃԱԳՃԵԱՆ

Այս պիեսի ներկայացման իրաւունքը վե-
րապահուած է հեղինակին: Գաւառներում և
այլուր ներկայացնողները պարտաւոր են հեղի-
նակին ուղարկել 15% վարձ՝ ներկայացման ընդ-
հանուր հասոյթից, այլապէս կենթարկուեն օրի-
նական պատասխանատուութեան՝ տէրութեան
ընդհանուր օրէնքների հիման վրայ: Հեղինակին
հասցէն՝

Tiflis — A. CHIRVANZADÉ



29198.61

ՆՈՒՐՈՒՄ Է

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԽԱՏԻՍԵԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

ԱՆՁԻՆՔ

- 1) ԲԱՐԽՈՒԴԱՐ, Ասիական դերձակ, առաջ 48 յետ. 57 տ.
- 2) ՍՄԲԱՏ, Նրա որդին, առաջ 12 յետոյ 21 տարեկ.
- 3) ՀԱՅՐԱՊԵՏ, Կաւէ ամաններ ծախող, առ. 45 յետ. 54 տ.
- 4) ՍԷՅՐԱՆ, Նրա որդին, առաջ 11 յետոյ 20 տարեկ.
- 5) ՌՈՒՍՏԱՄ, Վաճառական, 32 տարեկան.
- 6) ԶԱԽԱԴ, $\left\{ \begin{array}{l} 35 \text{ տարեկան.} \\ \text{Անորոշ տարիքով.} \\ \text{Ռուստամի հասակակից.} \end{array} \right.$
- 7) ՄԱՐՏԻՐՈՍ, $\left\{ \begin{array}{l} 25 \text{ տարեկան.} \end{array} \right.$
- 8) ԶԱՀԱՆԳԻՐ, $\left\{ \begin{array}{l} 25 \text{ տարեկան.} \end{array} \right.$
- 9) ԵԳՈՒ, $\left\{ \begin{array}{l} 25 \text{ տարեկան.} \end{array} \right.$
- 10) ՀԱՄԲԱՐՉՈՒՄ — Ռուստամի ծառան. . . 25 տրկ.
- 11) ԱՂԱՔԷԴ, Հարսանիքի հիւր . . . 18 տրկ.
- 12) ՍԷՐԳԷՅ-ԲԷԴ, Հարսանիքի թամազա . . 40 տրկ.
- 13) ԽԱԶԵՂԱՅՐ, Երիտասարդ:
- 14) Ա. Հիւր $\left\{ \begin{array}{l} \text{Երիտասարդներ — տղամարդիկ:} \end{array} \right.$
- 15) Բ. Հիւր
- 16) Գ. Հիւր

ԿԱՆԱՅՔ

- 1) ԳԻՒԼՆԱԶ, Բարխուդ.ի կինը, առ. 38 յետոյ 47 տ.
- 2) ՍՈՒՍԱՆ, Բարխուդ.ի աղջիկը, առ. 9 յետոյ 18 տ.
- 3) ՄԱՐԻԱՄ, Հայրապետի կինը, առ. 40 յետոյ 49 տ.
- 4) ՍԱՆԱՄ, Ռուստամի մայրը. 50 տ.
- 5) ՇՊՊԱՆԻԿ, Միջնորդ կին 40 տ.
- 6) Ա. Հիւր $\left\{ \begin{array}{l} \text{Միջին տարիքի կանայք:} \end{array} \right.$
- 7) Բ. Հիւր
- 8) Գ. Հիւր

ԱՆԽՕՍ

Հիւրեր, հարեւաններ, անցորդներ — երկու սեռից:

Քահանաներ, տիրացուներ, երաժիշտներ, ոտանաւորներ*):

Գործողութիւնը կատարուում է Շամախի քաղաքում՝

1859 — 69 թուականներին: Նախերգանքի և առաջին արարուածի մէջ անցնում է իննը տարի:

*) Ոտանաւորներ կոչուում են այն հիւրերը, որոնք սպասաւորի դեր են կատարում:



ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՍՈՒՍԱՆԻ ԵՒ ՍԷՅՐԱՆԻ ՆՇԱՆՈՒԻԼԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ

ՅԵՏՈՅ

Երկու տնակների մէջ եղած պարիսպը նոր խորտակուել է երկրաշարժից և նրանց կանաչագարդ գաւթները բեմի առաջին մասում միացել են: Դէպի աջ՝ Բարխուդարի միջարկանի տնակն է տափակ կտուրով և երկու լուսամուտներով: — Չախ՝ Հայրապետի միջարկանի տնակն է տափակ կտուրով և մի լուսամուտով — դէպի գաւթ: Երկու տնակների առջեւ նեղ քարաշէն սաքուններ: Գաւթների յետին մասը ներկայացնում է խորտակուած պարսպի աւերակը, յետոյ փայտեայ ցանկապատ երկու ծուռ ու մուռ դռնակներով դէպի փողոց, որոնցից ձախ կողմինը տանում է դէպի Հայրապետի աջ կողմինը՝ դէպի Բարխուդարի տնակը: Աւանտներից սկսած գաւթների երկու երրորդական մասը դէպի խորքը ծածկուած է խտրներով, թաղիքներով և հասարակ կապերտներով, որոնց վրայ խառն ի խուռն դարսած են մեծ քանակութեամբ բարձեր, վերմակներ, ներքնարկներ և այլն: Մի չթեայ վարագոյր բեմը կիսում է երկու մասի: Այդ վարագոյրը ամբողջ ժամանակ ժողոված է, միայն գործողութեան վերջումն են բաց անում: Խորքում, պարսպի աջ և ձախ կողմերում երկու մեծ թթենիներ, որոնցից մէկը Բարխուդարի, միւսը Հայրապետի տնակին է պատկանում: Ցանկապատի ետեւը փողոց է, այնուհետև քաղաքի աւերակները: Վաղ երեկոյ է, արեգակի դեղնագոյն ճառագայթները ոսկեզօծել են հեռաւոր աւերակները: Օդի մէջ թանձր փոշի, օրը հետզհետէ մըլթնում է:

ՏԵՍԻՆ 1.

Վարագոյրը քարձանայիս խուշ դորդոցներ, գոռուկոցիւններ, քարձ քացի եւ զանգերի ձայներ: — Այս բոլորը սկզբուն խղացուցիչ է, սպա զնայով բուքանում եւ վերջապէս դադարում է, երբ մութը բոլորովին սիրում է: — Փողոցով անցնում եմ խումբ-խումբ տղանարիկ եւ կանայք, մեծ մասամբ ոտքաքայլ, գլխաքայլ, փոշով ծածկուած: Շատերը բեռնաւորում եմ տնային իրերով: — Կանայք գրկած կամ մեծիների վրայ սանում եմ երեխաների: Մի քանի պատգարակներ, վրան դիակներ եւ վիրաւորումներ: — Պատգարակների աղօղ եւ կեռից քացող եւ կուրծք ծեծող կանայք՝ զգգուն մագերով:

ՍՄԲԱՏ: (Վարագոյրը քայքայեղ բաւական անցած՝ գալիս է յոգնած, փոշոտ, քրտնոտ սրբերով: Տաներկու սարեկան պատանի է, հագած կապսագոյն արխարուղ, կարճ ջուխայով, մեծիկն արծաթեայ գօշի, գլխին Բուխարայի մորթուց ցածր եւ կրոր գդակ, որ այն ժամանակ «Գարիքայի» անունն էր կրում: Ոտներին հասարակ ոռնալան կոշիկներ, որոնց անկերկ անկարողի մեջ եմ մեցրած վարձիկի ծայրերը: Առաջ է գալիս եւ նստում է Սուսանի եւ Սեյրանի անկողիների միջեւ յասակի վրայ, գրակը գլխից վերցնելով): Օ՛հ, ոտներս կոտորուեցին, հոգիս բերանս եկաւ:

ՍԷՅՐԱՆ: (Նստած է ձախ, յասակի վրայ փռած անկողնի մեջ հագունւոյ: Տանուռնիկ սարեկան պատանի է: Հագած է անարային ալիսակ արխարուղ չքից. մեծիկն արծաթեայ գօշի, ոտներին հասարակ ոռնալան կոշիկներ: Գլուխը փաքաքած է կապոյտ քաշկիւնակով: Մի քանի ժամ առաջ նրան դուրս եմ քերել փրատակների տակից, ուսիս փոշոտ է): Գնացի՛ր թուրքերի թաղը:

ՍՄԲԱՏ: Հէնց այնտեղից եմ գալիս: Էլ տեղ չթողեցի. Շիւրի, Մէյդանլի, Սարի-Թորիաղ: Տեսայ քանդուած մեջիդները, բաղնիսները, քարանսարանները:

ՍՈՒՍԱՆ: (Նստած է հագունւոյ աջ կողմի անկողնի մեջ: Ինքն

սարեկան սիրունարեւ աղջիկ է, հագին կարմիր շապիկ, մանիշակագոյն մետաքսայ արխարուղ քաց կրծքով եւ տերեւաձէր քերտով: Գլխին կապած է ձուքիս: Ոտներին կոպիտ եւրոպական կոշիկներ): Ասում են թուրքերից շատ մարդ է սպանուել. ճշմարիտ է:

ՍՄԲԱՏ: Շա՛տ, շատ-շատ: Ղալա-բաղարի բաղնիսից տանուռնորս մարդ դուրս բերեցին տափակած արիւնաթաթախ: Աչքովս տեսածը համբեցի մինչեւ վաթսուն: Էէ՛, շատ է, ի՜նչ հարկւր, ի՜նչ երկու հարկւր: Հայերից քիչ մարդ է սպանուել, այն էլ բաղարում: Զօրէն տանում են նրանց դիակները: Դէ՛հ, հիմի դուք պատմեցէք, ի՜նչպէս մնացիք հողի տակ: (Գրպանից դուրս է քերում մի խնձոր եւ կրծոցելով ուտում է):

ՍԷՅՐԱՆ: Մենք մեր փողոցումն էինք: Ես Սուսանի համար մեր ծառից թուրք էի թափ տալիս քարերով ու փայտերով: Առաջ առաջ երկինքը օրոտաց:

ՍՈՒՍԱՆ: (Վրդովուելով) Էլի՛՜ առաջ երկինքը: Տափի տակից էլ, տափի տակից, կարմիր կոփէ էր մոնչում: (Գրպանից հանում է ծաւփ եւ սխտւում է ծաւփ):

ՍՄԲԱՏ: Լա՛ւ, թող պատմի:

ՍԷՅՐԱՆ: (Ժպտալով) Շները սոնացին, հաւերը կշկշալով դէս ու դէն փախան: Տափը լիւլիաց, տները օրօրուեցին: Ես վախից կուչ եկայ: Սուսանը վաղեց, փէչիցս բռնեց, «վա՛յ մամա, վա՛յ մամա» կանչելով:

ՍՄԲԱՏ: Յետո՛յ, յետո՛յ:

ՍԷՅՐԱՆ: Յետոյ փախանք:

ՍՄԲԱՏ: Փողոցի մէջտեղով պիտի փախչէիք:

ՍԷՅՐԱՆ: Շուարուել էինք, մոռացանք, պատերի տակով փախանք: Շափալեանց տան առաջ գլխիս վրայ մի մեծ բան ընկաւ:

ՍՈՒՍԱՆ: Հէնց Շափալեանց դուռն էր:

ՍԷՅՐԱՆ: Գլուխս պտտեց: Աչքերս մթնեցին, ընկայ երեսիս վրայ:

ՍՈՒՍԱՆ: Ես էլ ընկայ:

ՍԷՅՐԱՆ: Մէկ էլ յանկարծ դիւ ուղիւ հող, քար, փայտ
թափուեցին մեր գլխին:

ՍՄԲԱՏ: (Դէն գցելով կերած խնձորի միջուկը) Ուշքդ չգը-
նաց:

ՍԷՅՐԱՆ: Չէ, գլուխս ջարդուել էր, արիւն էր գնում:
Աստուծո ռոգորմութիւնով դուռը մեր վրայ էր, չթողեց որ
ճիւղտուենք: Բայց շունչս կտրուում էր: Սուսանը լաց էր լի-
նում: Սիրտս մղկտում էր: Ուզում էի խօսել, ձայնս փորի-
ցըս դուրս էր գալիս. վերջը աչքերս մթնեցին, էլ ոչինչ
չտեսայ:

ՍՈՒՍԱՆ: Ես տեսնում էլ էի, լսում էլ էի:

ՍՄԲԱՏ: Ի՞նչ էիր տեսնում:

ՍՈՒՍԱՆ: Կարմիր կովին:

ՍԷՅՐԱՆ: Կարմիր կով չկար:

ՍՈՒՍԱՆ: (Վիրաւորուած արեւմտափայտ) Սուտ ես ասում,
կար, աչքովս տեսայ: Նա մեր տնից մեծ էր, մեր ծառից
բարձր: Աչքեր ունէլ — արիւնով լիքը գաւաթների պէս,
բերան ունէր — վառած թոնրի նման: Ալով էր դուրս
գալիս այնտեղից վովոյով: Լեզուն այսօր էր, այ,
է՛լ աւելի. պոզերը սուր-սուր, ծուռ-ծուռ: Մի մոնչում
էր, որ մազերս փշաքաղում էին. մարմնս դարձանդում էր:
ՍԷՅՐԱՆ: (Հանգիստ) Ես քեզ ասում եմ տափի տակին
կարմիր կով չկար: Եթէ լինէր, ես էլ կը տեսնէի:

ՍՈՒՍԱՆ: Ես էլ քեզ ասում եմ կայ, կայ ու կայ: Դու
չգիտե՞ս, որ աշխարհը այդ կարմիր կովի մէջքի վրայ է
կանգնած: Նա հազար ոտներ ունի: Երբ մենք չարութիւն
ենք անում, մեր ծնողների խօսքը չենք լսում. կարմիր կովը
կատաղում է, մէջքը թափահարում է, տափը շարժում է,
տները թափւում են, մարդիկ տակն են մնում: Թող Սմբատը
ասէ, եթէ ինձ չես հաւատում:

ՍՄԲԱՏ: Ես մի օր մեր վարժապետին հարցրի, նա
ասաց, որ տափի տակին ո՛չ կարմիր կով կայ, ոչ էլ սպի-
տակ (վեր է կենում):

ՍՈՒՍԱՆ: (Վշտանալով, բաց է անում աջ ձեռի հիւնք մաս-
ները օղի մեջ և անակ անում վարժապետի հասցիին): Առա է,
հողա քո վարժապետի գլխին, նա ի՞նչ է հասկանում:

ԴՐՍԻՑ: (Հաւում է բաւականին երկարատեւ դրդիւն):

ՍՈՒՍԱՆ: (Սարսափած ոսփի է քոցում): Այ, տեսա՞ր, էլի՛
կարմիր կովը կատաղեց:

ՍԷՅՐԱՆ: (Սարսափած, ոսփի է քոցում): Տափը շարժ-
ւում է: Փախչենք:

ՍՄԲԱՏ: Իսկի մի վախենաք, տափը հանդարտ է, գնամ
տեսնեմ ի՞նչ պատահեց (վազում է քեւի խորքը):

ՍՈՒՍԱՆ: (Իրար ձեռքից քոնած, երկիւղով նայում են
դէպի խորքը):

ԴՐՍԻՑ: (Շարունակ շաւում է սղմուկ, սակայն ո՛չ ստաց-
ուայ պես ստափի: Զանգերը դարձան են):

ՍՄԲԱՏ: (Քիչ յետոյ գաղիս է): Ոչինչ, մի՛ վախենաք, Զօ-
փուռանց տան մնացած պատն էր. իրանք թափեցին, որ
անցնողների վրայ չընկնի:

ՏԵՍԻՆ 2.

Նայնի և Մարիամ

ՄԱՐԻԱՄ: (Գալիս է ձախ կողմի սնակից, ձեռքին մի վա-
ռած մուր, որ դնում է իրանց սան սափուի վրայ: Մօտ քառու-
սում տեսնում կին է, հասարակ տղայիս հագնով. գլխին քոռ
է կապած, ուսերին գցած հասարակ հմանաչ շալ): Մութն ըն-
կաւ, երկինք երկիր խաւարուեց: Ի՞նչ մեղք էինք արել,
երկնային դատաւոր, որ այսպէս պատժեցիր մեզ: Պառկե-
ցէք, բալաներս, պառկեցէք, մի՛ լսէք այդ դարհուրելի ձայ-
ները, մի՛ տեսնէք այդ դիակները, որ տանում են փողոցով:
Օրհնեալ լինի Աստուծո զօրութիւնը, օրհնեալ լինի, որ ձեզ
ազատեց: (Զեռնելը դէպի երկինք բարձրացնելով) Տէ՛ր, դու
սրանց պահես պահպանես փորձանքներից:

ՍԷՅՐԱՆ: (Նստում է անկողնի մեջ) Մամա, ես քաղցած եմ:

ՍՈՒՍԱՆ: (Նստում է անկողնի մեջ) Ե՛ս էլ, (ծանօղը դուրս
է քերում բնակից):

ՄԱՐԻԱՄ: Բար կարուեմ, բալաներս, այսօր անօթի էք.
գնամ հաց ու պանիր բերեմ ձեզ համար (ուզում է գնալ):

ՏԵՍԻՆ 3.

Նոյնք եւ Գիւղնագ

ԳԻԻԼՆԱԶ: (Գալիս եւ այ կողմի դռնից, ձեռքին մի վառած մուս, որ դնում է իրանց սան տախտի վրայ: Կռակ սակին մի կապոյն ակոնց եւ միւս ձեռքին ակահներ: Մարիամից մի փչեւ երի-
սասարդ կին է, աւելի սիրուն: Հագնուած է Մարիամի պէս, շարք
հետեւից չի): Համբերիր, ա՛հ կնիկ, ես սեղան եմ պատրաս-
տում: Մենք էլ անօթի ենք, միասին մի բան ուտենք.
(ակոնց ակոնքն է յասակի վրայ եւ ակահները վրան դարձնում):

ՄԱՐԻԱՄ: Աստուած ինձ յաւիտեան անօթի թողեց: Ա՛խ,
Գիւղնագ, քանդուեցինք-պրծանք: Գնացել էի մարդուս դու-
քանը տեսնելու: Այնքան կուժ ու կուլայից քան հատ չի
մնացել, չի՞մ փչրուել է, մոխիր դարձել (արտառում է):

ԳԻԻԼՆԱԶ: Ի՛նչ անենք, մինիկ տղայիդ կեանքին մա-
տաղ, մարդուդ կուժ ու կուլան: Մի կտոր հաց միշտ կը ճա-
րենք, բայց զաւակներ ճարել չենք կարող:

ՄԱՐԻԱՄ: (Աջերը քաշկիմակով արեղով) Դէ՛, դրուստ ես
ասում, ինչ ասեմ, փա՛ռք Երկնաւորին (սխտում է օգնել Գիւղ-
նագին):

ԳԻԻԼՆԱԶ: Փա՛ռք, փառք եւ փառք. որ դրանք կեանքն
առաւ ու մէկ էլ մեզ բաշխեց: (Ցոյց է ցոյլս Սուրբին եւ Սեյ-
րանին, նայելով դեպի երկինք): Արարիչ Աստուած, ի՛նչ կապոյտ
է երկինքդ, ի՛նչ պայծառ են աստղերդ, բայց չգիտեմ ինչո՞ւ
ես բարկանում մեզ վրայ:

ՍՈՒՍԱՆ: Մամա, իմ աստղը ո՞րն է (վեր է կենում):

ԳԻԻԼՆԱԶ: Այ, տեսնում ես, այն պզտիկն է, եօթ եղ-
բայրների մօտ: Աստուած քեզ եօթի տեղ մի եղբայր է տուել,
աղաչիր նրան, որ պահի պահպանի մինիկ եղբորդ չար աչ-
քից, չար նիստից (սեղանի շուրջը ներհարկներ է գցում):

ՄԱՐԻԱՄ: Է՛հ, ես էլ գնամ, ինչոր ունիմ, բերեմ (զնում
է այս կողմի դռներով եւ խոյն գալիս, քերելով մի ֆանի լիֆե
ակահներ, օղու շիշ եւ բաժակներ):

ՍՄԲԱՏ: Ես մինչեւ լոյս չեմ քնելու:

ՍՈՒՍԱՆ: Ես էլ:

ՍԷՅՐԱՆ: (Ոտի քոշերով) Հափ հափ հուռա, քէֆ ենք
անելու:

ՄԱՐԻԱՄ: Սուս, ամօթ է, լսո՛ւմ ես լացի ձայները: Ամ-
բողջ քաղաքը սգի մէջ է: (Բերած ակահները դնելով ակոնցի
վրայ) Քամած մածոն, խաշած ձուեր, այս էլ մի քիչ ձուկ:

ԳԻԻԼՆԱԶ: (Դնելով ակոնցի վրայ բերած ակահները) Այս
էլ պանիր, թթուեղէն, խաշած հաւ, արաղ: Սուբատ, այն
ճրագները մէջ տեղ դիր:

ՍՄԲԱՏ: (Վերցնում է տախտի վրայից Մարիամի եւ
Գիւղնագի սեղանը մուկերը եւ դնում ակոնցի վրայ):

ՏԵՍԻՆ 4.

Նոյնք եւ Հայրապետ

ՀԱՅՐԱՊԵՏ: (Գալիս է խորքի ցանկապատի ձախ կողմի դռ-
նակից: Քառասունուհինգ տարեկան տղամարդ է, նիհար, քայց
գուռք դնելով, փչեւ ակահներ կտրճիկի միտումով, շատ հաստ ու
ցած ընկած բիսկերով: Հագած է կապսաղոյն արխաղոյ, սեւ
խոնացած ջուխայ կտրճ բերելով: Մեքիկ կապած է մոխրագոյն
հասարակ անուշաք գոշի: Ոտերին հագած է սպիտակ գուլպաներ
եւ ֆոշեր (ջութիկներ), ոտից մինչեւ գոյն ծածկուած է փոշով:
Հասնելով կապերների սանահին, հագուստը քափ է ցալիս եւ
այցկաւ ստաջ գալիս):

ՄԱՐԻԱՄ: Եկա՞ր, վերջապէս: Ի՛նչ նոր խաբար ես
բերել:

ՀԱՅՐԱՊԵՏ: Տեսայ բոլոր ազգահաններիդ ու ազգա-
կաններին: Շաժեհանց տան պատերը ճաքել են, վնաս
չանի: Մաղաքանց կտուրը թափուել է, դա էլ վնաս չունի:
Ճատտի կտուրանց տունը տակն ու վրայ է եղել, ինձ հար-
ցընես, դա՛ էլ վնաս չունի: Ամա որ Մարմարանց հաւա-
քունը ընկել է, երկու հաւ է սատկել, դա մեծ վնաս է բող-
բաշի համար:

ՄԱՐԻԱՄ: Տեսա՞նք, ունեցած-չունեցածդ ձեռքիցդ
գնացել է, էլի հանաքներ ես անում:

ՀԱՅՐԱՊԵՏ: Զառ ու ջահաննամանը, որ գնացել է (ուզում է Մարիամին գրկել, ընդդիմադրելով սեաներով, զայտում է իրան) Մի կտոր հաց միշտ կը ճարենք: (Սեղանը սեաներով) Օհօ', սեղան էք պատրաստել: Այդ լաւ է, քաղցած եմ: Արադ էլ կայ: Կայ, էլ ինչու ենք սպասում: Բարխուդարը տանը չէ: (Բողի է վերցնում ու ծանում):

ՄԱՐԻԱՄ: Շուտով կը գայ:

ԴՐՍԻՑ: (Հեռուից շուտ է քնքունների, ծնոդանների ձայներ: Թուրքերը ողբում են իրանց մեռելներին, գողաղով «Շան Հիւսէյին, վան Հիւսէյին»):

ՍԷՅՐԱՆ: Այդ ի՞նչ է:

ՀԱՅՐԱՊԵՏ: Թուրքերը շախմէյ վախմէյ են անում իրանց մեռելների համար:

ՍՈՒՍԱՆ (Գրկելով Գիւլնագին) Մամա, ես վախենում եմ:

ԳԻԻԼՆԱԶ: Մի՛ վախենար, բալաս:

ՄԱՐԻԱՄ: Գիշերուայ խաւարին այդ ձայները մարդու զարգանդեցնում են:

ԳԻԻԼՆԱԶ: Կարծես դժոխքից են գալիս:

ՀԱՅՐԱՊԵՏ: (Բարխուդարին սեաներով) Եկ, ա՛ մարդ, քաղցած մեռանք:

ՏԵՍԻՒ 5.

Նոյնի եւ Բարխուդար

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Գալիս է աջ կողմի դռներից մի երկար եւ շատ բարակ չիքուխ ծխելով: Բարձրահասակ խոժոռ ու մուսկլի դեմքով մարդ է, սափրած երեսով: Հագած է երկար քեւերով ջուխա, քալից հին ձեռի արխալուղ, շայն եւ տեւաձեւ քեւերով ու բաց կրծքով: Մեջքին, արխալուղի վրայից կապած է կապոյտ մետաքսեայ գոտի: Դիւխին դրած է երկար, արածայր գդակ: Բառաւունք եւ ուր զարկան է: Բայրում է ծանր, միշտ գլուխը հպարտ, բարձրացած: Շախմէյ վախմէյի հասցեին): Քանդուեց, տալիս ու վրայ եղաւ չէն քաղաքը: Դա Աստու աղար պատիժն էր, որ եկաւ մեր գլխին (կապերներին հասնելով, ջնուշկները հանում է եւ այնպիսի սուաք զայիս):

ՀԱՅՐԱՊԵՏ: Ինչու, Աստու աղար պատիժը հէնց մեզ է հասնում: Ուրիշ քաղաքներ չկա՞ն:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Ոչ մի տեղ չկայ այն ապականութիւնը, ինչոր այս անխճուած երկրում: Հաւատ չմնաց, օրէնք չմնաց, բոլորը ոտնատակ արին մարդիկ: Ո՛վ էր տեսել, որ հայ քրիստոնեան ժողովայ խաչ ու խաչվար, չուղենայ լսել դանդերի ձայն, պատ ու ծո՞ւ չպահի:

ՀԱՅՐԱՊԵՏ: Էլի լիւտերականների դէ՞մ ես կատարել:

ԴՐՍԻՑ: (Դադարում է շախմէյ վախմէյը):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Աւելի զրգուկելով) Քանդուե՛լ նրանց տունը, որ մեր աները քանդեցին: Տեսնուած բան է, որ հայ քրիստոնեան պսակուի իր հօրեղբօր կամ մօրաքրոջ աղջկայ հետ: Ի հարկէ, Նա երկնքից մտիկ է անում, տեսնում է այս ամէնը ու մեզ պատժում է, Թագն էլ այրւում է չորի կրակով:

ՀԱՅՐԱՊԵՏ: Իմ կարճ խելքով լիւտերականութիւնը շատ լաւ բան կը լինէր, եթէ թոյլ տար արադ գլխի խմել:

ԲԱՐԽՈՒԴԱՐ (Կասաղի հայեացքի ձգելով նրա վրայ): Հայ-բապետ:

ՀԱՅՐԱՊԵՏ: Լաւ, լաւ, հանաք արի:

ԳԻԻԼՆԱԶ: (Բարխուդարին) Նստի՛ր, երեխաները քաղցած են:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Նստում է ծաղապսիկ սեղանի վրա, չիքուխը մի կողմ դնելով) Նստեցէ՛ք:

ԱՄԷՆԲԸ: (Նստում են ակոսի շուրջը — ծաղապսիկ, կանայք ապստելով, որ սուաք ճղանարիկի մասն, փոքրերը սպասելով մեծերի մատուցում):

ՀԱՅՐԱՊԵՏ: (Բարխուդարի եւ իւր բաժակներն օղի ւածելով) Է՛հ, Բարխուդար, խմի՛ր, Աստուած գնացողների հոգին լուսաւորէ, մնացողներին ազատէ նոր-նոր փորձանքներից:

ԳԻԻԼՆԱԶ: Ամէն, Տէր Աստուած:

ՄԱՐԻԱՄ: Ամէն:

ՀԱՅՐԱՊԵՏ: (Բաժակը զարկելով Բարխուդարի բաժակին) Գցի՛ր, ունայնութիւն ունայնութեանց, ասում է Տէր-Իսրա-

յէլը. այսօր բաղումն ենք, էգուց հոգում: (Բաժակը դասարկում է մի կումով, գլուխը դեպի մեջքը քեփելով. անմիջապես քրտնեղեմ է ուտում) Օրինաւոր թունդ արող է:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Նսիս քան ուտելը, երեսը երեք անգամ խաչակնիկ է) Հոգումն ենք, թէ բաղում, տայ Աստուած, որ չմոռանանք վախն Աստուծոց և ամօթը մարդկանցից: (Օղի է խմում):

ՀԱՅՐԱՊԵՏ: (Նորից լցնելով իւր բաժակը) Իհարկէ:

ԲԱՐԽՈՒԴԱՐ (Խմում է շտապով, ինքն իւր մտքով յափրջակելով): Բայց մարդիկ ո՛չ վախ ունին, ոչ ամօթ: Ո՛րտեղ է մեր հայրերի և պապերի ճշմարտութիւնը: Աբուռ չի մնացել, հայա չի մնացել, նամուս ասած բանը այսօր ճրագով են փնտրում, չկայ: (Իւր բաժակը բռնում է, որպէսզի Հայրապետը չեղնէ) Չգուցիւ եմ մարդկանցից, Հայրապետ, զըզուել: Շունը չնութիւնով այն չի անում, ինչոր նրանք (խմում է):

ՀԱՅՐԱՊԵՏ: Դրուստ խօսողի ձին թամբած պիտի լինի, որ ճշմարտութիւն ասի ու նստի վրէն, փախչի: Է՛հ, ինչ գործ ունինք ուրիշների հետ, ամէն մարդ ինքն է պատասխանատու իւր մեղքերի համար:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Իւր դասարկ բաժակը ստով Հայրապետին) Կանանց համար էլ ածիր. թող մի քիչ նրանց սրտերն էլ բացուին: (Դարարելով ուտել, մտածում է):

ՀԱՅՐԱՊԵՏ: (Բարխուդարի բաժակը լցնելով, սալիս է Մարիամին, իւր բաժակը սալիս է Գիւլնազին) Խմեցէք մեր ընտանիքների բարեկամութեան կենացը: Ինչպէս մինչեւ այսօր ենք սիրով հարեւանութիւն արել, տայ Աստուած, որ այսուհետեւ էլ անենք: Ի՜նչ կ'ասես, Բարխուդար:

ԳԻՒԼՆԱԶ: (Երեսը ծածկելով, բաժակը բարձրացնում է Բարխուդարի կողմը եւ խմում) Ամէն:

ՄԱՐԻԱՄ: (Երեսը շարով ծածկելով, բաժակը բարձրացնում է Հայրապետի կողմ եւ խմում) Ամէն, Տէր Աստուած:

ՀԱՅՐԱՊԵՏ: Յոյս երկնաւորին, որ ինչպէս մեր հայրերն ու մեր մայրերն են մինչեւ գերեզման հաշտ ապրել,

մենք էլ ապրենք. Ի՜նչ կ'ասես, Բարխուդար: Ա՛յ մարդ, ինչի՞ մասին ես մտածում:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Մի վնասակամ շարժում անելով) Երեխաներ, կերաք, կշտացա՞ք:

ՍՈՒՍԱՆ: (Երեսը անձեռոցիկով արելով) Ես կշտացայ: ՍԷՅՐԱՆ: Ես էլ:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Դէ՛, քնելու ժամանակ է:

ՍԷՅՐԱՆ: (Վեր է կենում, պտկում իւր անկողնի մեջ):

ՍՈՒՍԱՆ: (Վեր է կենում, գնում պտկում իւր անկողնի մեջ):

ՄԱՐԻԱՄ (Վեր է կենում, Սեյրանին ծածկում վերնակով):

ԳԻՒԼՆԱԶ (Վեր է կենում, Սուսանին ծածկում վերնակով):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Հայրապետ, եկ մի բան անենք, որ Աստուած էլ հաւանի, մարդիկ էլ:

ՀԱՅՐԱՊԵՏ: (Դարարելով ուտել) Ասա, Բարխուդար, ասա, դու գիտես, որ քո ամէն մի խօսքը ինձ համար օրէնք է:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Ա՛, կնանիք, մօտ եկէք, լաւ բան եմ ասելու:

ՄԱՐԻԱՄ: { Գալիս ևսում եմ եւ ուշադրութիւնը շարում
ԳԻՒԼՆԱԶ: { Բարխուդարին շնորհ:

ՍՄԲԱՏ: (Ուզում է գնալ պտկելու):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Սմբատին) Դու մնացիր, հարկաւոր ես:

ՍՄԲԱՏ: (Նսում է եւ ուշադրութիւնը շարում):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Լսիր, Հայրապետ: Այդ պարբաթը, որ բաժանում էր մեր տները, քանդուց:

ՀԱՅՐԱՊԵՏ: (Հառաչելով) Քանդուց:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Քեզ եմ հարցնում. ո՞վ քանդեց:

ՀԱՅՐԱՊԵՏ: Դէ, իհարկէ, երկրաշարժը:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: (Ոգտորում) Չէ՛, Հայրապետ: (ձեռքը հանդիսաւոր բարձրացնում է երկինք): Նա քանդեց, Նա ինքն իւր ձեռքով: Ինչո՞ւ համար քանդեց, քեզ եմ հարցնում:

ՄԱՐԻԱՄ: (Խորը հառաչելով): Նրա համար, որ մեզ ծախսի մէջ գցի:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Մեղք ես գործում, Մարիամ բաջի, այդպէս չէ: Աստուած այդ պարիսպը քանդեց, որ մեր տները միացնէ: Քանդեց, որ մեր բարեկամութիւնն աւելի հաստատէ:

ՀԱՅՐԱՊԵՏ: (Ողևորուելով) Ափարիմ, Բարխուդար, ափարիմ: (Յոյսի ե խնում):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Համբարիւր, թող խօսքս վերջացնեմ. Ականջ դրէք, ա կնանիք, ինչոր պիտի ասեմ, կէսը ձեզ համար է:

ՀԱՅՐԱՊԵՏ: Մօտ հասեցէք, մի՛ ամաչէք, Յետ քաշեցէք շայներդ, որ աղանջներդ բացուին, լաւ լսէք:

ՄԱՐԻԱՄ (Երեսը բաց անելով, Գիւղնագին շնչում է): Սիրտս թրթռում է:

ԳԻՒԼՆԱՉ: Իմն էլ:

ԲԱՐԽՈՒԴԱՐ (Միջոց հանդիսաւոր): Հայրապետ, Մարիամ բաջի, դուք մարդ ու կնիկ մի հատիկ աչքի լոյս տղայ ունէք:

ՄԱՐԻԱՄ (Խորը հառաչում է, աջերը աղերսանելով դիպի վեր բարձրացնելով):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Մենք էլ մարդ ու կնիկ մի տղայ ունինք ու մի աղջիկ:

ԳԻՒԼՆԱՉ (Խորը հառաչում է, աջերը աղերսանելով դիպի վեր բարձրացնելով):

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Եկէք, ձեր տղային բաշխեցէք մեզ, մե՛ք էլ մեր աղջկան բաշխենք ձեզ: Ինչ կ'ասէք, հը՞:

ԱՄԷՆՔԸ (սարսկուսանելով նայում են իրարու):

ԲԱՐԽՈՒԴԱՐ (ժպտում է):

ՀԱՅՐԱՊԵՏ: (Ճակատը արեւելով) Բարխուդար, չեմ իմանում, ասածդ պարզ չէ, թէ խելքս է մթնել. ես բան չհասկըցայ:

ԲԱՐԽՈՒԴԱՐ: Որ չհասկացար, պարզ կ'ասեմ: Մինչեւ օրս ձեր Սէյրանն ու մեր Սուսանը մեծացել են միասին, ինչպէս մի տան երեխաներ: Աստծու կամքն էր, որ նրանք այսօր միասին միան փլատակների տակ, միասին էլ աղատ-

ուեն: Դէ, որ այդպէս է, ուրեմն, Աստուած կամեցել է, որ նրանք իրանց ողջ կեանքն էլ միասին ապրեն, ծերանան ու մի տան մէջ մեռնեն: Հիմի հասկացա՞ր:

ՄԱՐԻԱՄ. (Գիւղնագին ուրախ ուրախ քօքելով): Աղջի, լսեցի՞ր:

ԳԻՒԼՆԱՉ. Լսում եմ, լսում:

ՀԱՅՐԱՊԵՏ. (Յարկչակելով): Քո բերանով ինքը Սուրբ Հոգին է խօսում, մարդ, այդ ի՞նչ լաւ բան ասացիր:

ԲԱՐԽՈՒԴԱՐ. Եկէք այս գիշեր այդ բաց երկնքի տակ, այդ պալլան աստղերի վկայութեամբ, վերելից մեզ մօտիկ անող Աստծու ու հրեշտակների օրհնութեամբ Սուսանին և Սէյրանին նշանենք. ի՞նչ կ'ասէք, հը՞:

ՀԱՅՐԱՊԵՏ. (Աւելի ողևորուած, Մարիամին): Լսում ես ա՛՛ կնիկ, դէ, խօսի՛ր էլի, ինչ ես պապանձուել:

ՄԱՐԻԱՄ. Աստուած չորհաւոր անէ:

ԳԻՒԼՆԱՉ. Աստուած չորհաւոր անէ:

ՍՄԲԱՏ. Ամէն:

ՀԱՅՐԱՊԵՏ. Այ մարդ, այդ ո՞ր սուրբը միաքո այդպէս լուսաւորեց: (Մարիամին) Դէ, ա կնիկ, ծափ տուր, պար գանք, հարսնացու ունիս տղադ նշանուեց: (Գիւղն ուրախութեամբ մի կողմ շարժելով) Աղա. Ամբատ, ասա հափ հափ հուռա:

ԲԱՐԽՈՒԴԱՐ. Հանգարտ, ձայնդ գլխիդ մի գցիր, մարգիկ սգի մէջ եմ: Ես իմ աղջիկը տալիս եմ քո որդուն, որ մեր բարեկամութիւնը հաստատուի օրդոց օրդի, յաւիտեանս աւիտեանից: Թող ինչպէս մեր և ձեր մէջ այդքան տարուայ բնթացքում ջուրը ջրութիւնով չի անցել, չանցնի մեր զաւակների, թոռների ու ծոռների մէջ էլ:

ՄԱՐԻԱՄ.

ԳԻՒԼՆԱՉ. } (Միասնայն) Ամէն. Տէր Աստուած, ամէն:

ԲԱՐԽՈՒԴԱՐ. Ինչպէս Աստուած քանդեց այդ պարիսպը. թող այնպէս էլ քանդուի ու ոչնչանայ այս երկու տների մէջ ամէն մի հակառակութիւն, անկողութիւն, նախանձ:



ՄԱՐԻԱՄ. }
ԳԻԻԼՆԱԶ. } (միսմայն) Ամէն, ամէն:

ՀԱՅՐ. Մարդ ես, Բարխուդար, մարդու լեզուով ես խօսում: (Օղի ե խնում):

ԲԱՐԽ. (Աւելի ոգեւորուելով): Տեսնո՞ւմ էք այն երկու թթի ծառերը. մէկը մերն է, միւսը ձերը, մէկը մեր բազումն է, միւսը ձեր բազումը: Տեսէ՞ք ի՞նչպէս են բարձրացել, իրարու խառնուել: Այդտեղ էլ խառն է Աստծու մատը: Հէնց այդ ծառերի տակ խաղալով են մեծացել մեր զաւակները: Թող նրանց աստղերը միանան այդ ծառերի պէս:

ՀԱՅՐ. Միանան:

ՄԱՐԻԱՄ. }
ԳԻԻԼՆԱԶ. } (միսմայն) Ամէն, ամէն:

ԲԱՐԽ. Աշխարհը մեծ է, մարդիկ շատ, բայց նամուսով մարդ շատ քիչ կայ: Հայրապետ, ես մինչև հիմա քեզ նամուսով մարդ եմ ճանաչել, հէնց այս պատճառով էլ ուզում եմ, որ իմ աղջիկը քո առնը մտնի, այնտեղ ապրի ու այնտեղ մեռնի:

ՄԱՐ. Աշխարհ լոյսի պէս կը պահեմ նրան, եթէ Աստուած մեզ մի կտոր հաց կը տայ:

ԲԱՐԽ. Այդ մասին չատ էլ մի մտածիր, Մարիամ բաջի: Աստուած ինչպէս մեզ չի թողել քաղցած, մեր զաւակներին էլ չի թողնիլ:

ՄԱՐ. Երանի՛ այդպէս լինի:

ԲԱՐԽ. Այդպէս էլ կը լինի, այդպէս էլ կը լինի, քիչ մտածիր: Երկիրը չարժուեց, մարդիկ փչացան հարիւրներով, քո մարդերու կուժ ու կուլան միայն կորաւ. ի՞նչ արած, Աստծու կամքն էր. էգուց մարդուդ դուքանը էլի կը սարքենք:

ՄԱՐ. (Հատասելով) Ինչո՞վ:

ԲԱՐԽ. Իմ փողով, Մարիամ բաջի, իմ փողով, ես ունիմ, շատ չէ, բայց ձեզ բաւական է:

ՄԱՐ. Աստուած հաղարարատիկը տայ... Աստուած...

ԲԱՐԽ. (Խիստ ընդհատելով) Չէ՛, չէ, առանց շնորհակա-

լութեան: Բարեկամների մէջ նազու բազն աւելորդ է: Ապրելն ի՞նչ բան է, անասուններն ու թռչուններն էլ են ապրում: Բայց մարդ կայ որ նամուսի համար կախաղան կը բարձրանայ, մարդ էլ կայ, որ շան չափ ամօթ չունի: Նամուս, նամուս, նամուս: Ով ունի այդ գոհարը, — մարդ է, ով չունի — անասուն է: (Տեսնելով, որ Հայրապետը յուզեմունքից արտառնեց) Ի՞նչ պատահեց քեզ, մարդ Աստծու:

ՀԱՅՐ. (աչկեղ աքելով, ժպտում է) Ոչինչ, խօսքերդ սրտիս դիպան (ուզում է օղի ածել):

ՄԱՐ. (Շիջը խելով Հայրապետից) Խօսքերը չէ, այ թէ ի՞նչը դպաւ սրտիդ: Հերիք է:

ՀԱՅՐ. (աղետաւրով) Ա՛՛ կնիկ, թող տեսնենք, ա՛՛ կնիկ: ԳԻԻԼՆ. Աղջի ինչի՞նչ եմ նստել. գնամ մուրաբա բերեմ, բերաններս քաղցրացնենք (վեր է կենում):

ՄԱՐ. (վեր վեճալով) Թո՛ղ ես բերեմ:

ԳԻԻԼՆ. Իմը նարինջի է:

ՄԱՐ. Իմը սերկեւիլի է:

ԳԻԻԼՆ. Ես վարդի մուրաբա էլ ունիմ:

ՄԱՐ. Ես ընկոյզի էլ ունիմ:

ՀԱՅՐ. Լաւ, մի կտորուէք. գնացէք, երկուսդ էլ բերէք:

ԳԻԻԼՆ. (զնոււմ է աչ կողմի դռներով):

ՄԱՐ. (զնոււմ է ձախ կողմի դռներով):

ՏԵՍԻՆ 6.

Նոյն, առանց Գիւլնագի եւ Մարիամի

ՀԱՅՐ. (կնոջ ետեւից նայելով, իւր համար օղի է ածում) Ախ, Բարխուդար, Բարխուդար, ի՞նչ ասեմ:

ԲԱՐԽ. (շուրջ, մտադրաւ) Սմբատ, գնա Աւետարանդ ու գրիչդ բեր այստեղ:

ՄԱՐ. (շտապով զնոււմ է աչ կողմի դռներով եւ իսկոյն յէս գալիս, ձեռքին հնամասէ կապնով մի Աւետարան, մի փետրեայ գրիչ եւ կաղաւար):

ՀԱՅՐ. (նայելով դիպի Սուսանի ու Սեդրակի անկողին-

ները) Օ', ինչ անուշ են քնած: Քնեցէք, քնեցէք անմեղ քնով, թող երկնային հրեշտակները ձեզ պահապան լինին (օղի ե խմուս):

ՏԵՍԻՒԼ 7.

Նոյնի, Մարիամ եւ Գիւլնազ

ԲԱՐԽ. Բերէք, տեսներք ի՞նչ էք բերել:

ՄԱՐ. (ձախ կողմի դռներից գալով, ակոռցի վրայ ե դնում երկու ճեւակ մուրաբա):

ԳԻՒԼՆ. (աջ կողմի դռներից գալով, ակոռցի վրայ ե դնում երեք ճեւակ մուրաբա):

ՀԱՅՐ. Բաց արէք երեսներդ, օրէս գէշը մենք քոյր ու եղբայրներ ենք:

ԲԱՐԽ. (չափ լուրջ ընդդիմանալով) Չէ, Հայրապետ, քոյրն էլ պիտի ամաչի եղբորից: Ինչպէս իրանց մայրերն են երեսները աղամարդկանցից միշտ ծածկել, թող իրանք էլ ծածկեն: (Մի դգալ մուրաբա ուտելով, Սմբատին) Նստիր ու այդ սուրբ Աւետարանի կողքին դիրք ինչ որ ասեմ:

ՄԱՐ. (երկու դգալ մուրաբա ե ուտում, Աւետարանը բաց ե անում, դնում ե ձկների վրայ եւ պատրաստում ե գրեց նրա կազմի ներսի կողմում):

ԲԱՐԽ. (հանդիսաւոր): Դիրք: Հազար ութ հարիւր յիսուն ու իննը ամի Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

ՄԱՐ. Տեառն երոյ Յիսուսի Քրիստոսի:

ՀԱՅՐ. (երեսին խաչակնքում ե, մուրաբա ուտում, ծուռ ծուռ նայելով օդու շիշին, ասա Մարիամին):

ԲԱՐԽ. Մայիս ամսի տասին, հրամանաւն Աստծոյ, եղեալ է երկրաշարժ մեծ: Զիւլում:

ՄԱՐ. Զիւլում:

ԲԱՐԽ. Բազում տներ, քարանձաւներ, երեք մէջիդ, չորս բաղնիս քանդեալ է:

ՄԱՐ. Քանդեալ է:

ԲԱՐԽ. Բազում մարդիկ կոտորեալ է վասն մեղաց մեւրոյ անօրինաց:

ՄԱՐ. Անօրինաց:

ԲԱՐԽ. Զիւնքի անիրաւ լիւտերականութիւն եկեալ մտեալ է անտէր քաղաքս, բրիչակ արարեալ է:

ՄԱՐ. Բրիչակ արարեալ է:

ԲԱՐԽ. Իժ օձի դաւակ Զօրամբի:

ՄԱՐ. Զօրամբի: Հայրիկ, այդ ո՞վ է:

ԲԱՐԽ. Այն անիծուած լեմա քարոզիչը, որ լիւտերականութիւնը բերաւ, մտցրեց այստեղ: Գրեցի՞ր:

ՄԱՐ. Գրեցի: Իժ օձի դաւակ Զօրամբի:

ԲԱՐԽ. Տակը խազ քաշիր:

ՄԱՐ. Քաշեցի:

ԲԱՐԽ. Հիմի դիրք: Մեր Սուսանն ու Հայրապետանց Սէյրանը մնացեալ են Շափալեանց կառուրի տակ: Հրամանաւն Աստծոյ ողջ, առողջ հանեալ են: Մեր ամենեցուն մեծ ուրախութիւն: Գրեցի՞ր:

ՄԱՐ. Գրեցի:

ԲԱՐԽ. Տակը խազ քաշիր: Հիմի մի մատ ներքեւ դիրք: Այս գիշեր ի մէջ սեղանի ուխտեալ ենք Սուսանին նշանել Սէյրանի հետ: Խրախճան:

ՄԱՐ. Խրախճան:

ԲԱՐԽ. Եւ հրամանաւն Աստծոյ, ի՞նչը տարի անցած պսակելու ենք:

ՄԱՐ. Պսակելու ենք:

ԲԱՐԽ. Տացէ Աստուած, որ արժանանան սուրբ սեղանին:

ՄԱՐ. Սուրբ սեղանին:

ԲԱՐԽ. Ամէն:

ՀԱՅՐ. Ամէն:

ԳԻՒԼՆ. Ամէն:

ՄԱՐ. Ամէն, Տէր Աստուած:

ԲԱՐԽ. Վերջացրի՞ր:

ՄԱՐ. Վերջացրի:

ԲԱՐԽ. (Մարիամին եւ Գիւլնազին) Հիմի լաւ ահանջ դրէք: Քանի՞ տարեկան է Սէյրանդ, Մարիամ բաջի:

ՄԱՐ. Առաջի վարդաւառին տառներկուսը կը լրանայ:

ԲԱՐԽ. (Գիւլնազին) Քանի՞ տարեկան է մեր Սուսանը:

ԳԻԻԼՆ. Աւետարանի կողքին գրած է նրա ծնունդը: Եղբայրս է գրել:

ՄԱՐ. (Նայելով Աւեսարանի կազմի ներսին) Սեպտեմբերի հնգին ինչը տարեկան կը լինի:

ԲԱՐԽ. (Հանդիսաւոր) Այս գիշեր մենք նրանց նշանեցինք: Մեր պապերի օրէնքով էգուցուանից էլ նրանք չպիտի տեսնեն իրարու: Գիւլնաղ, Սուսանը չպիտի տնից դուրս գայ: Մարիամ բաջի, դու էլ հասկացրու որդուդ, որ էլ Սուսանի երեսը չպիտի տեսնի: Ինչը տարին կ'անցնի, մենք մեր ուլտը կը կատարենք. լսեցի՞ք: (Զիբուխը լցնում է):

ԳԻԻԼՆ. Լսեցինք:

ՄԱՐ. Ինչպէս հրամայեցիր, այնպէս էլ կ'անենք:

ՀԱՐ. Դու խօսում ես Աստուծոյ և ժողովանց օրէնքներով:

ԲԱՐԽ. (Դուռն քերելով արխարաղի գրպանից մագնիս, կայծակաբար եւ արեւ իր քե չիրուխը փակելու) Հայրապետ, ինչպէս ես ու դու մեր կնկայ երեսը մինչև հարսանիքի երրորդ օրը չենք տեսել, քո որդին էլ չպիտի տեսնէ իւր հարսնացուին: (Արեւը դնելով կայծակաբարի վրայ, մագնիսով զարկում է) Տղայ և աղջիկ այսպէս են, այ: Եթէ նրանք միմիանց տեսնեն, կրակ կ'առաջանայ և մէջտեղ իմ ու քո նամուսը կ'այրուի այս դաւի պէս: Վայ այն օրին, երբ նրանք մինչև իրենց հարսանիքը կը տեսնեն միմեանց: Ես իմ ձեռքով կը խեղդեմ իմ աղջկան էլ, քո որդուն էլ: (Սկսած ծուր ինձ այդ Աւետարանը: (Զիբուխը դնում է մի կողմ, Աւեսարանը վերցնում է, գրպան մի կողմ դնելով, երեք անգամ երեսին խաչակնքում է եւ Աւեսարանը համբուրում ու ճախրահանում) Ամէնքդ համբուրեցէք այս սուրբ Աւետարանը և սացէք «ուխտ եմ անում»: (Աւեսարանը տալիս է Հայրապետին, չիրուխը վերցնում):

ՀԱՅՐ. (Աւեսարանը համբուրելով տալիս է Գիւլնաղին) Ուխտ եմ անում:

ԳԻԻԼՆ. (Աւեսարանը համբուրելով տալիս է Մարիամին) Ուխտ եմ անում:

ՄԱՐ. (Աւեսարանը համբուրելով տալիս է Սկսածին) Ուխտ եմ անում:

ՄԱՐ. (երեք անգամ համբուրում է Աւեսարանը):

ԲԱՐԽ. Հիմա կարող ենք ասել. Աստուած շնորհաւոր անէ:

ԱՄԷՆՔԸ. Աստուած շնորհաւոր անէ:

ԲԱՐԽ. (Վեր կենալով): Դէ', սեղանը հաւաքեցէք, գնացէք քնելու:

ԱՄԷՆՔԸ. (Վեր եւ կենում):

ՄԱՐ. (կանգնում է Սեյրանի անկողնի գլխին, աղօթում, աչքերն ուղղելով դէպի երկինք) Տէր, դու իմ միշտիկ զաւակին գցեցիր փորձանքի մէջ: Դու նրան ազատեցիր: Տէր, ամէն բան քո ձեռքին է: Դու այսուհետեւ պահիր, պահպանիր նրան:

ԳԻԻԼ. (կանգնելով Սուսանի անկողնի գլխին, նայում է քայքայի հայեացքով ֆնած աղջկան) Քնիր, սիրուն աղջիկս, քնիր. թող հրեշտակները պահպանեն քեզ: (Մեկնում է) Ա՛հ, սիրտս վատ բան է գուշակում:

ԲԱՐԽ. (ձեռքով նշան է անում Գիւլնաղին չքայ փառադոյրը բանալու եւ չիրուխը ձեռքին զնում է իւր սակ աղջեւի Սաֆուի վրայ նստում):

ՀԱՅՐ. (նստում է իւր սակ աղջեւի Սաֆուի վրայ):

ԳԻԻԼՆ. (չքայ փառադոյրը բաց է անում եւ ընկնում է իւր սակ աղջեւի վրայ):

ՄԱՐ. Բարի գիշեր:

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Ե. Բ.

ԱՐԱՐՈՒԿԱԾ ԱՌԱՋԻՆ

Ինքն առի անցած

ԲԱՐԵՈՒԴՐԻ ՏՈՒՆԸ ՆԵՐՍԻՑ

Բաւական ընդարձակ մի սենեակ՝ առիական անաղարտ կանգնած և արարածով։ Սորքում։ զէպի ձախ միթեւանի աններկ դուռը, որ տանում է զէպի գաւիթ, զէպի աջ երկու լուսամուտ առանց ապակիների աններկ փեղկերով, որոնք բաց են։ Միթեւանի մի դուռ ևս ձախ պատի մէջ։ Այդ դուռը տանում է ընակարանի երկրորդ սենեակը և խոհանոց։ Յատակը ծածկուած է զեղնագոյն խտրներով, որոնց վրայ երկու հասարակ կապերտներ։ Պատերը պատառ չունին, ներկուած են պարզ կապտագոյն կաւով։ Աջ պատի ամբողջ երկայնութեամբ առաստաղից մօտ մի արչին ցածր նեղ խորշ (ոսփ), ուր շարէշար դրած են զանազան հին չինական անօթներ — իրիւղարդ։ Երկու, մօտաւորապէս երեք արչին բարձրութեամբ և լայնութեամբ քառակուսի խորը խորշեր (ջամխուզան) նոյն պատի մէջ։ Ձախ պատի մէջ ևս երկու նոյնանման խորշեր, միայն աւելի փոքր։ Առաջին խորշերի մէջ դարձուած են անկողիններ (վերմակներ, ներքնարկներ, բարձեր)։ Փոքր խորշերի (թախչա) մէջ դառնուած են անային անօթները և պաշարեղէնը։ Աթոռներ և սեղաններ չըկան։ Պատերի տակ ձգուած են ներքնարկներ (մինդարներ)։ Սորքում լուսամուտների առջև քով քովի դրած են երկու մեծ իլրկթի ընդուններ, ծածկուած փոքրիկ գորգերով։ Աջ պատի առջև թախա, նոյն պէս գորգով ծածկուած։

ՏԵՍԻՒԼ. I.

Սուտան և Սուսամբար

Նսւած են դիւ ու դիւ սեղանների վրայ։ Սուսամբ քոռ և գործում, Սուսամբարը գուշայ։ Բաւական երկարատեղ քոռիւն։ Լուսամուտներից երեւում են խաւարեւ քրեւում ճիւղերը, որոնց վրայ բազմաթիւ ճնճողներ ծրւում են։ Դռնից մերթ ընդ մերթ լսում են ջրախմբանների երգեցիկ ձայները։

ՍՈՒՍԱՆ. (Դարձեղ և բարձրահասակ, փայլեցակազմ, գեղեցիկ, սասնուր սարեկան աղջիկ։ Հագած և լայն փոխան, դեղնագոյն մեհախմբայ շապիկ, որի վրան քեհեղեղայ ցեալիւն, զրդիւն քեհեղեղայ ձուրթիւ, ձախաւի վրայ երկուր ուկերը ժապուռեւում։ Ընդքիւի վրան ապիսակ քոռ. խիս ու երկար մագեր, որ սլծւ հիւնայած են, մի խոշոր հիւսումածով ընկեղ են քիկուեմների վրայ ևս հասնում են միկեղ մեջք։ Լուռ գործում և, մերթ ընդ մերթ հաւաքելով ևս քախմայի հայեացքներ ձգելով դիպի քրեկին)։

ՍՈՒՍԱՄԲԱՐ. (Սուսանին հասակակից աղջիկ և, ոչ գեղեցիկ, բաց հասակրեղի, գուարք դիւկով, փառիւում ալքերով. հագած և ապիսակ կսաւեղ շապիկ, վրան կսաւազոյն արխաւուղ, կուրծքը բաց, քեւերը տեւաւան, գուսաւուր լայն փոխան։ Դրդիւն կապած և մեհախմբայ ձուրթիւ՝ սուսան որեւէ զարդի։ Դարձում և գործել։ Հաւաքում և)։ Աղջի, Սուսան։

ՍՈՒՍԱՆ. (Մագարայ ալխաւում և մեհախմբայ)։

ՍՈՒՍ. (Մի փիչ սնցած) Սուսան։

ՍՈՒՍԱՆ. (Լուռ և)։

ՍՈՒՍ. (Անհասկեր) Աղջի, Սուսան։

ՍՈՒՍԱՆ. (Սրախուելով իւր մեհախմբայ) Հը։

ՍՈՒՍ. Չու։

ՍՈՒՍԱՆ. Չու էլ, զիւկում էլ։

ՍՈՒՍ. (Մի կողմ դնելով ձեւագործը) Մին դէն դիր այդ սատանի տօտիկը. մի քիչ հանգստանա՛ք։ Մատներս փեւաղան շատ գործեւում։

ՍՈՒՍԱՆ. (Հաւաքում և, դարձելով գործել) Ո՛ւֆ, (ձեւները անգոր դնում և ձեւների վրայ)։

ՍՈՒՍ. Էլ ի՞նչ ուֆ. հոգիներս դուրս եկաւ։ Մի քիչ խօսե՛նք, սիրտներս բացուին։

ՍՈՒՍԱՆ. Է՛հ, խօսքս էլ է պրծել, դրոյցս էլ։

ՍՈՒՍ. Է՛հ, լաւ, պատաւ կնկայ պէս մի քաջախիւր։ Տես, ծտերն ի՞նչպէս են ծլւում։ Արի՛ կաւ ածենք, տեսնենք կը գա՞ն ուտելու։ Ունե՛ք (վեր և կենում)։

ՍՈՒՍԱՆ. Թախումը հացի փչրանքներ կը լինին։

ՍՈՒՍ. (Մօսկնում ե փոքր խորշերից մեկին, վարագորշը բանարով, վերցնում ե հացի փշրանք եւ յուսանից դուռն ածում ֆիշ-ֆիշ) Ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ. եկան, հաւաքուեցին Սիօնի աղքատները պէս: Օհօ՛, ի՞նչ շատ են: Էլի եկան, գրանք ինձ էլ կ'ուտեն: Կերէք, կերէք: Մի կուռէք: Ամօթ է: Տես այն պոչը կտրածը ի՞նչ չարն է:

ՍՈՒՍԱՆ. (Նայելով յուսանից) Երա՛նի ձեզ, որ աղատ, համարձակ, ո՛ր տեղ ուզում էք, այնտեղ էք թռչում: Այդ ծառերն էլ, այդ սարերն էլ, դաշտերն էլ, արար աշխարհը ձեզ համար է:

ՍՈՒՍ. Էյ, չար Յուլիանոս, թող ընկերդ էլ ուտի: Ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ... Դէ. հերիք է է: (Դադարում ե փշրանքները ածել): Ջիստ, չիստ, դնացէք, կորէք:

ՍՈՒՍԱՆ. (Մտադրաւ) Թո՛ւն գացին ուրախ-ուրախ: Օ, հազար երանի ձեզ: Գցել են մեզ տուն, դռներն երեսներէս ծածկել, մարդու կերպարանք չենք տեսնում:

ՍՈՒՍ. Դու ծախ՞ն ես նախանձում:

ՍՈՒՍԱՆ. (Հտուսելով) Ահ, ի՞նչպէս չնախանձեմ:

ՍՈՒՍ. (Բարձրաձայն ծիծաղով) Հա, հա, հա, ծախն է նախանձում: Հա, հա, հա:

ՍՈՒՍԱՆ. Ինչո՞ւ ես ծիծաղում:

ՍՈՒՍ. Ծիտը թռչկոտում է ծառի վրայ, դու թառ ես լինում ծառի տակ, ծառի տակ: (Ծառի ե ցայիս ու սրահում):

ՍՈՒՍԱՆ. Ի՞նչ ես ուզում ասել:

ՍՈՒՍ. (Շարունակելով) Կարծիր թթի ծառի տակ, ծառի տակ: Համ երգում է, համ պաչում, համ պաչում է համ երգում, ծառի տակ:

ՍՈՒՍԱՆ. Մախարա:

ՍՈՒՍ. (Դադարում ե սրտել): Դէ, լաւ, ես ամէն բան գիտեմ ամէն բան:

ՍՈՒՍԱՆ. (Շտուսգունելով): Ի՞նչ գիտես:

ՍՈՒՍ. Այն գիտեմ որ դու նրա հետ գիշերները թագուն տեսնում ես ծառի տակ:

ՍՈՒՍԱՆ. (Վախեցած, ձեռքը դնում Սուսանբարի քերանին) Սուս, լեզուդ փորդ գցիր:

ՍՈՒՍ. Ես մեղայ Աստծու: Լաւ, մի՛ վախենար, ոչ ոքի չեմ ասիլ: (Գրկում ե Սուսանին եւ մխամիւս ւրտում եմ ֆայդելիս ու առաջ) Երանի քեզ, շատ լաւն է: Երէկ մեր տան առաջով անցնում էր: Դռների արանքով մտիկ արի: Ախ, ի՞նչպէս մեծացել է, սիրունացել. բոյը չի՛նար, մէջքը հազիկ, աչերը նախշուն—նախշուն, բեխերը բարակ—բարակ:

ՍՈՒՍԱՆ. (Երջանիկ): Հաւանում ես:

ՍՈՒՍ. Ո՞վ չի հաւանիլ: Նմանը չկայ մեր քաղաքում: Փողոցներով անցնելիս կանայք դռների ետեւից նրան են մտիկ անում. բայց ափսո՛ս:

ՍՈՒՍԱՆ. Ինչո՞ւ ափսոս:

ՍՈՒՍ. Ասում են վատ ջահելների հետ է խառնուել ու մի քիչ փչացել:

ՍՈՒՍԱՆ. (Սրտախաբար): Սուս ես ասում, սուս ես ասում: (Թողնում ե Սուսանբարի ձեռքը):

ՍՈՒՍ. Դէ լաւ, մի՛ փրփրիր. հոգս բամբասողների գրկիս: Դու ինձ այն ասա, հարսանիքդ երբ է:

ՍՈՒՍԱՆ. (Տխրում ե): Չեմ իմանում:

ՍՈՒՍ. Իսկ ես գիտեմ իմ հարսանիքը երբ է: Վարդա-վառից յետոյ:

ՍՈՒՍԱՆ. Ուրեմն, աչքդ լոյս:

ՍՈՒՍԱՆ. Էհ, շատ հարկաւոր է, ուզում է թող չլինի:

ՍՈՒՍԱՆ. Նշանածիդ չե՞ս սիրում:

ՍՈՒՍ. Սէրս ո՞րն է, ինչ ես խօսում: Երեսը տեսե՞լ եմ, որ սիրեմ կամ չսիրեմ: Ասում են մի չօփուռ աղայ է, քիթն էլ ծուռ:

ՍՈՒՍԱՆ. (ձեռքը ծնկան վրայ դնելով) Վայ, քոռանամ. քիթը ծո՞ւռ, խեղճ Սուսամբար, ինչո՞ւ են քեզ նրան տալիս:

ՍՈՒՍ. Էհ, ում ուզում են թող տան, ինձ համար միւսնոյն է, ճակատիս ինչ որ գրուած է, այն է կատարուելու: Դէհ, օրը մթնեց, գնամ—կորչեմ, թէ չէ հայրս կը դայ, ինձ տանը չի տեսնիլ, մօրս հետ կը կուռի (վերցնում ե իւր ձեռագործը սրն-

դռնի վրայից, շարք գցում ե գլխին): Էդուց կը դա՞մ մեր տուն:
ՍՈՒՍԱՆ. Չէ, Սուսամբար. ծնողներս չեն թողնում ազ-
 գական-բարեկամներին տուն գնալ:

ՍՈՒՍ. Էհ, գեղեցիկ լինելն էլ մի բան չէ: Իմ ծնող-
 ները չեն վախենում, որ թուրքերն ինձ կը փախցնեն: Մնաս
 բարով: (Հասկանալով ե Սուսանի հետ եր գնում խորհի դռնով):

ՏԵՍԻՆ 2.

Սուսան մենակ, յետոյ Գիւլնազ

ՍՈՒՍ. (Սուսանքարին ուղեկցելով մինչեւ խորհի դռնը,
 կանգնում ե այնտեղ, նայում քրեւո ծառերին, նախադրւմ. ձեռք
 յենում դրան կողմին: Ապա, սրափուկով, գալիս ե սենեակի
 կենդրոնը):

ԳԻՒԼՆ. (Գալիս ե ձեռք կողմի դռնով կոնսսակին մի
 խայտաբղիս մեխակնայ չարչով՝ ծաղած: Մազերը դարձաւ ե ներ-
 կեղ հիմնայով, ուսի բաւական ճեղքակել ե: Ինքը տարուայ մեջ
 նկատելի ծերացել ե) Գնա՞ց Հոռուսիկի աղջկը:

ՍՈՒՍ. Գնաց:

ԳԻՒԼՆ. Ինչո՞ւ թողիր: Ես ուզում էի հորաքրոջդ մօտ
 գնալ, նա հրահրէլ է:

ՍՈՒՍ. (Սրտաքնակալ) Մամա, հերիք է ինչքան ինձ
 տանջեցիք (փայլում ե):

ԳԻՒԼՆ. (հատուկելով) Ես ի՞նչ անեմ, որդի, հօրդ ասա:
 Նա է հրամայել, որ քեզ տանը մենակ չթողնեմ:

ՍՈՒՍ. (խորին վշտով) Հայրս, հայրս. նրա խոստովիւնը
 ինձ գերեզման կ'իջեցնի: Մամա, մամա, ես չեմ կարող դի-
 մանալ այս կեանքին: (Փարսաւում ե մօր սարսուկին ու
 լայիս):

ԳԻՒԼՆ. Լաւ, լաց մի լինիր: Սիրտս մղկատւմ է ար-
 տասուքդ տեսնելիս:

ՍՈՒՍ. Ձեմ կարող, չեմ կարող:

ԳԻՒԼՆ. Եթէ իրաւունքն իմ ձեռքին լինէր, քեզ սուսի
 շորեր կը հագցնէի, գլխիդ շեւապ կը դնէի ու կ'ասէի. «գնա,

բաւաս, գնա ուր ուզում ես, ապրիր ինչպէս կամքդ է»: Բայց
 ես մայր եմ, հայր չեմ: Դու գիտես, որ ես ինքս էլ
 գերի եմ քո հօր ձեռքում: Լաւ, սրբիր աչքերդ: Աստուած
 ողորմեմ է. կարելի է չուտով հարսանիքդ լինի:

ՍՈՒՍ. (աջկողմ արեւելով) Իմ հարսանիքը վաղուց պիտի
 լինէր: Չգիտեմ ինչո՞ւ էք ձգձգում:

ԳԻՒԼՆ. Էլի հայրդ է մեղաւոր: Աստուած գիտէ ինչ
 ունէ իւր մտքում: Երբ հարսանիքիդ մասին խօսք եմ գցում,
 աչքունքը թթուեցնում է:

ՍՈՒՍ. (հետաքրքրուած) Եւ ոչինչ չի՞ ասում:

ԳԻՒԼՆ. Ոչինչ:

ՍՈՒՍ. (զայլում ե իրան քոնագրութի ժպիտով) Լաւ, մամա,
 գնա, ուր ուզում ես, թող ինձ մենակ:

ԳԻՒԼՆ. Լաւ, չափը համբերել ես, քիչն էլ համբերիր:
 Մամաք չլինի, թող աշունքին լինի հարսանիքդ:

ՍՈՒՍ. Գնա, մամա, գնա հօրաքրոջս մօտ, նա խեղճ է,
 մենակ է:

ԳԻՒԼՆ. (չարչով բաց անելով եւ նրա մեջ փախարկելով)
 Էհ, գնում եմ, մնացիր մենակ, ինչ անեմ, թող այս ան-
 դամ հայրդ կատաղի ինձ վրայ: Տունը սրբիր, յետոյ սաժա-
 վարը կը դնես: (Գնում ե դեպի խորհի):

ՍՈՒՍ. Գնա, ես անգործ չեմ մնալ (Գիւլնային ուղեկցե-
 լով մինչեւ խորհի դռնը, ջնաշկները դարձում զննում ե նրա առ-
 ջել եւ յետոյ զայիս ե յետ. դրսից քերելով մի չորս տել):

ՏԵՍԻՆ 3.

Սուսան մենակ, յետոյ Սեյրան

ՍՈՒՍԱՆ. (Սկսում ե յասակն աւելել, հանդարտ երգելով մի
 տեղական երգով):

ՍԷՅՐ. (Բաւական ժամանակ անցած՝ լուսանից ցոյց ե
 տալիս իւր գլուխը: Բաւական տեղական գեղեցիկութեմ, բարձրաստի
 երիտասարդ ե դարձել: Երեսը մաքուր ե, բարակ քեփերով, գլու-
 խին կրտսեմ ե ոչ այնքան բարձր գլուխ Բախարայի մտքույն
 կարած: Ոճերին երեսպակն կոշիկներ): Սուսան, Սուսան:

ՍՈՒՍ. (Հսկող իւր ականը, ցնցում է: Տեսնելով Սեյրան, անկողնից բաց է քոյնում): Սեյրան:

ՍԷՅՐ. Նա ինքն է: (Գլուխն անկի է բարձրացնում):

ՍՈՒՍ. Չուր ես եկել, հեռացիր, ախ, չուտ հեռացիր:

ՍԷՅՐ. Բարձր մի խօսիր, թող ներս մտնեմ:

ՍՈՒՍԱՆ. Ո՛չ, ոչ, գնա, հեռացիր. չի՛ կարելի:

ՍԷՅՐ. Շատ լաւ կարելի է: (Բարձրանալով լուսանոս, ներս է ցատկում): Օհ, հագիւ քեզ տեսայ: (Հեւալով) Մի շաբաթ է որ ու գիշեր հսկում եմ — չեմ երեւում (Մօտենում է Սուսանին):

ՍՈՒՍ. (Հեռանում է դեպի ձախ, երկնայից շնչաւոր): Գնա, ասում եմ, գնա, հայրս կարող է դալ:

ՍԷՅՐ. Հայրդ չէ, նրա պապն էլ գերեզմանից դուրս գայ, չեմ հեռանալ, մինչև որ չասեմ, թէ ի՞նչու համար եմ եկել:

ՍՈՒՍ. (Բողոքով շփոթւում): Ախ, Տէր Աստուած, նա վախ չունէ, ամօթ չունէ: Սեյրան, աղաչում եմ, ինձ թողես, գնա:

ՍԷՅՐ. Ասում եմ, ոտս դուրս չեմ. գնիւ, մինչև որ հետդ չխօսեմ:

ՍՈՒՍ. Դէ մնացիր, ես փախայ: (Վազում է դեպի ձախ կողմի դուռը):

ՍԷՅՐ. (Կտրելով Սուսանի նստապահը): Չեմ թողնիլ տեղիցդ շարժուես: Լսիր, Սուսան, լսիր. մեր ծնողները մեզ նշանել են երկրաշարժի օրը, որ ինքն տարուց յետոյ պսակեն: Ինքն տարին լրացել է, մի ամիս էլ անցել, բայց մեր հարսանիքի մասին խօսք չկայ մէջտեղ: Ի՞նչ է պատճառը:

ՍՈՒՍ. (Միշտ երկնայի աջ ու ձախ նայելով): Ես քեզ ասել եմ. որ ինքս էլ չգիտեմ: Գնա, հեռացիր:

ՍԷՅՐ. Ի՞նչ է ասում հայրդ:

ՍՈՒՍ. Նա ոչինչ չի ասում, ոչինչ:

ՍԷՅՐ. Սուտ մի խօսիր, Սուսան: Էլ ես համբերութիւն չունիմ այս անորոշ դրութեան մէջ մնալու: Կամ այո, կամ ոչ: Կամ ես պիտի պատկուեմ քեզ հետ կամ այս սուրբ սիրտս պիտի խրեմ: (Յետ անկողնի ջուխայի փեշը, ցոյց է տալիս լեզվին կապած դաշոյնը):

ՍՈՒՍ. Ախ, թող, թող սուրբ: Հայրս հէնց այդպիսի բաների համար քեզ չի սիրում:

ՍԷՅՐ. Չի՞ սիրում: Ուրեմն, ճշմարիտ են ասում, որ նա ինձ համարում է փչացած, կորած մարդ: Առա, լսում ես:

ՍՈՒՍ. Ես հօրս հետ չէի կարող խօսել քո մասին: Նա մօրս էլ ոչինչ չի ասում, բայց մի անգամ այն դրան ետեւից լսել եմ նրանց խօսակցութիւնը քո հօր հետ:

ՍԷՅՐ. (Հետաքրքրւած): Ի՞նչ էին խօսում:

ՍՈՒՍ. Հայրս ասում էր, որ դու ուսումդ կիսատ ես թողել ու դուրս եկել ուսումնարանից:

ՍԷՅՐ. Կիսատ թողի, որովհետեւ վարժապետն ինձ ծեծում էր: Յետո՞յ:

ՍՈՒՍ. Ասում էր, ոչ ուսումնարանից յետոյ մտար հօրդ դռքանը, այնտեղ էլ չմնացիր:

ՍԷՅՐ. Որովհետեւ հայրս էլ ծեծում էր ինձ: Է՛լ ինչ էր ասում:

ՍՈՒՍ. Ասում էր, որ քեզ աշակերտ տուեցին իրան, արհեստ չտո՛ւրեցիր, փախար:

ՍԷՅՐ. Առաջինը, ես դերձակ չէի ուղղում լինել. երկրորդ, Սուսան, հօրդ մասին մի խօսիր: Եօթ ամիս աշակերտ եղայ նրա մօտ, ա՛յնքան ծեծեց ինձ, որ վրաս մնաց մի կաշի և մի ոսկոր: Նա մարդ չէ, Սուսան, նա ֆառօաշ է խաների ժամանակից մնացած: Նա ինձ ինչով ասես ծեծում էր. չիրուխով, գաղով, մկրատով, մինչև անգամ արդուկով: Նա ինձ բարձրացնում էր իւր երկար ուսերի վրայ և դետին զարկում ինչպէս մի կատուի, ինչպէս մի շան ձագի: Ես ի՞նչպէս մնայի այդ տեսակ մարդու մօտ:

ՍՈՒՍ. (Մտադրաւ): Ըշմարիտ է, հայրս չատ խիստ մարդ է:

ՍԷՅՐ. Եւե՛ր, Սուսան, վատ բան է մարդու համար, չատ վատ բան: Եւե՛ր ո՛չ միայն մարդու մարմինն է ցաւեցնում, հոգին էլ է տանջում: Թող ինձ խրատեն, նախատեն, հայհոյեն, անիծեն, թող տնից դուրս անեն, առանց հաց ու ջրի թողնեն, բայց չծեծեն: Ես ծեծը՝ անպատուութիւն եմ

համարում: Նամուս ունեցող մարդը չի կարող թոյլ տալ, որ մի ուրիշ մարդ իրան վրայ ձեռք բարձրացնի:

ՍՈՒՍ. (Անդի և ուշադիր, մերսնադոն, մնացրալ): Ճշմարիտ ես ասում, Սէյրան, ճշմարիտ ես ասում. ծեծուելը ես էլ եմ ամօթ համարում: Բայց ի՞նչ արած, ինչ արած, քանի որ մենք պէտք է հնազանդուենք մեր ծնողներին, թէկուզ նրանք մեզ կախ էլ տան:

ՍէՅՐ. Ոչ, Սուսան, չպիտի հնազանդուենք: Խոնարհուենք, սիրենք, յարգենք, բայց չթողենք, որ մեզ հետ վարուեն ինչպէս անասունների հետ: Ես այսպէս եմ հասկանում և այսպէս էլ պիտի անեմ այսուհետև. էլ ոչ ոքի, ոչ ոքի չեմ թոյլ տալ գլխիս մի մազին դիպելու: Չէ՞ որ հիմա ես էլ եմ տղամարդ, ես էլ նամուս ունիմ. վա՛յ նրան, որ կը փորձի իմ պարուսին դիպել. կտոր կտոր կ'անեմ այդպիսուն:

ՍՈՒՍ. (Նայելով Սեյրանին, յափշտակուել և նրանով և մոռացել իւր երկիւղը): Գիտեմ, դու քաջ ես, քո կոնքերի մէջ ասիւծի ոյժ կայ և սրտիդ մէջ խանի հպարտութիւն: Դու երկեայ ժամանակդ էլ հպարտ էիր և ոչ ոք չէր համարձակուում քեզ դիպել: Ախ, երանի՜ անցած գնացած օրերին, երանի մեր ազատ մանկութեան, հազար երանի:

ՍէՅՐ. (Ոգեւորուելով): Ուրեմն միտդ է մեր մանկութիւնը, յիշում ես դու այդ օրերը (քոնուս և նրա ձեռք):

ՍՈՒՍ. Մի՛թէ կարող եմ մոռանալ: Օ, Սէյրան, ես ամէն բան յիշում եմ, ամէն բան:

ՍէՅՐ. (Զուարթ): Մինչև անգամ կարմիր կոլի՞ն:

ՍՈՒՍԱՆ. Ախ, թո՛ղ հանաքներդ: Ես իմ երեխայութիւնը յիշելիս արտասուում եմ: Մի՛տդ է ինչպէս էիր բարձրանում մեր և ձեր թթի ծառերի վրայ և ինձ համար թուր թափ տալիս:

ՍէՅՐ. Ի՞նչպէս կարող եմ մոռանալ: Երեք անգամ քո պատճառով ծառից ընկել եմ, քիթս ու պոռնիդ ջարդել:

ՍՈՒՍ. (Անդի ու արեղի յափշտակուելով անցնալով): Ախ, ես ժամերով նստում եմ լուսամտի մօտ, մտիկ եմ անում

մեր ծառին, ձեր ծառին, յիշում եմ այդ երջանիկ օրը: Սիրտս մղկտում է, արտասուքը խեղդում է ինձ: Պատահում է, որ ուզում եմ գնալ գցել ինձ մեր ջրհորի մէջ և խեղդուել (Արտասուում է):

ՍէՅՐ. Լաց մի լինիր, Սուսան, մի՛ տխրեցնիր ինձ. կարճ ենք տեսնելու միմիանց. մի՛ լաց լինիր: (Մի ձեռքով գրկում և Սուսանին, միւսով սխուս և շոյել նրա մազերը): Ի՞նչ բարձրացել ես, ի՞նչ սիրունացել, մազերդ երկարել են, թանձրացել: Հինա մի դնիր, Սուսան, հինան թրքուհուն է սաղում: Առանց հինայի մազերիդ գոյնը աւելի գեղեցիկ է:

ՍՈՒՍԱՆ. (Սջեղել արքերով): Մայրս չի թողնում, ասում է հինան գլխացաւը ոչնչացնում է:

ՍէՅՐ. Դու գլխացաւ ունիս:

ՍՈՒՍԱՆ. (Հառաչելով): Ա՛հ, գլխացաւ էլ ունիմ, սրտացաւ էլ (քորորովիւ մոռանալով իրան, քոնուս և Սեյրանի ձեռք և սանուս դեպի իւր կուրծքը): Դիր ձեռքդ կրծքիս, տես ի՞նչպէս է թրթուում սիրտս. կ'ասես բռնած ծիւղ լինի: Ա՛հ, ես ոյժ ունիմ: (Գրուխը քեփում և Սեյրանի ուսին):

ՍէՅՐԱՆ. (Յափշտակուելով) Ա՛հ, հիմա տեսնում եմ, որ դու ինձ սիրում ես՝ ինչպէս ես քեզ: Սուսա՛ն, Սուսա՛ն: (Սեղմում և Սուսանի գրուխը իւր կրծքին):

ՍՈՒՍ. Երանի այսպէս մեռնէի, որ դու ինձ թողէիր:

ՍէՅՐ. Ոչ, մի՛ ասա, դու չես մեռնիլ, դու իմը պիտի լինիս: (Յանկարծ ամուր գրկում և և պիկը հաւքորում նրան):

ՍՈՒՍ. (Օձից խայքումի պես սրտախուս և): Վայ, այդ ի՞նչ արիր: (Ազատում և Սեյրանի կրծքից): Գնա, չուտ հեռացիր: Ես ինքս ինձ մոռացայ: Հայրս, մայրս խայտառակուեցին, դու ինձ պաշեցիր, դնա, դնա: (Հեռանում և աստափած):

ՍէՅՐ. Մի՛ վախենար, Սուսան, քաջ եղիր: Դու իմ հարսնացուն ես, ես քո փեսացուն. դու իմն ես, ես քոնը: Ոչ ոք իրաւունք չունի մեր մէջ մտնելու: Թո՛ղ մի անգամ էլ: (Առաջ յարձակում և Սուսանի վրայ, գրկում, համքորում): Էդուց երեկոյ քեզ կը սպասեմ ձեր ծառի տակ:

ՍՈՒՍ. (Հագիւ ազատելով Սեյրանից, երեսն ասօրից ծածկում է երկու ձեռներով): **Ես կորայ:**

ՍԷՅՐ. (Վագում է դեպի լուսանոս, Բարխուդարին տեսնելով):

ՏԵՍԻԼ 4.

Նոյնի և Բարխուդար

ԲԱՐԽ. (Ներսէս և մտնում խոնքի դռնից: Իննը տարուայ մեջ շատ էջ փոխուել, միայն գլխի կարճ խուզած մագերէն աւելի են ապիսակել: Հագնուած է այնպէս, ինչպէս իննը տարի առաջ: Ուզում է դռների մօտ ջնուշկները հանել. տեսնում է Սեյրանին՝ Սուսանին հանքուրելիս, վագում է ներս ջնուշկներով): **ԼԻՐԲ.** **ԼԻՐԲ.** (Վագում է Սեյրանի ետեւին, չի կարողանում բռնել):

ՍԷՅՐ. (Ցատկում է լուսանոսից դուրս):

ՏԵՍԻԼ 5.

Սուսան և Բարխուդար

ՍՈՒՍ. (Դողալով, աստապիած, վերցրել է աւելի և ուզում է յատկապէս արել):

ԲԱՐԽ. Ի՞նչ էր անում նա այստեղ:

ՍՈՒՍ. (Աւելի բաց է թողնում ձեռից):

ԲԱՐԽ. (Չայելք քարձրացնելով): Ի՞նչ էր անում նա այստեղ:

ՍՈՒՍԱՆ. (Ուզում է սրտասուքանել, լեզուն կաշկանդում է):

ԲԱՐԽ. Ես քեզ եմ հարցնում, ի՞նչ գործ ունէր այդ լազիտն այստեղ:

ՍՈՒՍ. (Դողողոյուն ձայնով): Եկել էր քեզ տեսնելու:

ԲԱՐԽ. (Դատն հեղուքեալ): Հա՞, շատ չնորհակալ եմ: Անառակ:

ՍՈՒՍ. (Չեռնել իրարու կցելով, աղերսալի): Մեղա՛յ Աստծու, հայր, մեղայ Աստծու:

ԲԱՐԽ. (Բռնում է Սուսանի քեւից և փաշելով նրան, տեսնում է դեպի ձախ կողմի դուռը): Ե՛կ այստեղ, եկ, ես քեզ ցոյց կըրամ թէ դու ո՛ւմ աղջիկն ես:

ՍՈՒՍ. Խնայիր, ներիր: (Հետեւում է հօրը և գնում միւս սենեակ, ուր ձյուն է):

ՏԵՍԻԼ 6.

Գիւլնագ և Սմբատ

ԳԻՒԼՆ. (Գալիս է խորի դռնով: Չմուշկները հանում է դրան մօտ, չարշովը վեր դնում է և ծաղում): **Ախար, դու ի՞նչ գործ ունես թուրքերի հետ:**

ՍՄԲ. (Գալիս է մօտ հետ խորի դռնով: Բաւանակի տարակաւ երիտասարդ է: Հագած է սեւ սասիկից արխալուղ, փրակ կարճ քեշերով չուխա վագնակներով: Գլխին կոշ գդակ, ոտներին եւրոպական կոշիկներ): **Նրանք թափուեցին մեզ վրայ ծեծելու: Ես ու Սէյրանը փախերով յարձակուեցինք նրանց վրայ և մի լաւ խրատեցինք:**

ԳԻՒԼՆ. (Գալիս է քեւի կենդրոնը, շտապ է Սուսանի ձայնը): Այդ ի՞նչ է պատահել երեսայիս: (Չարշովը մի կողմ շարժելով, վագում է դեպի ձախ կողմի դուռը): **Ամա՛ն:**

ՍՄԲ. Հայրիկը ծեծում է նրան: (Սրտնոքեալ): **Ա՛հ:** (Վրդովուած անցուդարձ է անում):

ՏԵՍԻԼ 7.

Սմբատ և Բարխուդար

ԲԱՐԽ. (Գալիս է ձախ կողմի դռնով առանց գդակի: Չափազանց զրգուռած է): **Անառակի ծնունդ, անառակ:** (Սմբատին տեսնելով): **Աղա, դնա այս բոլէիս Հայրապետին կանչիր այստեղ:**

ՍՄԲ. Ի՞նչ է արել, որ էլի ծեծեցիր:

ԲԱՐԽ. Ծեծել, ծեծելն ի՞նչ է: Ես չամբուրները պիտի չիկաղնեմ կրակի վրայ և մէկ մէկ դադեմ նրա մատները:

ՍՄԲ. Այդքան էլ խստութիւն:

ԲԱՐԽ. Չայնք կտրիր, լիբէ. եթէ դու նամուսով եղբայր ես, պէտք է խանչալի բազարի մէջ խրեա այդ լազիտի փորը, փորտովքը թափեա մարդկանց առաջ, նա համարձակուի իմ տուէր մօտնել, իմ նամուսը ոտնատակ անել: Ես ցոյց կըրամ նրա հօրը: Գնա, կանչիր այդ մարդուն շուտ:

ՍՄԲ. (Շտապով գնում է խորի դռնով, շտապ է Սուսանի հեծկոտակներ):

ԲԱՐԽ. (Մտնում է ձախ կողմի դրան եւ դեպի միւս սենեակը): Քիչ գնդգնդա, չո՛ւն, թէ չէ՝ էլի կըգամ:

ՍՈՒՍ. (Դադարում է ճշայ):

ԲԱՐԽ. (Վերցնում է պաշի փոքր խորշերի մեկից երկար ու բարակ չիբուխը, դուրս է բերում արխարուղի գրպանից դառը քանթափուի ֆակը, մի տերեւ քանթափու դնում ձեռքերի մեջ, տոբում եւ չեցնում չիբուխը եւ մագնիսը կայծակափայտին զարկելով, վառում է արեփը ու չիբուխը ծխում):

Տ Ե Ս Ի Լ 8.

Բարխուդար եւ Գիւլնազ

ԳԻԻԼՆ. (Գալիս է ձախ կողմի դռնով, գունաս արտառուելով): Անսիրա, անհոգի, ո՞րտեղ էր քո Աստուածը, ի՞նչ օրի ես գցել երեխայիս:

ԲԱՐԽ. Քիչ խօսիր: Օրը մթնել է, մոմ վառիր:

ԳԻԻԼՆ. Մթնէր երկինք ու երկիր, այս օրը չը տեսնէի: Աստուած, Աստուած, երանի այն կնոջը, որ զաւակ չունի: (Վերցնում է պաշի փոքր խորշից մի մու, վառում է շուցկիով եւ դնում է անդուկներից մեկի վրայ):

ԲԱՐԽ. Շունն ցնգնէիք ինձ համար աւելի լաւ կը լինէր, քան այդ տեսակ աղջիկ: (Անցնողսրձ է անում յուզում):

ԳԻԻԼՆ. Ինչո՞ւ, ի՞նչ մի մեղք է գործել: (Աւելը վերցնում է յասակի վրայից, արագ արքում է սենեակը եւ խորքի դռնով դուրս գնում):

ԲԱՐԽ. Ամօթ չունէ, հարցնում էլ է: Ես քեզ քանի՞ անգամ եմ ասել, մի՛ թողնիր աղջկանդ տանը մենակ. ի՞նչ ես չարշովը գլխիդ՝ փողոցները չափչափում:

ԳԻԻԼՆ. Ես փողոցները չէի չափչափում. գնացել էի քրոջ տեսնելու: Նա մահամերձ է: (Կարգի է բերում սենեակը):

ԲԱՐԽ. Թող ամէնքը սատկեն. ինձ համար իմ տան պատին է միայն թանգ: Ես գլխիս գդակ ունէի, դու նրան վերցրիր եւ չուն ու գայլերի առաջ գցեցիր:

ԳԻԻԼՆ. Ախար ի՞նչ մի մեծ մեղք է, որ հարմնացում տեսնուում է իւր նշանածի հետ:

ԲԱՐԽ. Դու տեսնուում էիր ինձ հետ, երբ հարմնացուէիր:

ԳԻԻԼՆ. Երանի՛ տեսնուէի, քեզ նման գաղանի կինը չէի լինի:

ԲԱՐԽ. (Կասաղելով, սպառնում է չիբուխով) Սո՛ւս, թէ չէ քեզ էլ աղջկադ օրը կը գցեմ:

ԳԻԻԼՆ. Ահ, անիծուի քեզ նման մարդը:

Տ Ե Ս Ի Լ 9.

Նոյնք, Հայրապետ եւ Սմբատ

ՀԱՅՐ. (Գալիս է խորքի դռնով: Հագնուած է պակսիս, ինչպէս ինքը տարի առաջ: Ծերացել է: Ձմռանները քողնում է դրան մօտ, գրպալը վերցնում): Ողորմի Աստուած:

ԳԻԻԼՆ. Աստուած ողորմի:

ԲԱՐԽ. Խոռով կենայ ժամը քո գլխին:

ՀԱՅՐ. (Ապշելով, մի ֆայ յետ է գնում) Մարդ Աստծու, եկեղեցուց եմ գալիս:

ԲԱՐԽ. Եսիրս Հնգստան դուրս կըգայ, ոտաբաց, գլխաբաց դռնէ դուռ ողորմութիւն կը հաւաքեմ, այս խայտառակութիւնը չեմ տանի:

ՀԱՅՐ. Բան ասա, բան հասկանամ, ի՞նչ ես պառաւ կնկայ պէս անէճք կարդում (գրպալը դնում է գլխին):

ԲԱՐԽ. Քաշիր տղիդ կապը, Հայրապետ, քաշիր, ասում եմ, թէ չէ նրան էլ կը սպանեմ, աղջկաս էլ, քեզ էլ, ինձ էլ: Հերիք չէ, որ ինքը լրբացել է, հերիք չէ, որ այս լակոտին էլ փչացրել է: (Յոյց է արդիս Սմբատի վրայ, որ այդ վայրկէսին զալիս է խորքի դռնով): Հիմա իմ անունն է քաղաքի բերանը գցել: Չէ՛, չէ, Հայրապետ, իմ նամուսը չի տանիլ այդ բանը:

ՍՄԲ. (Գնում է ձախ կողմի դռնով այն վայրկեանին իսկ, երբ Բարխուդարը մասնակից է անում իրան):

Տ Ե Ս Ի Լ 10.

Նոյնք, առանց Սմբատի

ՀԱՅՐ. (Գիւլնագին): Ա՛ կնիկ, գոնէ դո՛ւ ասա, ի՞նչ է պատահել:

ԳԻԻԼՆ. (Առանց նայելու Հայրապետին): Ի՞նչ գիտեմ, Սէյրաանն եկել է մեր տուն:

ՀԱՅՐ. Հէնց ա՞յդ:

ԲԱՐԽ. Ասա՛ էլի, լեզուդ չի՞ դօրում: (Հայրապետին): Աչքովս տեսայ նրանց գրկուած, համբուրուելիս:

ՀԱՅՐ. Այ թէ ինչ:

ՄԻԻՍ ՍԵՆՍԱԿԻՅ. (Միւս սեննակից շուռն է Սուսանի տեղը):

ԳԻԻԼՆ. Քիչ տնքտնքա, անբաղդ, քիչ: (Գնում է ձախ կողմի դռնով):

ՏԵՍԻՒԼ 11.

Նոյն, առանց Գիւլնագի

ՀԱՅՐ. Բա՛ս ես գնամ նրա գլուխը չների բաժին դարձնեմ, թէկուզ խանչալ քաշի ինձ վրայ: (Գնում է դռնի դռով):

ԲԱՐԽ. Սպասիր:

ՀԱՅՐ. (Կանգ է առնում):

ԲԱՐԽ. Ես դրա համար չեմ կանչել քեզ: Եթէ դու խրատող հայր լինէիր, մինչեւ հիմա կը խրատէիր:

ՀԱՅՐ. Քի՞չ եմ խրատել, քի՞չ եմ ծեծել: Ել ճիւղոտ, չմնաց տանը, որ վրէժն կտորած չլինիմ: Որ չխրատուեց, ի՞նչ անեմ: Դու էլ ես ծեծել, կարողացա՞ր մարդ չինել:

ԲԱՐԽ. Ահա՛նք դիր: (Յուզմունքով գալիս) Այս երեկոյ բազարից տուն եմ գալիս, մեր փողոցի անկիւնում տեսնում եմ մի քանի ջահիլ ջհուլներ, հաւաքուած, լախլաթու են տալիս: Մօտեցած, չմօտեցած՝ նրանցից մէկն առնում է, «Դա չէ՞ Սէյրանի հետ գիշերներն իրանց ծառի տակ պաշարելուդ աղջկայ հայրը»: «Դա է՞ս. պատասխանում է միւսը: Լսում եմ թէ չէ՞ քիչ է մնում խելքս գլխիցս թռչէ: Աչքերս արիւն են կոխում, ուզում եմ յետ դառնալ, լրբերի գլուխները ջարդել, բայց մտածում եմ՝ նրանք ի՞նչ մեղք ունեն, լսել են, խօսում են: Անիծում եմ չար սաղայէլին, ճանապարհս շարունակում: (Զայնը ընդհատելով) Գալիս եմ տուն անիծուածին խրատելու: Ներս եմ մտնում: Օ՛, Հայրապետ,

թշնամիս չտեսնէ այն, ինչ որ ես տեսայ: Որդիդ գրկել է աղջկաս, պաշում է: Ուզում եմ բռնել լախտիդ, ռաներիս տակ գցել, փախչում է: Աչքերս մթնում են, բռնում եմ աղջկաս թևից, տանում միւս սեննակ: Դէ լսիր, ի՞նչպէս է տնքտնքում:

ՀԱՅՐ. Անսիրտ ես, Բարխուդար, անսիրտ:

ԲԱՐԽ. Եթէ մայրը վրայ հասնէր, չը չօքէր առաջս, ո՞վ գիտէ, կարելի էր ծեծելով սպանէի:

ՀԱՅՐ. Կը սպանէիր, կը սպանէիր, ես քեզ ճանաչում եմ:

ԲԱՐԽ. Ի՞նչ արած, համ ծեծել եմ, համ էլ խղճում եմ:

ՀԱՅՐ. Այդպէս չի կարելի, Բարխուդար, դու շատ խիստ ես, շատ: Նրանք օտարներ չեն, նշանուածներ են: Էսօր էգուց պիտի պսակուեն:

ԲԱՐԽ. (Ծիծաղում է դառն հեգնուքով) Հա, հա, հա, այսօր էգուց պիտի պսակուեն, հա, հա, հա:

ՀԱՅՐ. Ի՞նչու ես ծիծաղում, մի՞թէ այդպէս չէ:

ԲԱՐԽ. Դու կը տեսնես (բարձր ձայնով): Սմբատ:

ՀԱՅՐ. Ի՞նչ ես ուզում անել:

ԲԱՐԽ. Կը տեսնես ասում եմ: (Աւելի բարձր) Սմբատ...

ՏԵՍԻՒԼ 12.

Նոյն, Սմբատ, յետոյ Գիւլնագ եւ Մարիամ

ՍՄԲԱՏ. (Շտապով գալիս է ձախ կողմի դռնով) Համմէ:

ԲԱՐԽ. Բեր այստեղ մեր Աւետարանը, կանչիր մօրդ այստեղ:

ՍՄԲ. (Ներս է գնում նոյն դռնով եւ խկոյն վերադառնում Գիւլնագի հետ, ձեռքին հնամաշ կապով Աւետարանը):

ՀԱՅՐ. Խելքս ոչինչ չի կտրում:

ԲԱՐԽ. Ես չեմ թողնիլ, որ մարդիկ ասեն, թէ Բարխուդարը կտորած ամանը կտորողին տուեց, որ կոծկի:

ԳԻԻԼՆ. (Ներս մտնելով Սմբատի ետեւից): Երեխաս տաքութիւն ունէ, զառանցում է:

ԲԱՐԽ. (Սմբատին) Տո՛ւր ինձ այդ Աւետարանը, գրիչդ բեր:

ՄՄԲ. (Առեւտրանքը Բարխուդարին տալով, փոքրիկ խորշերի մեկից վերցնում է եւ քերում մի կաղաւսուր եւ մի փեւրեայ գրից):

ՄԱՐ. (Գալիս է խորքի դռնով յուզուած, իննը տարուայ մեջ շատ է ծերացել: Մագերը բողբոջի մեծահասակ է: Գալիս է ստանց չարչովի, գլխին մի հասարակ շար) Ի՞նչ է պատահեալս տանք: Ես լսեցի, որ...

ԳԻԻԼՆ. (Ընդհատելով) Ա՛խ, Մարիամ բաջի, աշխարհը խաւարել է մեր գլխին: Եկ, եկ, Երախայիս մին ձար արա: (Գնում է ձախ կողմի դռնով):

ՄԱՐ. (Գնում է Գիւլնագի ետեւից):

Տ Ե Ս Ի Լ 13.

Դոյնք, առանց Գիւլնագի եւ Մարիամի

ԲԱՐԽ. (Նստում է սնդուկներից մեկի վրայ, գրիչը քարտ-խում է քանափի մեջ) Ո՞րտեղ է գրուած այն անառակների մասին:

ՄՄԲ. (Ցոյց է ցոյց անելով Առեւտրանքի կազմի մեջ այն տեղը, ուր նշանակուած է Մուսանի եւ Սեյրանի նշանակը) Ահա՛ այստեղ:

ԲԱՐԽ. Անունն Հօր և Որդւոյ և Հօգուոյն Սրբոյ: (Գրիչը հանդիսաւոր քարտը գցում է): Իննը տարի սրանից առաջ ես ուխտեցի իմ աղջկան քո որդուն տալ, այսօր ինքս իմ ձեռքով ջնջում եմ իմ ուխտը: (Ուզում է ջնջել):

ՀԱՅՐ. (Կրօնական սարսափով բռնելով Բարխուդարի ձեռքը) Կա՛ց մարդ, մի՛ անիր, Աստուած քեզ կը պատժի:

ԲԱՐԽ. Թող պատժի: (Հրեղով Հայրապետին ջնջում է Սմբատի գրածը, մի քանի անգամ գիծ քաշելով նրա վրայ): Վերջացաւ: Թող իմ դատաստանն երկնքում լինի, եթէ ես վատ բան արի:

ՀԱՅՐ. (Մեկուսի) Այս մարդը մեզ կործանելու է: (Բարխուդարին) Ուրեմն՝ էլ աղջկադ չե՞ս տալիս իմ որդուն:

ԲԱՐԽ. (Առեւտրանքը Սմբատին տալով, վեր է կենում) Ո՛չ ես աղջիկ ունիմ, ոչ դու որդի:

ՄՄԲ. (Մտնում է) Հայր:

ԲԱՐԽ. (Խիստ) Գո բանք չէ:

ՀԱՅՐ. Լաւ մտածիր, ինչ արիր:

ԲԱՐԽ. Ինչ որ արի, արած է:

ՀԱՅՐ. Իսկ մեր քառասուն տարուայ բարեկամութիւնը:

ԲԱՐԽ. Ես էգուցուանից կը հրամայեմ, որ չինեն պարիսպը մեր տների մէջ:

ՀԱՅՐ. (Ճակասազրիկ խոնարհուողի հեղուքեակով) Լաւ, թող քո ասածը լինի:

ԲԱՐԽ. Ես իմ նաժուար բարեկամութեան համար ծախել չեմ կարող:

ՀԱՅՐ. (Գլուխը քաշ, քաշերն ուղղում է դէպի խորքի դռնը):

Տ Ե Ս Ի Լ 14.

Դոյնք, Սեյրան, յետոյ Մարիամ եւ Գիւլնագ

ՍԷՅՐ. (Շտապով գալիս է խորքի դռնէն, յուզուած, առանց գրաւի): Սպասիր:

ՀԱՅՐ. Պակասը դու էիր (կանգ է առնում):

ՄՄԲ. (Խորը ընկերական կշտակով): Սեյրա՛ն:

ՍԷՅՐ. Սուս, ես էլ իմը պիտի ասեմ, յետոյ ի՛նչ ուզում եմ, թող անեն:

ՀԱՅՐ. (Զայրանալով): Դուրս կորիր այստեղից, դուրս, առում եմ:

ՍԷՅՐԱՆ. Դու լոբի, դու լեզու չունիս այդ մարդու մօտ: (Բարխուդարին): Լոբի, ջառ ու ջահաննամը դու էլ, քո բարեկամութիւնն էլ, պատիւն էլ, նամուսն էլ: Ինձ համար այդ բոլորը Սուսանի մի եղունգին չարժեն: Դու ուզում ես նրան խել ինձանից: Չես կարող. երկինքը վկայ, չես կարող: Ես քեզ կը սպանեմ, այդ չեմ թողնիլ:

ԲԱՐԽ. (Ծաղրաբար): Մի՞թէ:

ՍԷՅՐ. Ես քեզ ասում եմ չեմ թողնիլ: Ո՞վ ես դու, ի՛նչ իրաւունքով ես ծեծում նրան: Ես լսում էի նրա ձայնը: Գաղան, ի՛նչ մեղք է արել նա, որ տանջում ես: Նա իմ հարձակուան է, ես նրա նշանաճը: Ուղեցինք տեսնուել, տեսնուեցինք: Քեզ ի՛նչ, կամ ձեզ ի՛նչ: Ի՛նչ իրաւունքով էք մէջ ընկնում, ի՛նչ իրաւունքով:

ԲԱՐԽ. (Հայրապետին): Դուրս տար այդ անպատկանին, թէ չէ գլուխը չնրի կերակուր կը չինեմ: (Ուզում է յարձակուել Սեյրանի վրայ):

ՍՄԲ. (Բարխուդարի քնից փաշկոյով): Համբերի՛ր, թող տեսնենք ի՞նչ է ասում:

Տ Ե Ս Ի Լ 15.

Նոյն, Մարիամ եւ Գիւլնազ

ՄԱՐ. (Դուրս է գալիս ձախ կողմի դռնով այն վայրկեանին, երբ Բարխուդարը ուզում է յարձակուել Սեյրանի վրայ): Ամա՛ն Աստուած, կարող է սպանել երեխայիս:

ՍԷՅՐ. Մի՛ վախենար, մայր, քո որդուն սպանողը դեռ չի ծնուել: (Բարխուդարին) Ի՞նչ էս ձայնդ գլխիդ գցում: Ո՛ւմ էս ուզում վախեցնել: Էլ էս առաջուայ երեխան չեմ, էլ քո գոռոցներն ինձ համար երկիւղալի չեն: Զնջեցիր, հա՞, Աւետարանի վրայ արած ուխտդ: Ա՛յդ է քո ազնիւ խօսքը: Կրունդիս չարժէ նա: Մտիկ արէ՛ք այդ գոռոզին, դեռ երեսունի նամուսի մասին խօսելու:

ՀԱՅՐ. (Կուսաղի) Սո՛ւս, սո՛ւս, անասուն, թէ չէ կառաղում եմ:

ԳԻԻԼՆ. (Գալիս է ձախ կողմի դռնով):

ԲԱՐԽ. Անէ՛ծք քեզ, չար սաղայել, աչերս արին է կոխում:

ՍՄԲ. (Յուզմունքից դողալով, մօտենում է Սեյրանին) Գնա՛, հեռացիր, յետոյ էս քեզ հետ կը խօսեմ:

ՍԷՅՐ. Դու մի խառնուել, իմ բանը այդ մարդու հետ է: Դու էլ էս տանջում նրա ձեռքին. դու էլ դիտես նա ի՞նչ գազան է:

ԲԱՐԽ. Շո՛ւն, շան դաւակ (Յարձակում է Սեյրանի վրայ եւ չիքոխով երկու անգամ զարկում նրան):

ՄԱՐ. Վա՛յ, սպանեց: (Մօտենում է Գիւլնազին եւ գրկում նրան):

ՍԷՅՐ. (Ձեռք սանելով դիպի մեջքին կապած դաշոյնը) Ես քո փորձաքը դուրս կ'ածեմ, անիրաւ:

ՀԱՅՐ. (Խեղճորոյս) Աղա. հերիք է, աղա, ամօթ է: (Բռնում Սեյրանին երկու ձեռներով: Գրպին ընկնում է):

ՄԱՐ. (Աղերսական) ՍԷՅՐա՛ն, ՍԷՅՐա՛ն:

ՍՄԲ. (Կուսաղում է) Դաշոյնիդ ձեռ մի տալ, թէ չէ էս էլ ունիմ: (Ձեռք սանում է դիպի իւր ջուխայի սակ քաղցրած դաշոյնը):

ԳԻԻԼՆ. (Բռնում է Սեյրանի ձեռները ետեւից) Ես քեզ չեմ թողնիլ խառնուելու, չեմ թողնիլ: Ի՛նչ ուզում ես — թող անեն:

ՍԷՅՐ. (Ազատելով Հայրապետի ձեռներից) Երկինքը վըկայ, այդ չիբուխը գլխիդ կը փշրէի, եթէ Սուսանը չլինէր: Բայց այդ հարուածը էս չեմ տանիլ, եթէ Սուսանին խեղճանից:

ԲԱՐԽ. Ես կտոր կտոր կ'անեմ նրան, չներին կը դցեմ, քեզ չեմ տալ:

ՍԷՅՐ. Այդ կը տեսնենք:

ՍՈՒՍ. (Ներսից ասուպակնով) Մամա՛, մամա՛:

ԳԻԻԼՆ. Գալիս եմ, անբաղդ, գալիս եմ (Շտապով զրնում է ձախ):

ՍԷՅՐ. Դա նրա ձայնն է, ո՛վ գիտէ, մեռանում է: Ես ուզում եմ նրան տեսնել: (Դիմում է դիպի ձախ դռնը):

ԲԱՐԽ. (Կանգնում է ձախ դռնի սուսք սրաչալակովակնով դիմում): Քո գերեզմանը կը տեսնես, նրան չեմ տեսնիլ:

ՍԷՅՐ. (Դաշոյնը մերկացնելով) Դէ, կեր, գազան:

ՍՄԲ. (Արագ մերկացնում է դաշոյնը եւ Սեյրանի դիմ կանգնում) Կա՛նգ առ: Ես քո կողմն եմ, բայց չեմ թողնիլ հօրս սպանել:

ՄԱՐ. (Գլուխն արագ քսց սնելով, ջոխում է երկուսի մեջ, մազերը սարածում նրանց ոտների սուսք): Ներկեցէ՛ք կարմիր արիւնով ձերմակ մազերս:

ՍԷՅՐ. (Սարսափով յետ է կանգնում): Մա՛յր: (Դաշոյնը դնում է սրաքանի մեջ):

ՍՄԲ. (Սարսափած) Մարիամ բաջի: (Լոռքիւն): Վեր կաց: (Դաշոյնը դնում է սրաքանի մեջ):

ՀԱՅՐ. (Այնքան շփոթուել է, որ չգիտէ ինչ անի: Ձեռները աջ ու ձախ սարածելով, մերթ արեւ է դիմում մերթ նրան):

ԲԱՐԽ. (Լոռաբիւն: Արմաւի պէս կանգնած է ձախ դրան առաջ):

ՄԱՐ. (Վեր է կենում, մագերը ժողկելով: Շնչաւապառ է, դողում է, անորոշ հնչիւններ է արձակում):

ԲԱՐԽ. (Հայրապետին ու Մարիամին) Տեսա՞ք այդ բոլորը. կշտացա՞ք: Դէ՛հ, բարի ճանապարհ: Ի՞նչ տան դռները այսուհետեւ ձեզ համար չեն բացուիլ (Մի քանի քայլ առաջ է գալիս):

ՄՄԲ. Հա՛յր, ես քեզ պաշտպանեցի, բայց քո արարմունքը պաշտպանել չեմ կարող: Սուսանը Սէյրանի հարսնացուն է, նրա հետ էլ պիտի պսակուի:

ԲԱՐԽ. (Ուշադրութիւն չդարձնելով Սմբատի վրայ: Հայրապետին և Մարիամին՝ սատը եղանակով): Դուք դեռ այստեղ է՞ք:

ԳԻԻԼՆ. (Երեւում է ձախ կողմի դրան մեջ) Մի՛ արա, մարդ, մի՛ արա:

ԲԱՐԽ. Բարխուդարը իւր թքածը լզողներից չէ:

ՀԱՅՐ. (Գդալը յաւակից վերցնելով): Լաւ, քո ասածը լինի: Բայց երկինքը վկայ, Բարխուդար, լաւ բան չես անում: (Յուզում): Մնաս բարով, Գիւլնազ բաջի, ես քեզանից չնորհակալ եմ, շատ չնորհակալ եմ: (Մարիամին, խըղձով ձայնով): Գնանք, ա՛՛ կնիկ:

ՄԱՐ. (Մագերը շփելով): Գնանք:

ՍԷՅՐ. Լսեցէ՛ք, երգւում եմ իմ նամուսով, որ Սուսանը կամ իմը կը լինի կամ գերեզմանինը: (Արագ փայլերով գնում է խորքի դռներով):

ՀԱՅՐ. (Հետեւում է Սէյրանին, ձեռները դեպի երկինք բարձրացրած):

ՄԱՐ. Թող Աստուծո զատաստանին մնայ մեր ամէնքի գառը: (Գնում է Հայրապետի կեռից, աչքերը արեւով):

ՄՄԲ. (Նայում է Բարխուդարին դառն յանդիսա՛նութեամբ):

ՍՈՒՍ. (Միւս սենեակից ստապակով): Մամա՛, մամա՛:

ԳԻԻԼՆ. (Հնկեղբորով գնում է ձախ կողմի դռնով):

ԲԱՐԽ. (Պատասխանում է չիբուխ ծխելու):

Վ. Ա. Բ. Ա. Դ. Ո. Ե. Բ.

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Յ Ե Ր Վ Ր Ո Ր Պ

Ռուսաստանի բնակարանը: Հարսանիքի տոնաւան

ՍՈՒՍԱՆԻ ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մի շատ ընդարձակ սենեակ, կահաւորուած կէս ասիական և կէս եւրոպական եղանակով: Յատակը ծայրէ ի ծայր ծածկուած է թանձր պարսկական գորգերով: Դռներ՝ խորքի պատի մէջ, որ տանում են դէպի գաւիթ, դռներ՝ աջ պատի մէջ, որ տանում են բնակարանի միւս սենեակները: Երկու նեղ ու երկար ճաշի սեղաններ, մէկն աջ, միւսը ձախ պատի առջև: Երկուսն էլ ծածկուած են կապտագոյն սփռոցներով: Զախ պատի մէջ լուսամուտներ: Ոտնաւորները արխաւուղներով, առանց չուխայի, սև չուստեր հագած, սեղանները պատրաստում են հարսանիքի խնձոյքի համար, մերթ աջ կողմի դռներով, մերթ խորքի դռներով բերելով հարկաւոր իրերը: Հետզհետէ խորքի դռներով գալիս են հիւրերը, գլխաւորապէս տեղական հագուստներով: Նրանք, որոնք չմուկներ ունին հագած, թէ՛ կին և թէ՛ տղամարդիկ խորքի դռների մօտ դրսում հանում են իրանց չմուկները և գուլպաներով ներս մտնում: Կանայք, ներս մտնելով, իրանց չարշովները վերցնում են, տղամարդիկ գդակները վերցնում են և տալիս աջ դռների մօտ կանգնած մի պատանու, որ տանում է միւս սենեակ: Ամէնքը հագել են իրանց լաւագոյն գգեստները, տղամարդիկ մետաքսեայ արխաւուղներ, կանայք թաւշեայ մինիթաններ, բեհեզեայ չեքապաններ, արխաւուղներ: Կանանց մեծամասնութեան մետաքսեայ չապիկների եզրերն ու փէշերը զարդարուած են ոսկէ դրամներով: Մի քանի կանանց գլուխները զարդարուած են ոսկէ պսակներով (գիւղեմ): Արեւելեան ճոխ շքեղութիւն, գոյնների առատութիւն: Հասակաւոր կանայք երեսաց են, երիտասարդներից շատերը սքոզում են իրանց երեաները տղամարդկանցից:

Տ Ն Ս Ր Լ 1.

Հիւրեր—կանայք

Ա. Հիւր. (Խորիի դռներով ներս մտնելով ուրիշ երկու կանանց հետ, յարշուր վերցնում է, սալիս աջ կողմի դռների մօտ կանգնած պատանուն) Բաղդաւոր աստղի տակ է ծնունդ Գիւլնազի աղջիկը, ի՞նչ ասեմ:

Բ. Հիւր. (Անկելով նոյնը, ինչ որ ասացինք) Տես ի՞նչ տուն ու տեղ է մտնելու: Կէս կուշտ կէս քաղցած մի դերձակի աղջիկ ու սեղաններ:

Գ. Հիւր. (Չարշուրի փոխարէն շալ է գցած զլիսին: Հագնում է համեմատաբար համեմատ): Աղջիկն այնքան սիրուն է, որ արժանի է աւելի հարուստ տուն մտնելու:

Ա. Հիւր. Հողեմ նրա սիրուն գլուխը:

Բ. Հիւր. Տափը մտնէ լպտածը:

Ա. Հիւր. Լպտած լինի լաւ է, լակլակած է:

Գ. Հիւր. (Կշտակաբանով) Աղջի, քիչ բամբասեցէք, հերիք է:

Բ. Հիւր. Իսկի էլ բամբասանք չէ: Երեւում է, որ դու կուժ ու կուլա ծախող Հայրապետի տղայ Սէյրանի մասին չես լսել:

Գ. Հիւր. Ի՞նչ պիտի լսէի:

Ա. Հիւր. Աշխարհից բեխաբար ես:

Բ. Հիւր. Ողջ քաղաքն է խօսում:

Գ. Հիւր. Ի՞նչ է խօսում:

Ա. Հիւր. Որ Սուսանը Սէյրանի հետ գիշերները տեսնունք է:

Բ. Հիւր. Իրանց թթի ծառի տակ:

Ա. Հիւր. Որ սիլիկ-բիլիկ են արել. դրկուել են, պաշտպանուել:

Բ. Հիւր. Որ հայրը տեղն ու տեղը երկուսին էլ բռնել է ու մի լաւ գնդսել:

Ա. Հիւր. (Աջ ու ձախ նայելով) Սո՛ւս, պատճառաւոր է եղել:

Բ. Հիւր. (Շշնչաւոր) Վիժել է:

Գ. Հիւր. (Վրդովում) Հերիք է, հերիք: Որ վրովս թոկ գցէք, խեղդէք, այդ բանին չեմ հաւատալ: Այն խոնարհ, պարկեշտ Գիւլնազի աղջիկը չէր կարող այդպիսի բաներ անել:

Տ Ն Ս Ր Լ 2.

Նոյն եւ Սանամ

ՍԱՆԱՄ. (Գալիս է աջ կողմի դռներով: Մօտ յիսուն տարեկան գեղ, առողջ ու գեղեցիկ կին է քարեհամբոյր դիմով: Հագած է քաշեայ մորեհագոյն միւսքան, որի փեշերի եզերք զարդարւած են քանդագին մաշկով: Միւսքանայի սակից, ապիսակ մեհաքանայ շապիկի վրայ, կապած է կարմիր գոյնի մեհաքանայ գօշի, որ ուրախութեամբ նշան է: Մազերը հիւսկած չեն, ուսի մեհաքանայ են: Ուրախ եւ զուարթ): Համեցէք, համեցէք: Բարով, հազար բարի էք եկել:

Ա. Հիւր. (Համարում է Սանամի հետ) Աչքդ լոյս, ա՛կնիկ, աչքդ լոյս: Ի՞նչ աղջիկ ուղեցիր, ի՞նչ աղջիկ, հրեշտակ է, խելօք, պարկեշտ: (Արիւարողի գրգամըց դուրս է քերում մի մեծ նուրբ ոսկե քղրով ծածկած, վրեն մեխակներ գցած եւ սալիս է Սանամին):

Բ. Հիւր. (Համարում է Սանամի հետ) Ողջ քաղաքն է գովում հարանցուիդ, ասում են նմանք չկայ: (Տալիս է Սանամին ծխախոտի մեծ տուփի չափ մի կանգես):

Գ. Հիւր. (Վրդովում, մեկուսի) Չեք աչքը դուրս գայ (Համարում է Սանամի հետ, ոչինչ չի սալիս) Աստուած տայ, որ երեւան էլ քաղաւոր լինեն, ինչ ասեմ: (Իսկոյն հեռանում եւ խառնում է միւս հիւրերին):

Ա. Հիւր. (Երկրորդ հիւրի հանգիսին) Շնորհքդ կտրուի, մի մեխակ էլ բերէիր աչքալուսի համար:

Բ. Հիւր. Երեւում է, որ չար սրտով է եկել:

ՍԱՆԱՄ. Աղքատ կնիկ, չունէ, ի՞նչ բերէր: (Մի երկատար կնոջ, որ օգնում է սեղանի պատրաստողներին): Աղջի, Զաւահիր, այս նունն ու կանֆէար տար միւս սենեակը:

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (Չորս հոգով գալիս եւ խորհի դռներով եւ առանց գրակաները վերցնելու, խնարհ գրուի եւ տալիս Մանակին, մի անկիւնում նստում եւ սխալում եւ շարել իրանց գործիքները):

ՍԱՆԱՄ. (Մօտենում է խորհի դռներին, եկող հիւրերին ընդունելու համար, ունակ հետ հանրապետում է, նշանակելով ընդունելով):

ՀԻՒՐԵՐ. (Տալիս եւ Սանակին, բաց ի քաղցրահամեմից, արծաթեայ բաժակներ, դաշկեր, շաքարահամներ եւայլն):

ԴՐՍԻՑ. (Շատ հեռուից լսում է զուռնայի ձայն, որ հետզհետեւ մօտենում է):

ՀԻՒՐԵՐ. Գալիս են, գալիս են:

ՍԱՆԱՄ. (Հիւրերին) Տեղ բաց արեք:

ՀԻՒՐԵՐ. (Կանգնում եւ աջ ու ձախ երկու շարքերով):

ՏԵՍԻԼ 3.

Նոյնք եւ Աղաբեգ

ԱՂԱԲԵԳ. (Մի երիտասարդ արխաղաղով, չուխայով, եւ ռուպակն կոշիկներով: Ներս է վագում խորհի դռներով գունաս, հեւաղով) Ա՛հ, նամարդներ, ի՞նչպէս փախան:

ՍԱՆԱՄ. (Վախեցած) Ի՞նչ է պատահել:

ՀԻՒՐԵՐ. (Շրջապատելով Աղաբեգին) Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել:

ԱՂԱԲ. (Շնչաւազաւ) Թշնամի մարդիկ հարսանիքն ուղղում էին փչացնել:

ՀԻՒՐԵՐ. Ովքե՞ր էին, ովքե՞ր:

ԱՂԱԲ. Չճանաչեցինք: Լսեցէք ինչպէս պատահեց: Հարսանիքը ժամից դուրս եկաւ, ճանապարհ ընկաւ այստեղ: Գէօգջանց տնին հասած չհասած՝ յանկարծ մեզ վրայ սկսեցին քարեր թափուել. մի մեծ քար զիպաւ ջան տանողի թեւին, ջանք նրա ձեռից ընկաւ, հանգաւ: Մենք մնացինք խաւարի մէջ: Միայն թագաւոր-թագուհու մոմերն էին յուսաւորում: Բարձրացաւ հառայ հուռայ: Մենք չուարուեցինք: Կանայք վախատուն բարձրացրին:

ՍԱՆԱՄ. (Անհամբեր) Յետո՞յ, յետո՞յ:

ԱՂԱԲ. (Տալալին հեւաղով) Ռուստամը գողաց. «Աղա, ջանք վառեցէք»: Գողու Մաթոսը ջանք վառեց. ի՞նչ տեսնե՞ք, մօտ տառը-տառներով ջանիլ տղերք փայտերով եւ խանչալներով գալիս են մեզ վրայ:

Դ. ՀԻՒՐ. Թուրքե՞ր:

ԱՂԱԲ. Հայեր: Նրանք հայերէն էին հայնոյում: Ռուստամը մի ձեռով զրկեց նորահարսին, միւսով խեց խաչեղբոր թուրը եւ Ասլանի պէս գողաց. «Ով որ նամարդ չէ, թող առաջ գայ»: Մերոնք սիրտ առան: Չուխաները հանեցին, թեւերին փաթաթեցին, վաղեցին չուռ: Մնացակաւի չափաւից մի-մի փայտ դուրս բերեցին: Մի քանիսն էլ խանչալներ ունէին: Սկսեցինք կռուել:

ՍԱՆԱՄ. Ողորմած Աստուած:

ԱՂԱԲ. Նամարդներն երկար չղիմացան: Սկսեցին մէկ-մէկ փախչել: Վերջը մէջտեղ մնաց մէկը՝ ոտից մինչեւ գլուխ ցեխաթաթախ:

ՍԱՆԱՄ. Ո՞վ էր, ախ Աստուած, ո՞վ էր:

ԱՂԱԲ. Չճանաչեցինք:

ՀԻՒՐԵՐԻՑ ՈՄԱՆԲ. (Իրարու նշաններ եւ անում, քի ձուսնում են):

ԱՂԱԲ. Նա գողում էր իւր ընկերների վրայ. «Էյ, բնամուս ընկերներ, ո՞րտեղ էք փախչում, կանգ առէք»: Բայց ոչ ոք չլսեց նրան: Փախան: Նամարդը սկսեց հայնոյել Ռուստամին, նորահարսի ծնողներին: Հարբած էր այնպէս, որ ոտքի վրայ կանգնել չէր կարողանում: (Չուռնայի ձայնը մօտենում է):

ՍԱՆԱՄ. (Երկու ձեռները ծնկներին զարկելով): Վա՛յ ինձ, ուրախ օրս սեւացրին:

ՀԻՒՐԵՐ. Հարսանիքը գալիս է, գալիս է (իրարանցում):

ԱՂԱԲ. Իսկի մի վախենար, Սանամ խանում, իսկի մի վախենար, ոչ ոքի գլխի մաղին մնաց չի հասնիլ: Հարսանիքը գալիս է ուրախ-ուրախ, գնանք առաջ (գնում է խորհի դռներով):

ՀԻՒՐԵՐ. (Ճանապարհ եւ բաց անում եկողների համար):

ՍԱՆԱՄ. (Շտապով գնում է խորհի դռներով):

ՏԵՍԻՆ 4.

Նոյն, Ռուսամ, Սուսան, Սուսամբար, Եղեղանիկ,
Խաչեղբայր, Բահանայ, Տիրացունեք, նոր հիւրեր եւ այլն.

ՇՊՊ. (Ներսէս կ'աղիս խորի դռներից ամենից առաջ:
Բարձրահասակ չոր-չոր կազմուածով կիկն է քառասուն տարեկան:
Հագած է կապոյտ գօշի, ոտներին հագած է սև ջուշեր: Գլխին
կապած է հասարակ ճութիւն եւ բոռ: Չեւերը հաւսարձակ են,
շարժումներն ազատ, ոչ ոքից չի անհոգում: Երածիչներին): Պատ-
րաստուեցէք:

ՀԻՒՐԵՐ. Հէնց որ ներս ժողովին հոգաւ կանչեցէք: (Չու-
նի ձայնը ընդհատում է: Բահանան եւ տիրացուները երգում են
հարսանիքի շարական):

ՇՊՊԱՆ. Զանապարհ բաց արէք թաղաւոր թաղուհու
համար: Ուրախացէք, այ ջամահաթ, ուրախացէք, գալիս են:

ՌՈՒՍ. (Գալիս է խորի դռներով Սուսանի հետ: Բարձ-
րահասակ, յաղթանդամ տղամարդ է, ոչ անելի քան երեսունութ-
կու տարեկան: Երեսը սափրած է, դեմքը չուրջ, մի քիչ մուգ,
աչերը խորը քաղուած, ունիւրը քառ: Հագած է մետաքսեայ ծաղ-
կազարդ արխալուզ, որի եզրերը կրծքի վրայ զարդարուած են
նակեթելով (բաքթա): Սև յուսակ երկար, տեղեւածեւ քեւերով,
նակեթել ծոպերով: Կոշիկները երեսակալ են: Գլխաւոր է:
Գլխով կրում է հանդիսականներից մեկը: Կրծքին խաչածեւ կա-
պած է լուս կիկն սովորութեան կանաչ կարմիր ժապաւեններ: Մի
ձեռքին մի հաս զետեւ մոմ, միւսը կրծքին դրած):

ՍՈՒՍ. (Գալիս է Ռուսանի հետ: Հագած է քեւեղեղայ
ջեպակ, մետաքսեայ կարմիր շալիկ եզրերը ոսկե դրամներով
զարդարուած, վարդագոյն արջաւանջ վարսիկ: Փաթարուած է չա-
շովի մեջ, երեսը ծածկած է ալիսակ նուրբ եւ ցանցաւ շորով):

ՍՈՒՍԱՄԲ. (Ներսէս մտնում Սուսանի ետեւից նոյնպէս
փաթարուած չաշովի մեջ, միայն երեսը բաց է: Անբողջ ժամա-
կակ շնչալով հասկացնում է Սուսանին, քի ինչ պիտի անել եւ
առհասարակ դեկլարում է նրան: Նա ինքը նոր է անուանա-
ցել եւ գիտէ ձեւերը:

ԽԱՉԵՂԲ. (Մի երեսասարդ, հանդիսաւոր հագնուած, գալիս
է անմիջապէս Սուսանբարի ետեւից: Վզովը քաշ է արած մի
երկայն քուր արծաթեայ պատեանով: Մի ձեռքով թռնած է մի
մեծ մոմ, միւսում իւր գլխով, որ ներս մտնելով, անմիջապէս
սալիս է ոտներներից մեկին: Իսկոյն եւեթ քուրը մերկացնում
է եւ թռնում դռների գլխին, որպէս զի նորապսակները նրա
սակովն անցնեն):

ՍՄԲ. (Ներսէս մտնում խաչեղբորից եւ Սուսանբարից յետոյ
Սանաւի հետ միասնական: Հագած է արջաւի արխալուզ, նոր
յուսակ: Ոտներին երեսակալ նոր կոշիկներ: Գլխով ձեռնում է):

ՇՊՊԱՆ. Սեղանի վրայից վերցնում է մի դասարկ ախիւ եւ
դնում Ռուսանի ոտների տակ):

ՌՈՒՍ. (Սուսանի հետ քրի սակով անցնելով, ոտով զար-
կում է եւ ախիւն փշրում):

ԱՄԷՆԻԲԸ. Աստուած շնորհաւոր անէ:

ՇՊՊԱՆ. Հոռոտ'ա':

ԱՄԷՆԻԲԸ. Հոռոտ', հափ, հափ հոռոտ'ա':

ԲԱՆԱՆ. ԵՒ ՏԻՐԱՅ. Շարականը ընդհատել են: (Ներսէս
գալով զգեստները հանում են եւ խառնում հիւրերին):

ՇՊՊԱՆ. (Երածիչներին) Շախախի ածեցէք: (Հանդի-
սականներին) Տեղ բաց արէք ինձ համար:

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ. (Նուագում են):

ՀԻՒՐԵՐ. (Ծափ են տալիս):

ՇՊՊԱՆ. (Սեղանի վրայից վերցնում է մի ախիւ եւ գլխի
վրայ թռնելով, պարում է) Ծօբօյ, այ շօբօյ: Տոռողին Աստուած
տայ, շտոռողին ինքը ողորմի: Ծօբօյ, այ շօբօյ: Բոյիդ մատաղ,
Ռուստամ աղա, տես ի՞նչ հարս եմ բերել քեզ համար: Ծօբօյ,
այ շօբօյ, այ շօբօյ: Երեք օր, երեք գիշեր կը համբերես,
կը տեսնես, թէ չհաւանես, ինձ կը խեղդես: Ծօբօյ, այ շօբօյ:
Տոռէք, այ ջամահաթ, ես ձերն եմ, դուք իմ: Ծօբօյ, այ
շօբօյ: Սուսան խանում, դուքիա գեղալի, թառլան դուշ,
ջին ջաւահիր: Ծօբօյ, այ շօբօյ: Ռուստամն է, Ռուստամը
զալ, ջահիլ ջիւան, բոյը չինար, ինքն ասլան, ասլան բա-
լասի, նամուս դրիաթով, փառք ու պատուով: Ծօբօյ, այ

չօբօշ: Տուէք, տուէք: Սուսանն է մարալի պէս, խանութ-խա-
թուն, խելք ունէ ծովի պէս, սիրտ ունէ ոսկի է, հիւր ու
մալաք, բիւ ու բիւբիւլ: Շօբօշ այ չօբօշ: (Շօբօշ բառը
արտասանում է անհն անգամ, երբ ներկայ եղողները դրամ են
զգում նրա ախիւի մէջ եւ, միեւնոյն ժամանակ, պարում է):

ՌՌԻՍՏ. (Մի ոսկի դրամ է զգում Շպարանիկի ախիւի մէջ):

ՍՈՒՍԱՆ. (Երեւ ռուբլիանոց քղքադրամ է զգում ախիւի
մէջ):

ՍԱՆԱՄ. (Մի քղքադրամ է զգում):

ՍՄԲ. (Մի ֆանի արծաթի դրամներ է զգում):

ԽԱԶԵՂԲ. (Մի քղքադրամ է զգում):

ՀԻԻՐԵՐԻՅ ՈՄԱՆԲ. (Զանազան դրամներ են զգում):

ՇՊՊԱՆ. (Դրամները ժողովելով, դադարում է պարել եւ ժո-
նովածը դնում է գրպանը, երաժիշկներին ծաղարկան նշան անելով):

ՍԱՆԱՄ. (Երաժիշկներին) Բաղդադի ածեցէք: (Սկսում է
պարել ծանր ու հանդիսաւոր եղանակով):

ՍՄԲ. (Պարում է Սանամից յետոյ):

ՀԻԻՐԵՐ. (Զանազան քղքադրամներ քրցում են եւ կպցը-
նում պարողների ձակասին):

ՊԱՐՈՂ. (Բացի Շպարանիկից, ժողոված փողերը սպիս են
երաժիշկներին):

ՍԱՆԱՄ. (Դադարելով պարել, համբուրում է նորապասկ-
ներին): Շնորհաւոր, ա՛յ որդիներ, Աստծու ձեռք ձեզանից
անպակաս լինի: Բաղդաւոր լինիք, մի բարձի ծերանաք,
ծլիք, ծաղկիք, պտուղներ տաք, ես էլ տեսնեմ, փառա-
ւորուեմ:

ՀԻԻՐ. Ամէն, ամէն:

ՍՈՒՍ.

ՌՌԻՍ. } (Համբուրում են Սանամի ձեռք):

ՍԱՆԱՄ. Դէ, համեցէք, նստեցէք, կնանիք այս կողմ,
տղամարդիկ այն կողմ:

ԵՐԱԺԻՇՏ. (Մի առժամանակ դադարում են, յետոյ սկը-
սում են նուագել զանազան եղանակներ, միայն համդարս):

ՀԻԻՐԵՐ. (Նստում են, կանայք ձախ, տղամարդիկ աջ կողմի

սեղանների ֆով: Մեծամասնութիւնը գուշակներով է եւ չգիտէ սե-
ղանի ֆով նստելու ձեւը, ինչպէս եւ դանակ պատասխանող գործ
ածելը, ուստի պատահում են ծիծաղելի սխալներ: Փոքրամասնու-
թիւնը եւրոպական կոշիկներով է: Կանանցից երկուսը քսամկը-
րաւով են, մեկը հագնուած է եւրոպական սարագով: Տղամարդ-
կանց մէջ եւս կան եւրոպական սարագով հագնուածներ: Կան
երկու երեք փոքրիկ չինովնիկներ կոճակներով: Մասն քրանց
հպարտ են պահում):

ՍՈՒՍ. (Սուսամբարի քեյսերութեամբ վերցնում է չար-
շովը եւ նստում երեսօղով սեղանի գլխում, աւանանի կողմ):

ՍՈՒՍԱՄԲ. (Տեղաւորում է Սուսանի մօտ, նոյնպէս չար-
շովը վերցնելով):

ՌՌԻՍԱՄ. (Մտնը հանգցրել է, տեղ ունաւորներից մեկին
եւ կարգադրութիւններ է անում, մերթ մտնելով սեղանի գլուխը,
աւանանի կողմ, մերթ վերկենալով):

ՍԱՆԱՄ. (Մեծ մասամբ ոտքի վրայ է, իսկ նստում է Սու-
սանի դէմ):

ԵՐԱԺԻՇՏ. (Մերթ դադարում են, մերթ նուագում):

ՈՏՆԱԻՈՐ. (Խորքի դռներից կերակուրներ են քերում ու
բաժանում: Կերակուրներ երեք տեսակ են. նախ սպիս են սա-
պակած գառը, սաքս խնձորի դոլմա եւ վերջը փշաւ, յետոյ սանձ
ու խնձոր):

ՌՌԻՍԱՄ. (Յուզուած ձայնով խաչեղբորը) Զիմացա՞ր
ովքեր են:

ԽԱԶԵՂԲ. (Որ նստած է Ռուսամի մօտ) Զճանաչեցի:

ՌՌԻՍ. Այս քաղաքում ես թշնամիներ չունիմ: Տառ-
նեւեօթ տարի է հեռացել եմ Դաղստան:

ԽԱԶԵՂԲ. Լաւ, հանգստացիր, մենք կ'իմանանք ո՞վքեր
էին այդ լրբերը եւ մի լաւ կը պատժենք:

ՌՌԻՍ. (Կատաղութիւնը հազիւ զայելով) Դարա Ռուս-
տամի վրայ յարձակուել, այն էլ այսօրուայ օրը: Իմ պատ-
ուհին գիպչողի գլուխը ուտերի վրայ չեմ թողնիլ:

ԽԱԶԵՂԲ. Աչկունքդ բաց արա, հիւրերդ քեզ են նայում:

ՌՌԻՍ. (Զայելով իրան ոտքի է կանգնում, քարձր ձայնով)

Բարեկամներ, եթէ ինձ մազու չափ սիրում էք կամ պատ-
ւում, պէտք է այս երեկոյ մի լաւ քէֆ անէք:

Հի՛րճ. Բէֆ, քէֆ, հափ հափ հուռա՛ւ:

ԽԱՉ. Թամադա ջոկեցէք, թամադա:

Հի՛րճ. Սերգէյ բէգը, Սերգէյ բէգը: Պրօ՛սիմ, պրօ՛սիմ:

ՍԵՐԳԷՅ ԲԷԳ. (Փոքրահասակ տղամարդ է, հագած պաշ-
տակարի կոնսպիւոր բաճկոն, սակից արխաղոյ: Վեր է կենում
սեղից նստ ու բազում): Ղասպադա, ինձ ներեցէք, այսօր մի
քիչ քէֆս լաւ չէ:

Հի՛րճ. Խնդրում ենք, խնդրում ենք:

ՍԵՐԳԷՅ-ԲԷԳ. (Կոստաներով) Խնայեցէք:

Հի՛րճ. Ձի կարելի, չի կարելի, կենացդ, հուռա՛ւ:

ՌՈՒՍ. Սերգէյ-բէգ, եթէ ինձ սիրում ես:

ՍԵՐԳ-ԲԷԳ. (Իբր քի սկսակց հաւանայնուելով) Դէ, ի՛նչ
արած, աղա Ռուստամի խնդիրը չեմ կարող չկատարել: (Բա-
ժակը բարձրացնելով այ ու ձախ գլուխ է ցախ): Ծնորհակալ
եմ, շնորհակալ եմ (նստում է):

ՍՈՒՍ. (Յուզուած, երեսօղի սակից): Նա էր, նա ինքը:
Ես ձայնից ճանաչեցի: Ա՛հ, խեղճ տղայ:

ՍՈՒՍԱՄԲ. Դու նրան դեռ խղճում ես: Խեղճ մարդն
այդ խայտառակ բանը չէր անիլ:

ՍՈՒՍԱՆ. Նա անբաղդ է, Սուսամբար, շատ անբաղդ:

ՍՈՒՍԱՄԲ. Ինչո՞ւ չես ասում, որ լակած էր, ոտքի
վրայ կանգնել չէր կարողանում:

ՍՈՒՍԱՆ. Հէնց անբաղդութիւնիցն է հարբում: Ա՛խ,
Սուսամբար, այս քօղն ինձ խեղդում է: Ուզում եմ պատ-
ռել, դէն գցել:

ՍՈՒՍԱՄԲ. Յիմար յիմար մի խօսիր: Կ'անցնի, կը մո-
ռացուի, և դու բաղդաւոր կը լինիս Ռուստամի հետ: Տես ի՛նչ
տղամարդ է, նմանը չկայ այդքան մարդկանց մէջ:

ՍՈՒՍԱՆ. Ես նրան էլ եմ խղճում: Ա՛խ, ինչո՞ւ իւր
ջահիլ ջիւան կեանքը կապեց ինձ նման մի անբաղդի հետ:
Տէ՛ր, տո՛ւր ինձ ոյժ դիմանալու: (Այլերը սրբում է ֆոյի սակ):

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Ոսֆի է կանգնում, անձեռնոցիկը կրծքին կա-

պած, լիք բաժակը բարձրացնելով): Օբչի կամպանիա, լսեցէք:
Հի՛րճ. Հրամայիր, հրամայիր, աղա թամադա:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Բաժակներդ լիք-լիք տեսնեմ:

Հի՛րճ. (Չուսումնուած են, շատուած են իրանց բաժակ-
ները լցնելով): Պատրաստ ենք, պատրաստ ենք:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Խաչեղբայր, ալլահվերդի:

ԽԱՉԵՂԲ. Խօսքդ շաքարով:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Խմենք թագաւոր թագուհու կենացը: Աղա
հափ, հափ, հափ հուռա՛ւ:

Հի՛րճ. Հափ, հափ, հափ հուռա՛ւ:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Հուռա՛ւ:

Հի՛րճ. Հուռա՛ւ, թագաւոր թագուհու կենացը: (Շա-
կերը մօտենում են Ռուստամին):

ՌՈՒՍ. (Ոսֆի է կանգնում եւ այ ու ձախ գլուխ ցախ):

ՍՈՒՍԱՆ. (Ոսֆի է կանգնում Սուսամբարի քեղադու-
րեակը եւ գլուխ ցախ կանանց):

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Երաժիշտների, հրաւայողաբար, մի ձեռք
կողմին կոթնած) Աղա, մի չարդահ անեցէք:

ՌՈՒՍ. (Միշտ մնալաւ) Մի՛նչ եւ որ չիմանամ ո՛վքեր
էին և ինչո՞ւ յարձակուեցին, չեմ հանգստանալ:

ԽԱՉԵՂԲ. Փողոցի լակոտներ էին, քո արեւը վկայ:
Հարբած շան օրի էին:

ՌՈՒՍ. Ես հանգիստ մարդ եմ, ոչ ոքի վնաս չեմ տա-
լիս: Բայց երբ ուզում են ինձ անպատուել, մոռանում եմ
ամէն բան, մի՛նչ անգամ հարադատ մօրս չեմ խնայիլ:

ԽԱՉԵՂԲ. Հանգստացիր, Ռուստամ, հանգստացիր, ի
սէր Աստուծո՛ւ Հիւրերը կարող են տխրել:

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Ոսֆի կանգնելով) Աղա Ռուստամ:

ՌՈՒՍ. (Սրախուելով) Հրամայիր, աղա թամադա:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Ալլահվերդին քեզ մօտ:

ՌՈՒՍ. Ծառայ եմ:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Խաչեղբօր կենացը:

ԽԱՉ. (Բաժակը ձեռքին ոսֆի է կանգնում եւ այ ու ձախ
գլուխ ցախ, բաժակը զարկելով Ռուստամի բաժակին):

ԵՐԱԺԻՇՏ. (Ասեմ մի կենաց խմելիս տուչ եմ նուագում):

ՍՈՒՍԱՆ. (Սուսանբարին) Աչքիցս չի հեռանում նրա երպարանքը:

ՍՈՒՍԱՄԲ. Կը հեռանայ, կը մոռանաս: Եթէ ես լինէի քո տեղը, այսուհետեւ նրա անունն էլ կը մոռանայի: Մարդդ քանի՜ գնում, այնքան դուր է գալիս ինձ: Իսկական տղամարդ է:

ՍՈՒՍԱՆ. Ձեմ կարող սիրել նրան, չեմ կարող:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ղասպադա, ալլահվերդին ինձ մօտ: Թագաւոր թագունու ծնողների կենացը: Հուռա՛, Սանամ խառնում: (Մօտենում է եւ բաժակը զարկում):

ՀԻԻՐ. Հուռա՛, հուռա՛: (Շատերը մօտենում եմ եւ բաժակ զարկում Սանամի հետ): Աչքդ լոյս, աչքդ լոյս:

ՍԱՆԱՄ. (Ոսֆի կանգնելով, աջ ու ձախ շնորհակալութիւն է անում):

ՍՈՒՍԱՄԲ. (Սուսանին) Քիչ լաց եղիր, բաւական է: Կը տեսնեն, ամօթ է:

ՍՈՒՍԱՆ. Աստուած, Աստուած, ինչո՞ւ ես ստեղծել կնիկ աստուած արարածը: Շունը, կատուն աւելի բաղդաւոր են քան նա:

ՍՈՒՍԱՄԲ. Քիչ խօսիր, մենք որ չլինէինք, տղամարդիկ միմիանց չէին ուտիլ: Թող այժմ կոտորուեն մեզ համար, հաւա նրանց:

ՍԵՐԳ. ԲէԳ. (Ոսֆի է կանգնում, քերանը սրբելով, բաժակը միշտ ձեռին):

ԵՐԱԺԻՇՏ. (Դադարում եմ նուագել):

ՀԻԻՐ. (Ուշադրութիւնները շարում եմ): Սուս, սուս:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ղասպադա, դա՛:

ՀԻԻՐ. (Մխմայել) Ձա՛:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ըզդարովի:

ՀԻԻՐ. Ըզդարովի:

ՍԵՐԳ. ԲէԳ. Նաչեղօ:

ՀԻԻՐ. Նաչեղօ:

ՍԵՐԳ. ԲէԳ. Դարաղօղօ:

ՀԻԻՐ. Դարաղօղօ:

ՍԵՐԳ. ԲէԳ. Սմբաթա:

ՀԻԻՐ. Սմբաթա:

ՍԵՐԳ. ԲէԳ. Բարխուդարիչա:

ՀԻԻՐ. Բարխուդարիչա:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ղօնդախսաղովա:

ՀԻԻՐ. Ղօնդախսաղովա:

ՍԵՐԳ. ԲէԳ. Օն-ժէ:

ՀԻԻՐ. Օն-ժէ:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ղօնդախսաղիանցա:

ՀԻԻՐ. Ղօնդախսաղիանցա:

ՍԵՐԳ. ԲէԳ. Վիպիօմ:

ՀԻԻՐ. Վիպիօմ:

ՍԵՐԳ. ԲէԳ. Հուռա՛:

ՀԻԻՐ. Հուռա՛:

ՇՊՊԱՆԻԿ. Հողս քեզ նման թամաղի դլխին: Օն-ժէ, մօնժէ, պիպիօմ, միպիօմ: Իսկի իմ կենացը չեմ խմում: Այսօրուայ հարսանիքը ես եմ սարքել:

ՍԵՐԳ. ԲէԳ. Ղասպադա, էքստրա: Զաղդարովիի նաչեղօ դարանդիդի Շպպանիկ:

ՀԻԻՐ. Հուռա՛:

ՄԻ ՔԱՆԻ ՀԻԻՐ. Թող պար գայ, թող պար գայ, պար եմք ուղղում:

ՄԻ ՀԻԻՐ. Առանց շօքօշի, առանց շօքօշի:

ՇՊՊԱՆ. (Վեր է կենում անձեռնոցիկը վզին զցելով, երաժիշկներին): Զուժումի ածեցէք:

ՀԻԻՐ. Զուժումի:

ԵՐԱԺԻՇՏ. (Նուագում եմ մի սարսիկակ եղանակ):

ՇՊՊԱՆ. (Պարում է երկու ռուպի ջափ): Մափ տուէք, (Հիւրերը ծափ եմ տալիս): Հա ջան, հա ջան: (Մօտենում է մերք Ռուսսանին, մերք Սուսանին): Բօյիդ մատաղ, ջանիդ դուրբան:

ՍԵՐԳ. ԲէԳ. Աֆարիմ:

ՀԻԻՐ. Մաչալլա, մաչալլա:

ՇՊՊԱՆ. (Դադարում է պարել, նստում է յոզնած): Պարե՛, ա՛յ ջամահաթ, ոսկորներս էլ են պարում:

ՍՈՒՍԱՆ. (Սուսանքարին): Ճշմարիտ է, որ Աստուած ինքնասպաններին առանց դատ ու դատաստանի է դժոխք ուղարկում:

ՍՈՒՍԱՄԲ. Այդպիսի բաների մասին խօսելու ժամանակը չէ:

ՍՈՒՍԱՆ. Դէ, ասա, մի՛ տանջիր:

ՍՈՒՍԱՄԲ. Այո՛, ճշմարիտ է:

ՍՈՒՍԱՆ. Ուրեմն ինքնասպաններին փրկութիւն չկայ միւս աշխարհում:

ՍՈՒՍԱՄԲ. Չկայ:

ՍՈՒՍԱՆ. Թէկուզ անմեղ լինին:

ՍՈՒՍԱՄԲ. Թէկուզ եկեղեցի չինած լինին:

ՍՈՒՍ. (Երեսին խաչակնկելով): Մեղա՛յ քեզ, Տէ՛ր:

ՀԻԻՐԵՐ. (Կերել կշացել են: Զուարճանում են: Շատերը հարթել են):

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Երածիշներին): Աղա, մին սադահ զարուրած եցէք: (Երածիշները նուագում են):

ՍՈՒՍԱՄԲ. (Խաչկորոր): Շատ են երկարացնում: Ես համբերութիւն չունիմ: Չար կասկածն ընկել է սիրտս, կրժողում է:

ԽԱՉԿՈՐ. Համբերիր, համբերիր:

ՍՈՒՍ. (Սուսանքարին տանջւմ): Օ՛հ, չոգ է, չոգ է, ես խեղդում եմ:

ՍՈՒՍԱՄԲ. (Սուսանին հետքորդելով): Սի՛րտ առ, արիացիր, խնայիր ծնողներին:

ՍՈՒՍ. (Դատը հեզկութեամբ): Ծնողները՞: Ո՛չ: Սուսամբար, ես միայն մօրս եմ խղճում, միայն մօրս:

ՈՒՌՍ. (Խաչկոր): Ղերջացնելու են, թէ չէ՞

ԽԱՉԿՈՐ. Իսկոյն: (Ոսֆի ե կանգնում): Պարոններ՛ր, աղա թամազայի կենացը:

ՀԻԻՐ. Շուտ է, չուտ, չենք ուղում:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Սիւանս: Ոչ ոք իրաւունք չունի ինձ կարգ ու կանոն սովորեցնելու. ես խանի Պողոսանց տանն եմ թամազա եղել: Խաչեղբայր, բաժակդ լցրու, շարրաֆ խմիր:

ՀԻԻՐ. (Խարնգ բաժակները լցնելով): Շարրաֆ, շարրաֆ: **ԽԱՉ.** Հնազանդուում եմ: (Մի բաժակ գինի ե դասարկում):

ՍԵՐԳ. ԲԷԳ. Սիւանս: Ես պար դալ եմ ուղում:

ՀԻԻՐ. Աֆարիմ, աֆարիմ, մաշալլա, մաշալլա:

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Ընդհանուր աղմուկի մեջ ոսֆի ե կանգնում մի ձեռնի շիշը, միւսում բաժակը: Երածիշներին): Աղա, թրինդի ածեցէք: (Երածիշները նուագում են: Սերգեյ Բեգը պարում ե երկու ռուսի չափ):

ՀԻԻՐ. (Ունակ ծափ են տալիս, ունակ ջրբնա են զարկում, իսկ մի երկուսը դանակներով ներդաշնակօրէն զարկում են շիշերին: Պե՛ս ե այս բոլորի մեջ պահպանել որոշ ներդաշնակութիւն):

ՍԵՐԳ. ԲԷԳ. (Դադարելով պարել, յոգնած, ֆրիկելը սրբելով, նստում ե սեղը եւ խկոյն ոսֆի եղում): Ղասպաղա:

ՀԻԻՐ. Մի լաւ կենաց, մի լաւ կենաց, ծարաւ ենք:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Սիւանս, Ղասպաղա, էքստրենիյ: Զա՛:

ՀԻԻՐ. Զա:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Ըզդարովի:

ՀԻԻՐ. Ըզդարովի:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Նաշեղօ:

ՀԻԻՐԵՐ. Նաշեղօ:

Ս. Բ. Օբչչի:

Հ. Օբչչի:

Ս. Բ. Կամպանի:

Հ. Կամպանի:

Ս. Բ. Հափ:

Հ. Հափ:

Ս. Բ. Հափ:

Հ. Հափ:

Ս. Բ. Հափ:

Հ. Հափ:

Ս. Բ. Հուռա՛:

Հ. Հուռա՛:

Ս. Բ. Հուռա՛:

Հ. Հուռա՛:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Հուռա՛:

ՀԻԻՐԵՐ. Հուռա՛: Ապրի մեր թամադան, ապրի մեր թամադան:

Ա. ՀԻԻՐ. ([Տղամարդ] հարքեղ է, ոսֆի է կանգնում երեւոյն): Ես ճառ եմ ուղղում ասել:

ՇՊՊԱՆ. Հաստ գլխիդ տուած, լօլի լօլի ես անում կանգնած տեղդ, նստիր:

Ա. ՀԻԻՐ. (Տղամարդ) Ճառ:

ՀԻԻՐ. Յետոյ: (Հարսածին նսեցնում են):

ԵՐԱԺԻՇՏ. (Շարունակում են մեղմ եղանակ նուագել):

Բ. ՀԻԻՐ. ([Տղամարդ] հարքեղ է, ոսֆի է կանգնում երեւոյն): Ես ուղղում եմ մուսամբադ ասել: (Մեծ էր կարմրակապոյս ֆիքը ցցում է օղի մեջ):

ՇՊՊԱՆ. Հը, դու էիր պակաս քո բաղբման քթով: Նստիր տեղդ, տընդըլ պուպուղ:

ՀԻԻՐ. (Նսեցնում է Բ. հիւրին): Նստի՛ր, նստի՛ր:

ՍՈՒՍ. (Սուսամբարին): Քանի՛ դրանք ուրախանում են, այնքան ես տխրում: Սուսամբար, Սուսամբար, ինձ մի վատ բան է պատահելու, կը տեսնես:

ՍՈՒՍԱՄԲ. Ա՛հ, հոգիս բերանս բերեցիր քո ախ ու վախով:

ՌՌԻՍՏ. (Խաչեղբորը): Աշխատիր, որ շուտ գնան այդ մարդիկ:

ԽԱՉ. Իսկոյն, իսկոյն:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Ղափաղա, մէկ էլ խմենք թագաւոր թագունու կենացը և ասենք. «Աստուած չորհաւոր անէ»:

ՀԻԻՐ. Ամէն ամէն: Թագաւոր թագունու կենացը, հուռա՛:

Ա. ՀԻԻՐ. ([Տղամարդ] երգելով): Մեր թամադան հարբած է, հարբած է:

ՀԻԻՐ. Սուս, Սուս:

ՍԵՐԳ. ԲԷԳ. Ես վերջացրի:

ԽԱՉ. (Ոսֆի եղբորը): Աղա թամադայի կենացը:

ՌՌԻՍՏ. (Ոսֆի կանգնելով): Սերգէյ բէգ, շատ չորհաւոր եմ, շատ:

ՀԻԻՐ. Հուռա՛, աղա թամադայի կենացը: (Վեր են կենում):

ՌՏՆԱԻՌՆԵՐ. (Առագ առագ սեղանները փաշում են պատերի շակ եւ քեւը շայնացնում):

Բ. ՀԻԻՐ. ([Տղամարդ] Երաժիշտներին): Ղայթաղի ածեցէք: ԵՐԱԺԻՇՏ. (Ղեզգու պարերգ են նուագում):

ՀԻԻՐԵՐ. (Երկու սեղից հերթով պարում են):

ՍՈՒՍ. (Սուսամբարի օգնութեամբ փաշում է մի անկիւն, սակայն միջ առանձնեմի մօտ): Էդուց կը գնա՞մ մօրս տեսնելու:

ՍՈՒՍԱՄԲ. Անպատճառ: Բան ունի՞ս ասելու:

ՍՈՒՍ. Համբուրբիր նրան, սիրտ տուր, ասա, որ ուրախ եմ, բաղդաւոր:

ՍՈՒՍԱՄԲ. Եւ շուտով հօրս էլ կ'ուրախացնեմ, չէ՞:

ՍՈՒՍ. Այո, այո, Սուսամբար, թող հանգիստ լինի. ես անմեղ եմ: Յետոյ կուգա՞մ ինձ մօտ: Մենակ մի թողնիր ինձ, Սուսամբար, ես կարող եմ խելագարուել:

ՍՈՒՍԱՄԲ. Չեմ թողնիլ, մի վախենար: Բայց երեսդ սկեսրիդ տխուր ցոյց չտաս: Վաղը չէ միւս օրը կըգամ քեզ տեսութեան: Դէ, մնաս բարով: (Համբուրում է եւ այց կողմի դռների մօտ ստանալով յարշույլ պատանուց, գնում է խորֆի դռներով):

ՀԻԻՐ. (Պարերը վերջացնելուց յետոյ, սխտում են ցրուել: Կանանցից ոմանի համբուրում են Սուսանին, մի ֆանի պատառ կանայք հետաքրքրուած քարտուցում են Սուսանի ֆոդը: Ոմանի հիսնում են նրա գեղեկութեամբ, ոմանի դժգոհութեամբ նշաններ են անում: Տղամարդիկ սեղմում են Ռուսսանի ձեռք):

ՍՄԲ. (Մօտենում է Սուսանին եւ հետք համբուրում):

ՍՈՒՍ. (Փաքաքում է Սմբատի պարանոցին եւ դառնալով հեկեկում):

ՍՄԲ. Լաւ, Սուսան, երեխայ մի լինիր, սիրտ առ, դու բաղդաւոր ես:

ՍՈՒՍ. Ոչինչ, ոչինչ, Մամային չասես, որ լաց եղայ:

ՇՊՊԱՆ. (Մօտենում է Սուսանին Սանաւի հետ) Աղջիկ, լաց լինելս ո՞րն է: Էէ, չէ, դա չսաղեց այսօրուայ օրին:

Բոյիդ Շապանիկը ժատաղ: (Համբարում է. Սուսանին) Դէօ-
զալների դէօզալ, խանութների խաթուն, տես ի՞նչ տուն եմ
բերել քեզ: Խանի Պողոսի աղջիկն էլ այսպիսի տուն չի տե-
սել: Դէհ, մնաց բարով, աչքիս լոյս: (Սուսանին) Էդուց կը
գամ: Խալաթս պատրաստիր: (Գնում է խորհի դուներով, պա-
րելով եւ ջրմա գտնելով):

ՌՈՒՍՏ. (Փող է տալիս երաժիշկներին եւ Սմբատին ու-
ղեկում է, նրա հետ դուռն օղակ խորհի դուներով):

ՄԻ ԽՈՒՄԲ ՀԻԻՐԵՐ. (Երաժիշկներին պատուիրում են
նուագելով դուռն օղակ եւ նրանց հետ խորհի դուներով):

ԵՐԱԺԻՇՏ. (Այդ խալի հետ դուռն են գալիս խորհի դուներ-
ով, նուագելով: Բաւական երկար ժամանակ շուրս է նուագա-
ծուքիւնը, կտակ կտակ քուլանալով):

ՍՍՆԱՄ. (Սուսանին) Դէ, գնանք բալաս, հանգստացիր:
(Տանում է աջ կողմի դուներով):

ՏԵՍԻԼ 5.

Բեմի վրայ մնում են առաջին, երկրորդ եւ երրորդ

ողամարդ հիւրերը

Գ. ՀԻԻՐ. Գնանք, մենք ենք միայն մնացել:

Ա. ՀԻԻՐ. (Հարթած) Ես էլի ուղղում եմ կոնծել:

Բ. ՀԻԻՐ. Ես էլ, էյ, գինի բերէք: Բայց այստեղ ոչ
ոք չկայ:

Գ. ՀԻԻՐ. Դրսումն են քէֆ անում, գնանք:

Ա. ՀԻԻՐ. (Բարձր) Դինի:

Գ. ՀԻԻՐ. Մի քիչ էլ խմէք, լեզուներդ է՛լ աւելի կը
բացուի ստեր փչելու համար:

Բ. ՀԻԻՐ. Սո՛ւտ: (Բռնացիւ բարձրացնելով) էյ, ես
սուտ ասող չեմ: Ուղղում էր հարսին ձեռքից խլել ու փախ-
ցնել:

ՏԵՍԻԼ 6.

Նոյճի եւ Ռուսամ

ՌՈՒՍՏ. (Ներս է գալիս խորհի դուներով, կրծից վերցնում

է կանաչ կարմիր ժապաւենները, խնամքով ծաղում է մի կողմ
դնում: Ուշացած հիւրերին տեսնելով, կանկուն է մօտեցալ,
բայց շտապ Բ. հիւրի վերջին խօսքերը, կանգ է առնում եւ ա-
կանջ դնում):

Ա. ՀԻԻՐ. Ես քեզ ասում եմ բանը պրծած է, դու էլ
ասա. «հա պրծած է»:

Գ. ՀԻԻՐ. Եթէ այդպէս լինէր, աղջկան կը տային Սէյ-
րանին:

Ա. ՀԻԻՐ. (Ծիծաղում է): Հը, հը, հը, յիմար ես, յի-
մար: Եթէ Սէյրանին տային, ամէնքը պիտի ասէին «կոտորած
ամանը կոտորողի վզին կապեցին»:

Բ. ՀԻԻՐ. Իսկ հիմա խայտառակութիւնը պարտկել են,
ա՛յ քեզ տանձի կոթ:

Գ. ՀԻԻՐ. Իմ կարճ խելքով այդ բոլորը սուտ է, զուր
բամբասանք:

Ա. ՀԻԻՐ. Գլուխդ դատարկ է, այ ինչ կ'ասեմ քեզ:
Երեք օրից յետոյ կը տեսնես Ռուստամի սիրուսի՞ֆաթը:

ՌՈՒՍՏ. (Յնչում է եւ դողում յուզմունքից): Տէ՛ր, մե-
ղայ քեզ Աստուած:

Գ. ՀԻԻՐ. (Նկատել է Ռուստամին. ընկերներին կանաչում):
Սուս, նա այստեղ է: (Բարձր): Գնանք:

Բ. ՀԻԻՐ. (Սեղաններին նայելով): Դինի չբերեցի՞ն:

ՌՈՒՍՏ. (Առաջ է գալիս): Համեցէք, նստեցէք, ես կը
բերեմ գինի: (Չայնը դողում է յուզմունքից):

Ա. ՀԻԻՐ. Չէ, առանց երաժիշտների համ չունի: Աստ-
ուած չնորհաւոր անէ: Հարիֆ ես, Ռուստամ աղա, հարիֆ:
Բարի գիշեր: (Գնում է խորհի դուներով):

Գ. Ե Բ. ՀԻԻՐ. Բարի գիշեր: (Գնում են խորհի դուներ-
ով):

ՏԵՍԻԼ 7.

Ռուսամ եւ Սանամ

ՌՈՒՍՏ. (Ուշացած հիւրերին ուղեկցելով մինչեւ խորհի
դուները, յետ է գալիս շիրտուած, աչքաշուած: Չնոր յենում է սե-

դանին, մի քանի վայրկեան մնաժողով, սպա արագ փախչելով մօ-
տենում է աջ կողմի դռան եւ դէպի միւս սենեակ: Մայրիկ:

ՍԱՆՍՄ. (Բեմի ետեւից): Այստեղ եմ: (Ուրախ դիմելով գա-
լիս է աջ կողմի դռներով): Ի՞նչ հարս է, ի՞նչ հարս: Մարալ
է, մարալ: Ի՞նչ ես ուզում, բոյիդ մատաղ է:

ՌՈՒՍՏ. Ո՞ւմն ես բերել իմ տունը:

ՍԱՆՍՄ. (Զնայականաւոր Ռուսսանի տեսարանով, ու-
րախ): Հարս եմ բերել, մատաղ լինիմ, հարս: Ահ, վերջա-
պէս, Աստուած լսեց աղօթքներս եւ իղձս կատարեց: Հիմա
ես քաղաքացի եմ:

ՌՈՒՍՏ. (Զայր քարճացնելով): Ես քեզ հարցնում եմ.
ո՞ւմ ես բերել իմ տունը:

ՍԱՆ. (Շփոթուելով): Այսինքն ինչպէ՞ս թէ ում:

ՌՈՒՍՏ. (Աւելի խիստ եղբայրով): Ո՞վ է մտել իմ ա-
ռաստաղի տակ, ասա՛:

ՍԱՆՍՄ. Ղօնդաղսազանց Բարխուդարի աղջիկը: Պար-
կեշտ, խոնարհ, պատուով, նամուսով Գիւլնաղի մինիկ
աղջիկը:

ՌՈՒՍՏ. Դու լա՞ւ ես ճանաչում այդ աղջկան:

ՍԱՆ. Եթէ ծառը պտուղից է ճանաչում, պտուղն էլ
ծառից է ճանաչում:

ՌՈՒՍՏ. (Տանջւալով): Փտած է, մայր, փտած է այդ
պտուղը:

ՍԱՆ. (Երկիւղից մի փայլ յետ կանգնելով): Ի՞նչ ես ասում,
որդի՛, լաւ կշռիր խօսքերդ:

ՌՈՒՍՏ. Այս բոլորին այստեղ երեք հոգի խօսում էին
նրա մասին: Ես մի քանի խօսքեր լսեցի, ասեղների պէս
ցցուեցին սրտիս մէջ: Մայր, դու ինձ խաբել ես:

ՍԱՆ. Սուս, սուս արա: Ես քեզ համար հարս եմ բե-
րել, որ ձիւնի պէս ձերմակ է, արեւի պէս պայծառ:

ՌՈՒՍՏ. Բայց նրա մասին էին խօսում, մայր, ական-
ջովս լսեցի:

ՍԱՆ. Ի՞նչ էին ասում:

ՌՈՒՍՏ. Զեմ կարող ասել, լեզուս չի դօրում, բայց լաւ
բան չէին ասում, մայր, լաւ բան չէին ասում:

ՍԱՆ. Թող ինչ ուզում են գուրս տան, մե՞զ ինչ: Զար
լեզուները ո՞ւմ չեն բամբասում:

ՌՈՒՍՏ. (Տանջւալով): Բայց ես ո՞ւմ հաւատամ, ասա,
ո՞ւմ:

ՍԱՆ. Բո՛ւ մօրը:

ՌՈՒՍՏ. Դու խելօք կին ես, մայր, այդ գիտեմ, բայց
դիւրահաւան ես, քեզ խաբելը դժուար չէ:

ՍԱՆ. Հարցրու Շապանիկին, նա ամէն տուն մտնում
է: Նա մեր քաղաքի բոլոր աղջիկներին ճանաչում է:

ՌՈՒՍՏ. Այդ շունը հինգ մանէթի համար իւր հոգին կը
ծախի սաղայէլին:

ՍԱՆ. (Դատը կշաւքաւով): Մեղք մի՛ գործիր, որդի,
լաւ չէ:

ՌՈՒՍՏ. Ես քեզ ասում եմ հարսդ մի արատ ունէ:

ՍԱՆ. (Վճռական եւ համարձակ): Ի՞նչ արատ, ասա էլի:

ՌՈՒՍՏ. Ես ի՞նչ գիտեմ: Տասնեօթ տարի է ես այս
քաղաքից հեռացել եմ: Ո՞ւմ եմ ճանաչում. ոչ ոքի: Մայր,
դու պիտի զգոյշ լինէիր, չատ զգոյշ:

ՍԱՆ. Ռուստամ, ես աղջիկների մէջ աղջիկ եմ ջոկել
քեզ համար, որ մեր քաղաքի գոհարներից մէկն է: Աղքատ
բայց պատուաւոր ընտանիքից: Հարցրու ո՞ւմ ուզում ես
Ղօնդաղսազանց Բարխուդարի մասին: Կ'իմանաս թէ ի՞նչ
մարդ է նա: Նրա նման աղնիւ, նրա նման նամուսով մի
ուրիշը չկայ այս քաղաքում:

ՌՈՒՍՏ. Ես հաւատում եմ քեզ, մայր, բայց լսիր, ես
իմ կեանքի մեծ մասը Դադստանումն եմ անցկացրել, չէ՛նչն-
ների, դադի ղմուխցիների, աւարցիների մէջ: Ես լեզգի եմ:
Լեզգին կարող է ամէն բան տանել, բացի անպատուութիւն-
ներից: Ես իմ նամուսի գերին եմ, մայր, ես չեմ կարող տա-
նել ոչ մի արատ ինձ վրայ: Առա, ո՞վքեր էին իմ հարսա-
նիքի վրայ յարձակուողները:

ՍԱՆ. Ես ի՞նչ գիտեմ, որդի, անտեղ էի՞, որ իմանամ:

ՌՈՒՍՏ. Բայց ինչո՞ւ յարձակուեցին, ի՞նչ էին ուզում:

ՍԱՆՍՄ. Հանգստացիր, որդի, հանգստացիր: Էդուց

բանը կը պարզուի, կ'իմանանք: Երեւի, փողոցային լազոտներ էին: Քիչ կան մեր քաղաքում,

ՌՈՒՍՏ. Ո՛չ, մայր, ո՛չ, այստեղ մի բան կայ, որ ամէնքը գիտեն, բացի ինձանից: Դու էլ գիտես, դու էլ, և թագնում ես ինձանից: Լսիր, մայր: (Բռնում է նրա ձեռքը և կարող եմ մարդ սպանել: (Բաց է թողնում Սաւանի ձեռքը և հեռանում):

ՍԱՆ. Աստուծո սիրոյն, խելքդ գլուխդ հաւաքիր: Ես քո մայրն եմ, օտար չեմ: Ծնողն իւր զաւակի թշնամին չի կարող լինիլ, այն էլ միտիկ զաւակի:

ՌՈՒՍՏ. Ո՛չ, ո՛չ, համբերել չեմ կարող: Ես պէտք է հէնց այս գիշեր իմանամ ամէն բան: (Ուզում է գնալ աջ դռներով):

ՍԱՆՍՄ. Ո՞րտեղ ես գնում:

ՌՈՒՍՏ. Գնում եմ նրա հետ խօսելու:

ՍԱՆՍՄ. (Դրական, խիստ) Զի կարելի:

ՌՈՒՍՏ. Ինչո՞ւ: (Ուզում է գնալ):

ՍԱՆՍՄ. (Անցնում է արագ և կանգնում աջ դռնի առջև պաշտպանողական դիրքում): Զի կարելի, ասում եմ, նա դեռ պատրաստ չէ քեզ հետ խօսելու:

ՌՈՒՍՏ. Մայր, այժմ ես նրա ամուսինն եմ օրէնքով:

ՍԱՆՍՄ. Ոչ, դու դեռ նրա ամուսինը չես: Անկարելի է: Դու նրա կը տեսնես հարսանիքիդ երրորդ գիշերը: Դա մեր պապերի և տատերի աւանդութիւնն է: Ես քեզ չեմ թողնիլ նրան ոտնատակ անել:

ՌՈՒՍՏ. (Յուսահատ) Անիծուեն ձեր օրէնքները, անիծուեն ձեր աւանդութիւնները: Երեք օր պէտք է սպասեմ, մինչ որ նրանից լսեմ ճշմարտութիւնը, ես կը խելադարուեմ:

ՍԱՆՍՄ. (Հանդարտ մտնում է Ռուսսանի, մի քանի վայրկեան լուռ նայելուց յետոյ, ձեռքը դնում է նրա ուսին): Տեսնում ես այս ճերմակ մազերը, որդի, (ձուրթի սակից դուրս է բերում աղիաւոր գիսակը): Նրանք քեզ համար են ճերմակել: Աչքս ճանապարհիդ ջուր է կտրել, եկեղեցիների չէմ

քերն եմ մաշել, սրբերի դերեղմաններին եմ քսել ճակատս: Աղերսել եմ երկնաւորին այսօրուայ օրին արժանանալու, վերջապէս արժանացել եմ: Ի՞նչ ես ուզում հիմա, սեւացրե՞նք օրս: Մի՛ արա, որդի, մի արա, խեղճ եմ: (Մինքսանցի գրպանից դուրս է բերում քաշկիմակը և աջիւրը արքուն, Ռուսսանից հեռանալով):

ՌՈՒՍՏ. (Արմուզը սեղանին յենած, հսկասք ձեռին դրած, շուրջ է, մտազբառ: Քիչ լուրջ: Զոյում է իւր կոպտաքեան մտայն): Ների՛ր, մայր, ես մի փոքր չափն անցայ: Ո՛վ գիտէ, կարելի է այդ մարդկանց խօսակցութիւնը սխալ հասկացայ, կարելի է ուրիշի մասին էին խօսում: Օ՛, երանի այդպէս լինէր: (Վեր է կենում) Լաւ, - ես կը հպատակուեմ ձեր աւանդութիւններին, կը սպասեմ երեք օր, միաստամներովս կը կրծոտեմ, կը սպասեմ: (Յանկարծ նորից ուզուելով) Բայց վայ ինձ, եթէ իմ հարսն այն չէ, ինչ որ դու ես ասում, վա՛յ այն ժամանակ:

ՍԱՆՍՄ. Թող վայր գայ մօրդ գլխին, եթէ քեզ խաբել եմ: Համբերիր և կը տեսնես:

ՌՈՒՍՏ. Գնա՛, մայր, գնա նրա մօտ: Թո՛ղ ինձ մենակ:

ՍԱՆՍՄ. Ո՛վ կարող էր ասել, որ ուրախ օրս սգով պիտի վերջացնեմ: (Աջիւրը արքուն, հանդարտ փայլելով՝ դնում է աջ կողմի դռներով):

ՌՈՒՍՏ. (Նայում է Սաւանի ետեւից, ուսերը ստիպում սակով շարժում, հստացում և, նստելով արքունի վրայ, ընկնում մտածմունքների մեջ):

ԱՐԱՐՈՒԿ ԵՐՐՈՐԳ

ՍԷՅՐԱՆԻ ՎՐԷԺԸ

Ռուստամի խանութը Թէյմուր-Խան Շուրա քաղաքում։ Բեմը ցած միջնորմով բաժնուած է երկու մասի։ Այդ միջնորմը, խորքից սկսելով, հասնում է մինչև բեմի կէսը, այնպէս, որ չի խանգարում տեսարանի միութիւնը։ Աջ կողմը ներկայացնում է բուն խանութը, լի ամէն տեսակ ապրանքներով, սկսած մահուդեղէնից մինչև ուտելիքներ և ըմպելիքներ։ Աջ պատի վրայ չինացի դարակները ծանրաբեռնուած են տոյգ ապրանքներով։ Նոյնն է և պատի առջևի «ղայտոյկան», որի վրայ խառն ի խուռն դարսած են ապրանքներ։ Խորքում, դէպի աջ, մի մեծ ապակեայ ցուցափեղկ, որի ապակեայ դարակների վրայ դարսած են գոյնըգոյն ըմպելիքներով լիքը շիշեր։ Այդ ցուցափեղկի քով, դէպի ձախ, մի դուռը, որ տանում է դէպի փողոց։ Ձախ կողմը բեմի ներկայացնում է կէս գինետուն։ Մէջտեղ մի կլոր սեղան առանց ծածկացի, քովը մի քանի նստարաններ։ Ձախ պատի մէջ դուռը, որ տանում է դէպի Ռուստամի նընջարանը և խոհանոց։ Նոյն պատի վրայ, դէպի խորքը, կախած է տեղական գորգ, որի վրայ քարշ են արած մի սև եափընջի, մի լեզգու սպիտակ շուլլայի երկայն մազերով, մի գոյգ աօրճանակ, կեռ, արծաթապատ կոթերով, մի չափամախ երկայն հրացան։ Խորքի պատի մէջ մի լուսամուտ փակ փեղկերով։ Այդ լուսամտի միջով անցկացրած է մէջտեղ վառուող երկաթեայ վառարանի ծխնելոյզը պէպի փողոց։ Բեմը լուսավորւում է երկու հնաձեւ լամպարներով, որոնցից մէկը կախուած է առաստաղից հիւրասենեակ-գինետան մէջ, միւսը խանութում։ Բացի դրանցից երկու չարժեքեղ լամպարներ, մէկը գաստոյկայի, միւսը կլոր սեղանի վրայ։ Չաստոյկայի վրայ եռացող սամովար, վրէն թէյածան։ Ծննդեան երեկոյ է։

ՏԵՍԻԼ 1.

Համբարձում, յետոյ Զաւադ և Ռուսամ

ՀԱՄԲԱՐԶՈՒՄ. (Խանութի գործակաւսար, որ միեւնոյն ժամանակ էլ ծառայի պաշտօն է կատարում։ Բասնունիկը սարեկան երիտասարդ է սափրած երեսով և կարճ խուզած մազերով։ Հագած է երկայն արխալուդ, փրէն կապած է շաւ քարակ կաշուէ գօշի, որի ծայրը հասնում է մինչև ծնկերը։ Ոսկերի Պաշուսանի ջուսեր։ Վարագոյրը քարձրակալիս՝ զասոյկայի մօտ կանգնած՝ ձուկ է կոտորում և շահուրներին անցկացնում խորովելու։ Հանդարտ ձայնով երգում է պարսկական եղանակով)։

Դադ, ինձի որսացին,

Շամփրի վրայ խորովեցին.

Դադ, ինձի լափեցին,

Ոսկորներս ձգեցին։

ԶԱԽԱԴ. (Ներս է մտնում խորքի դուռերով, երբ Համբարձումը դադարեց է երգել։ Երեսունիկը սարեկան տղամարդ է երկայն ու լայն միւրումով, քաւ ունեւորով։ Հագնուած է այնպես, ինչպես բուն լեզգի։ Գլխին սև շուշանի, ուսերին եափեցի, որի սակից երկայն չուխա և գրեթէ նոյն երկայնութեամբ արխալուդ, ոսկերի ջուսեր և կրկնալոյշիներ։ Մեջքին կապած է չուխայի սակից հասարակ դաշոյն։ Խօսում է անփրդով, ձեւերն ու շարժումները ծանրաբարոյ և հպարտ են։ Եափեցին ծածկուած է ձիւնով)։ Ծնորհաւոր ծնունդ Բրիստոսի։ (Համբարձումին նընջարտ է ասելու։ Եափեցին վերցնում է ուսերից, ձիւնը քափ է ասելու դրան մօտ և բերում կախ է անում միջնորմի վրայ խանութի կողմից, կրկնալոյշիները բողբոս է անկիւնում)։

ՀԱՄԲ. Օրհնեալ է ծնունդ Բրիստոսի։ (Կրօնական երկիւղածութեամբ նընջարտը բերանն է դնում)։

ԶԱԽԱԴ. Ո՛վ կայ։

ՀԱՄԲ. Մենակ է։ Զի՛ւն է գալիս։

ԶԱԽԱԴ. Բուք է սկսում։

ՀԱՄԲ. Իսկ և իսկ Ծննդեան երեկոյ է։

ՌՈՒՍՏ. (Գալիս է ձախ կողմի դուռով։ Հագած է սև ոչ երկայն արխալուդ, փրէն դեղնագոյն չուխա ուղիքի քրդից։ Գլխա-

բաց է: Մոայլ դիմէր պարգունէ է: Ուրախ ու գուարթ): **Ջաւադ:**
ՋԱԻԱՒ. Շնորհաւոր ծնունդ Քրիստոսի: (Նշխարք է
 սաղիս):

ՌՈՒՍՏ. (Նշխարքը քերանը դնելով) Օրհնեալ ծնունդ
 Քրիստոսի:

ՋԱԻԱՒ. Ինչու եկեղեցում չէիր: (Անցնում է միջնորմի
 միւս կողմը եւ նստում սեղանի քով):

ՌՈՒՍՏ. Ղազի-Ղմուխից մի քանի ծանօթ լեզգիներ էին
 եկել ապրանք առնելու, չկարողացայ գալ: Այ տղայ Համ-
 բարձում, չայ բեր:

ՋԱԻԱՒ. Ի՞նչ լուր ունիս մեր քանդուածից:

ՌՈՒՍՏ. Հէնց այս րոպէին մօրս նամակն էի կարդում:
 Էլի մի թեթեւ երկրաշարժ է եղել (Նստում է):

ՋԱԻԱՒ. Անիծուին այդ երկրաշարժները, որ մեզ օտար
 երկիրներ գցեցին:

ՀԱՄԲ. (Բերում է երկու բաժակ քեյ եւ դնում կրօ սե-
 դանի վրայ):

ՌՈՒՍՏ. Քանի տարի՞ է չես եղել հայրենիքում:

ՋԱԻԱՒ. Առաջիկայ Ձատկին տաս տարին կը լրանայ:
 (Թեյ է խմում):

ՌՈՒՍՏ. Ձե՞ս կարօտել: (Թեյ է խմում):

ՋԱԻԱՒ. Ո՞վ ունիմ այնտեղ, որ կարօտեմ:

ՌՈՒՍՏ. (Հտուսեցելով) Ա՛հ, եթէ թեւեր ունենայի, այս
 րոպէին կը թռչէի այնտեղ:

ՋԱԻԱՒ. Այդպէս չո՞ւտ: Երեք ամիս չկայ այնտեղից
 գալի:

ՌՈՒՍՏ. Այո, բայց այժմ այդ երեք ամիսը ինձ երեք
 տարուց ծանր է թւում:

ՋԱԻԱՒ. (Ննկալիս խորհրդաւորաբար) Այժմ: (Բարե-
 կամար) Հասկանում եմ, բարեկամ:

ՌՈՒՍՏ. (Լուրջ) Մի ծաղրիր, Ջաւադ, դու պսակուած
 չես, գո՞ւար թէ հասկանաս ի՞նչքան քաղցր է ընտանիքը:
 Գործերս չթողին, որ այս ջրօրհնէքն այնտեղ անցկացնեմ,
 բայց Ձատկին անպատճառ գնալու եմ:

ՋԱԻԱՒ. Որ այդպէս կարօտում ես, բեր ընտանիքդ
 այստեղ:

ՌՈՒՍՏ. Մայրս չի ուզում գալ, իսկ նրան չեմ կարող
 մենակ թողնել:

ՋԱԻԱՒ. Այդ պառաւները իրանց հայրենիքի աւերակ-
 ներն էլ են պաշտում:

ՌՈՒՍՏ. Այն օրից, որ պսակուել եմ, ինձ համար էլ
 սիրելի են դարձել այդ աւերակները:

ՋԱԻԱՒ. Ահա թէ ի՞նչ:

ՌՈՒՍՏ. (Ոգեւորուելով) Ես կարող եմ ասել, Ջաւադ,
 որ չկայ կեանք առանց ընտանիքի, չկայ ապրուստ առանց կնոջ:

ՋԱԻԱՒ. Տեսնում եմ, տեսնում եմ: Առաջ դու անխօս,
 մօռլ մարդ էիր, այժմ բիւրբիւլ ես դարձել: (Հտուսեցելով)
 Երանի՛ քեզ:

ՌՈՒՍՏ. Պսակուիր, Ջաւադ, պսակուիր, ընտանիքը
 քաղցր բան է:

ՋԱԻԱՒ. Այո, քաղցր է, բայց չար մարդիկ այդ սըր-
 բութիւնն էլ են ապականում:

ՌՈՒՍՏ. (Յուզուելով): Ահ, մի՛ յիշեցնիր ինձ այդ, Ջա-
 ւադ, մի յիշեցնիր: Ես իմ քաջած տանջանքները քեզ պատ-
 մել եմ: Այդ երեք օրը ինձ թւում էր, որ աշխարհը զլխիս
 խաւարուեց:

ՋԱԻԱՒ. Ի՞նչ երեխայութիւն էր քո կողմից ուշադրու-
 թիւն դարձնել կեղտոտ ու հարբած մարդկանց բարբաջանք-
 ներին:

ՌՈՒՍՏ. Եւ ո՞ւմ էին զրպարտում, Աստուած իմ, Սու-
 սանին, իւր նամուսի դերի Բարխուդարի աղջկան: Մարդ
 պէտք է հոգի չուենայ այնպիսի մի անմեղ հրեշտակի վրայ
 կեղտ գցելու համար: Ի՛հ, Տէրը նրանց հետ, հարբած էին,
 իրանք էլ չգիտէին ի՞նչ էին խօսում: Այժմ ես հաւատում եմ
 իմ կնոջը: Հաւատում եմ ինչպէս մի սրբի եւ սիրում: Այժմ
 ինձ ոչ ոք եւ ոչինչ չի կարող խաբել: Այ տղայ, Համբարձում,
 էլի չայ բեր: (Ծխում է ծխախոտ երկայն եղեղնայ մուկոշուկով):
ՋԱԻԱՒ. Ես էլ չեմ ուզում:

ՌՈՒՍՏ. (Նայելով իւր գրպանի ժամացոյցին): Ինչո՞ւ են ուշանում մեր հայրենակիցները: Ես քաղցած եմ: Չուկը դիր կրակի վրայ, Համբարձում:

ՀԱՄԲ. Էս սհաթին (Չուկ անցկացրած շանիւրները վերջնում է եւ զնում ձախ կողմի դռներով):

ՏԵՍԻՆ 2.

Նոյնք եւ Մարտիրոս

ՄԱՐՏԻՐՈՍ. (Գալիս է խորքի դռով: Նիւար, փոքրահասակ մարդ է անորոշ տարիքով: Վրէն այնքան հագուստ կայ, որ երեք անգամ անելի հաս է երեւում: Ներս մեկնելով, դռնը խընամփով ծածկում է, սպաս ետինջին վերցնում, ձիւնը քափ է տալիս եւ հանդարտ քաշ է անում միջնորմի վրայ): Բարով ձեզ:

ՌՈՒՍՏ. (Լսելով դրան ձայնը, սուս է եկել Մարտիրոսին ընդունելու) Աստուծո բարին:

ՄԱՐՏ. Դրսում մի արհաւիրք է սկսուել, որ գաղանը գաղանութիւնով տնից դուրս չի գալ: (Հանում է հաս մաշկեայ ձեռնոցները, սպաս խիստ մաշուած լայն վերարկուն, այնուհետեւ մի լայն ջուխա, յետոյ բաշշողը): Ձիւնը կարկտի պէս է զարկում մարդու երեսին: Մարմինս փետացել է: (Սկսում է բաց անել վզին փաքաքած երկայն կարմիր շարֆը): Ասացի զքեզ՝ աղա Ռուստամի մօտ՝ վայ է, չգնամ՝ վայ է: Եթէ գնամ կարող եմ մրսել, առանց այն էլ զիւքեամ ունիմ: (Երեք անգամ հագում է): Իսկ եթէ չգնամ, աղա Ռուստամը կարող է նեղանալ: (Բաց է անում երկրորդ ջուխայի վրայ կապած հաս ստուկայ գոջին):

ՋԱԽԱԴ. Հէր օրհնած, էլ դուքանու՞մք հին փալաս մալաս չկա՞ր, որ վրէժ թափէիր:

ՄԱՐՏ. (Ուշադրութիւն չդարձնելով Ջախի խօսքերին) Երկու մեծ կրակի մէջ էի: (Բաց է անում մի երկրորդ գոջի, սպաս հանում է քաղիփեայ լայն կրկնաթոշիկները, որոնց սակից ուրիշ կոշիկներ) Նստեցի, մտածեցի, վերջն ինքս ինձ ասացի. «Գնալու եմ. ինչ որ լինելու է թող լինի»: Եւ եկայ: (Վերջին քաղի փէ երեւան է գալիս կարճ արխաշողով, կարճ պիջակով, սեւ փուրշիկով մի նիւար, փորը մեջքին կպած մարդ):

ՌՈՒՍՏ. Շատ ուրախ եմ: Մի բաժակ չային ի՞նչ կ'առես:

ՄԱՐՏ. (Մօշկալով վստահակ, ձեռները սափացնում է): Վատ չէր լինիլ:

ՌՈՒՍՏ. Կօնեակո՞վ:

ՄԱՐՏ. (Սարսափած): Ենովան փրկէ ինձ: Ես վաղուց եմ ձեռք քաշել դժոխքի ջրերից: (Նստւում է սեղանի խով, կանխապէս սեղնելով Ռուստամի եւ Ջախի ձեռք):

ՌՈՒՍՏ. (Մի բաժակ թեյ է ածում եւ դնում Մարտիրոսի սուսը):

ՄԱՐՏ. (Ջախիին): Եղբայր Ջաւադ, ինչո՞ւ է մեզ կանչել եղբայր Ռուստամը այս դարհուրելի գիշերին:

ՋԱԽԱԴ. Կանչել է, որ այս ազիզ երեկոն միասին անցկացնենք: Չէ՞ որ Ծննդեան երեկոյ է:

ՄԱՐՏ. (Ջերմասկողի): Գիտեմ, գիտեմ: Այս երեկոյ մարդոյ որդին ծնուել է Բէթղեհէմում, ախոսի մէջ: (Դեպի վեր նայելով): Տէ՛ր:

ՋԱԽԱԴ. (Առաջարկելով մի կտոր լոշխար): Ա՛ն, պասոք բաց արա:

ՄԱՐՏ. Ենովան ների քեզ, եղբայր Ջաւադ, մի՞թէ ես պաս եմ պահում:

ՋԱԽԱԴ. (Նշխարֆը դնելով իւր թերակը): Ա՛խ, ես միշտ մոռանում եմ, որ դու լիւթերական ես:

ՄԱՐՏ. Նշխարքն ես այն ժամանակ էի ուտում, երբ հեթանոս էի և երեսո խաչակնքում էի: Այժմ, գոհութիւն երկնաւորին, ես հաւատացեալ քրիստոնեայ եմ: Բայց Յիսուսի ծնունդը մենք էլ ենք տօնում. միայն աղօթքով, աղօթքով: (Ձեռներն իրարու կցելով, գոլիսը հեղուքեալ թէփում է դեպի մեջք, աչքերը ուղղում է դեպի երկինք): Աստուած, Աստուած, դու քո մինիկ որդուն վերցրիր, ուղարկեցիր, այս փչացած ախարիւր, որ մեզ ազատի գեհնից: Նա եկաւ մեր մեղքերը հաւաքեց, մի մեծ տողրակի մէջ ածեց, վերցրեց, տարաւ դժոխքը թափեց: Մենք աղատուեցինք, բայց հեթանոսները, փարիսեցիները և սադուկեցիները նրան տանջեցին, խաչ հանեցին, ոտները ծակեցին, նա մեռաւ,

Թաղուեց, երեք օրից յետոյ յարուժիւն առաւ, նստեց հրեշտակների թեւերի վրայ, բարձրացաւ երկինք, կողքիդ նստեց: Թող օրհնուի նրա անունը: Ամէն: (Երեսին չի խաշակնում): Այսպէս ենք մենք սօնում Աստծու տօները: (Սկսում ե քեյ խմել երանելի դիմելով):

Տ Ե Ս Ի Լ Յ.

Նոյն, Զահանգիր եւ Եզրու

ՋԱՀԱՆԳ. (Գալիս ե խորի դուռով: Հագած ե ոչխարի մորթուց մուշակ, վրէն սեւ չուխա, սակից կարմ արխաղուդ: Չուխայի վրայից ետինցի: Գլխին դրած ե կոտ, ցած գդակ, որ ծածկում ե բաշխողով: Ետինցին եւ բաշխողը վերցնելով, քափ ե սալիս: Կարմիր դիմելով, ստող, գուարք տղանարդ ե մի քիչ հաստ փորով: Երեսը ստիւրած ե, քնիւնը ողորած): Մեռայ, ձեր արեւը, մեռայ: Զիւն չէ, փոթորիկ է:

ԵԳՈՌ. (Գալիս ե Զահանգիրի հետ խորի դուռով: Հագնւած ե ալնպիս, ինչպիս Զաւարդ: Բաշխողը եւ ետինցին քափ ե սալիս եւ քիչ ե ակում միջնորմի վրայ: Գեղեցիկ դիմելով երիտասարդ ե քանուկիկ սարեկան): Քամին Շահագողից է փչում: Բարի երեկոյ դարդիմանդներին: (Առաջ ե գալիս խոշոր քայլերով, ձեռ ե սալիս ու նստում):

ՋԱՀԱՆԳ. Օհօ, եղբայր Մարտիրոս, դու էլ այստեղ ես: Ի՞նչ է ասում Եհովան: (Ձեռ գարկում ե Մարտիրոսի ուսին):

ՄԱՐՏ. Կամաց, չայս թափեցիր:

ՌՈՒՍ. Էլ ոչ ոքի չեմ սպասում, դուռը կարելի է կողպել: (Փակում ե խորի դուռը եւ նիզը ցոցում):

ԵԳՈՌ. Եթէ այս երեկոյ էլ գինի չխմես, եղբայր Մարտիրոս, գլխիդ եմ ամելու:

ՄԱՐՏ. Սատանայի ջուրը իմ փորը չի մտնիլ:

ՋԱՀԱՆԳ. Բայց ինչո՞ւ քարեջուր խմում ես, անիրաւ:

ՄԱՐՏ. Գարեջուրը գինի չէ: Սարգիս վարպետն ասում է, որ մեր հաւատացեալ եղբայրները Բագելում գարեջուր են խմում: (Նայելով փակ յուսակին): Կարծեմ այդտեղից քամի է փչում. ականջս պաղեց: (Տեղը փոխում ե):

ՌՈՒՍ. (Այ կողմից քերում ե մի կապոյտ ափոց եւ գրքում սեղանի վրայ): Համբարձում, փաւը դամի դրել ես:

ՀԱՄԲ. (Այդ միջոցին գալիս ե ձախ դուռով): Դրել եմ:

ՌՈՒՍ. Նորովածը բեր, եթէ պատրաստ է:

ՀԱՄԲ. Աչքիս վրայ: (Գնում ե աջ կողմ, զանազան ուսեղեղներ ե քերում, դնում ե սեղանի վրայ: Քերում ե նաեւ երկու կուշա գինի եւ մի քանի կաւ գաւաթներ, յետոյ գնում ե ձախ կողմի դուռով):

ՄԱՐՏ. (Համբարձումի ետեւից): Տես, խորովածը հում չլինի, կարող է վնասել:

ՌՈՒՍ. (Մարտիրոսի ստեղծ դնելով մի շիշ գարեջուր եւ մի քաժակ) Այս էլ քո Բագելի հաւատացեալ եղբայրների խմիչքը, գարեջուր: (Աւելիք նստում եւ սեղանի շուրջը):

ԵԳՈՌ. (Մի քաժակ օղի խմելով) Ափսոս որ սաղանդարներ չկան:

ՌՈՒՍ. Համբարձումին ուղարկեցի, չկարողացաւ գտնել:

ՄԱՐՏ. Սաղանդան սատանան է հնարել, որ մեզ չեղի Աստծու ճանապարհից: Յիսուսի աշակերտները սաղանդաչուն էին:

ՋԱՀԱՆԳ. Եթէ Յիսուսի անունը շատ ես տալու, ես վեր կենամ կորչեմ: (Օղի ե խմում):

ՄԱՐՏ. (Աչքերը հեղուքեալք ուղղելով դեպի վեր, ձեռներն իրար կցելով): Ով Աստուած, ներիր այս հեթանոսին, որովհետեւ չի հասկանում թէ ի՞նչ է ասում: Նա չգիտէ, որ ճշմարիտ քրիստոնեան պարտաւոր է ամէն օր, ամէն ժամ, ամէն դաղդա ի տուրջեան ե ի գիշերի յիշել քո սուրբ անունը ե աղօթել, Ներիր, Տէր, ներիր: Ամէն: (Գարեջուր ե խմում):

ՀԱՄԲ. (Ձախ կողմի դուռից քերում ե մի շանիւր խորոված ձուկ եւ քանում ե Ռուսսի ստեղծ):

ՌՈՒՍ. (Չուր շանիւրից հանում ե մի մեծ ափսի մեջ եւ դնում սեղանի վրայ):

ՋԱՀԱՆԳ. (Մի քաժակ գինի ամելով): Տղերք, Շնորհաւոր Մանուկ Բրիտանի:

ՄԱՐՏ. Եւ Յիսուսի, որդոյ մարդոյ:

ԱՄԷՆՔԸ. Օրհնեալ ծնունդ Բրիստոսի: (Գաւաթները զարկում են իրար եւ խմում):

ՋԱՀԱՆԳ. Եղբայր Մարտիրոս, մի Շամախու չիքեաստա ասա: (Ձուկ հ ուտում):

ՄԱՐՏ. Յիսուսի աշակերտները չիքեաստա միքեաստա չէին ասում:

ԵԳՈՌ. Բայց դու առաջ ասում էիր. ես չատ եմ լսել:

ՄԱՐՏ. Առաջ ես հեթանոս էի: (Ձուկ հ ուտում):

ՋԱԽԱԴ. Այսինքն, հայ լուսաւորչական:

ՋԱՀԱՆԳ. Այդ անիրաւը լուսաւորչականներին հեթանոս է անուանում: (Ձուկ հ ուտում):

ՋԱԽԱԴ. Տղերք, գաւաթներդ լեցրէք:

ՋԱՀԱՆԳ. (Իւր գաւաթը լեցնելով): Պատրաստ եմ ծառայելու:

ՋԱԽԱԴ. Խմենք մեր անբաղդ քաղաքի կենացը:

ԱՄԷՆՔԸ. Խմենք, խմենք:

ՋԱԽԱԴ. Աստուած տայ, որ վերջապէս, նրա հաղը հանդարտուի, քարը քարի վրայ մնայ:

ԱՄԷՆՔԸ. Ամէն, ամէն:

ՄԱՐՏ. Մինչեւ որ բոլոր հեթանոսները Յիսուսի Աւետարանը չընդունեն, մեր քաղաքը միշտ տակն ու վրայ է լինելու: (Աջերը վեր ուղղելով): Տէր, կարծում եմ, որ քո սիրած խօսքն ասացի:

ՋԱՀԱՆԳ. Եղբայր Մարտիրոս, չլինի թէ քեզ այս կողմերի համար փաստոր են նշանակել:

ԵԳՈՌ. Երեւի: Գլուխս տարել է իւր քարոզներով: Շարունակ յորդորում է ինձ աւետարանական դառնալ:

ՄԱՐՏ. Մեր պարտասանութիւնն ի տուրջեան եւ ի զիչերի աշխատել մոլորեալ ոչխարներին ճանապարհի բերելու: (Գաւաթները խմում):

ՋԱԽԱԴ. (Նորից լեցնելով իւր գաւաթը): Տղերք, խմենք մեր դարդիմանդ ընկերոջ կենացը: Ռուստամ, ապրես եւ լաւ ապրես: (Բաժակը զարկելով Ռուստամի բաժակին, խմում է):

ԱՄԷՆՔԸ. Ամէն, ամէն: (Անում են նոյնը):

ՄԱՐՏ. Աբրահամի եւ Իսահակի Նհովան քեզ պահի պահպանի մեղքերից:

ՌՈՒՍՏ. Շնորհակալ եմ, բարեկամներս: Շատ ուրախ եմ, որ հրաւերս ընդունեցիք, եկաք: Կարօտել էի: Օտար երկրում մարդու հոգին փառաւորում է իւր հայրենակիցներին տեսնելիս: Ձեր կենացը:

ԵԳՈՌ. Տղերք, այսօր ես բազարում մի նոր շամախեցի տեսայ:

ՋԱՀԱՆԳ. Ո՞վ էր:

ԵԳՈՌ. Չճանաչեցի: Մեր հարեւան լեզգի Օսմանից ատրճանակ էր գնում: Ջահել տղայ էր, բարձրահասակ, բարակ բարակ բեղերով, գեղնած երեսով:

ԴՐՍԻՑ. (Երկու անգամ զարկում են փողոցի կողմի դուռը):

ՀԱՄԲ. (Գալիս է ձախ կողմի դռնից, բերելով երկու շամփուր խորոված ձուկ):

ՋԱԽԱԴ. Կարծես, դուռը ծեծեցին:

ՌՈՒՍՏ. (Շանփուրներն առնելով Համբարձումից) Տես՞վ է:

ԵԳՈՌ. Ո՞վ պիտի լինի այս սարսափելի եղանակին:

ԴՐՍԻՑ. (Նորից երկու անգամ զարկում են դուռը):

ՋԱՀԱՆԳ. Համբարձում, առաջ հարցրու, յետոյ ներս թող:

ԵԳՈՌ. (Ծիծաղելով): Ջահանգիրն էլի ցոյց տուեց իր քաջութիւնը:

ՋԱՀԱՆԳ. Անցեալ տարի մի այսպիսի գիշեր լեզգիները տասներկու հոգով մտան Ղարաբաղցի Ղահրմանի դուքանը, իրան էլ սպանեցին, եղբօրն էլ, ծառաներին էլ, ապրանքն էլ թալանեցին:

ՄԱՐՏ. Զդուշութիւնը լաւ բան է:

ԴՐՍԻՑ. (Երրորդ անգամ զարկում են դուռը):

ՀԱՄԲ. (Մօտեցել է խորհի դռան): Ո՞վ ես:

ՌՈՒՍՏ. Բաց արա, ով որ է:

ՀԱՄԲ. (Դուռը բաց է անում: Քամին ուժգին քափով եկն է խուժում, բերելով ձիւնի կոյտեր):

ՄԱՐՏ. Ես կարող եմ մրսել: (Վերադառնալով գոյն է ունենում):

ՅԵՍԻՒ, 4.

Նոյնք եւ Սէյրան

ՍԷՅՐԱՆ. (Ներսէս եւ մեկնում ետեւում մեջ փառաբանած, գրուիս ու երեսը բաշխողով ծածկած):

ՌՈՒՍՏ. (Վեր ե կացել հիւրին ընդունելու): Ո՞վ ես, բարեկամ:

ՍԷՅՐԱՆ. Աստուծո՛ւ հիւրը:

ՌՈՒՍՏ. Աչքիս վրայ տեղ ունի ամէն մի հիւր:

ԱՄԷՆՔԸ. (Ոսֆի եւ կանգնում եւ նայում նորեկին):

ՍԷՅՐԱՆ. Ղարիբ եմ, մի տեղ կուտաս ինձ:

ՌՈՒՍՏ. (Սիրալիւ): Ղարիբներէ համար իմ գոնեքը միշտ բաց են: Համբարձում, վերցրու զարիւրի ետեւում:

ՍԷՅՐ. Ձի հարկաւոր: (Ինքը վերցնում եւ ետեւում եւ, առանց ձիւնը քափ տալու, շարժում եւ մի անկիւն: Երեսը բաց եւ անում):

ՌՈՒՍՏ. (Նայում ե Սէյրանին, չի նայում, միշտ սիրալիւ): Առաջ եկ, նստիր, պատգ բաց արա, եթէ հայ քրիստոնեայ ես:

ՍԷՅՐ. (Մօտենում ե սեղանին):

ԵԳՈՒ. (Նորեկին նայելու եւ մինչեւ Սէյրանի սեղանին մօտենալը): Տղերք, ձեր արեւը վիշապ, այսօրուայ իմ տեսած տղան է:

ՋԱԼԱԳ. (Հանգիստ նստելով իւր սեղը): Հինգ չլինիք, վեց չլինիք: Եկողը մեր գլխի վրայ տեղ ունի: Նստիր, Աստուծո՛ւ հիւր:

ՍԷՅՐ. (Առանց բաշխողը գլխից վերցնելու, բայց երեսը բաց, առը գրուիս ե տալիս անեկին եւ նստում սեղանի ծայրին, ձեռք չենելով դաշտին դասակին: Տխուր ե, գունատ: Աչքերը կարծրած են, բայց դեմքն արտաքին եւ մի անխափս վճիռ: Մինչեւ այժմ չի նայել Ռուստանին եւ աշխատում ե խոյս տալ նրա հայացքներին):

ՌՈՒՍՏ. (Հանգիստ նստում ե իւր սեղը): Այ տղայ, Համբարձում, մի գաւաթ բեր, գինի տուր: Փլաւը բեր:

ՄԱՐՏ. (Սէյրանին) Բամբին թո՛ւնդ է գրտում:

ՍԷՅՐ. Բամբի չկայ:

ՄԱՐՏ. Ինչպէս թէ չկայ: Ձե՛ս լսում ինչպէս է մոռնալում գայլի նման:

ՀԱՄԲ. (Երկու կուշա նոր գինի եւ մի գաւաթ սեղանում ե սեղանի վրայ: Ապա գնում ե ձախ կողմի դռնով եւ վերադառնում ե ձեռքին մի մեծ սկուտեղ փրաւ, որ դնում ե սեղանի վրայ):

ՍԷՅՐ. (Առանց Ռուստանին նայելու, նրա առաջարկած գինին արհամարհանելով մեծում ե): Արաղ տուէք ինձ:

ՋԱԼԱԳ. (Օղի ե ամում Սէյրանի համար): Համեցէք:

ՍԷՅՐ. (Մի կումով դասարկում ե օղու բաժակը): Կարելի՞ է մէկն էլ խնդրել:

ՋԱԼԱԳ. (Նորից օղի լեցնելով): Մէկն էլ կարելի է, տաճմէկն էլ:

ՋԱԼԱԳ. Մինչեւ կը հասնես մեր գրագուսին: (Փրաւ ե ամում իւր համար):

ՄԱՐՏ. Եւ յետոյ կը սկսես սատանաների հետ դայթաղի պարել: (Փրաւ ե ամում իւր անանի մեջ):

ՍԷՅՐ. (Մի կումով դասարկում ե օղու երկրորդ բաժակը): Ես սատանաների հետ չառ եմ պարել:

ՄԱՐՏ. (Ատաւախած) Տէ՛ր, մեղայ քեզ:

ՍԷՅՐ. (Դասարկ բաժակը բռնելով գաւաթի առջեւ): Մէկն էլ:

ՋԱԼԱԳ. Աչքիս վրայ: (Լեցնում ե նրա բաժակը):

ՋԱԼԱԳ. (Եզոտին): Տղան օրինաւոր կոնծում է:

ԵԳՈՒ. Աչքիս կաթկածելի է երեւում: (Փրաւ ե ուտում):

ՋԱԼԱԳ. (Սէյրանին) Խմելուց յետոյ բերանդ բան դիր, թէ չէ սիրտդ կը խառնի: (Դնում ե Սէյրանի առջեւ խորոված ձուկ):

ՍԷՅՐ. Ես քաղցած չեմ, ծարաւ եմ: Հիմա գինի տուր:

ՋԱԼԱԳ. (Գինի ե ամում Սէյրանի համար):

ՋԱԼԱԳ. (Սէյրանին) Ծիքեատաւայ ասել գիտես:

ՍԷՅՐ. (Կտուկ): Ես հոսկաբաղ չեմ: (Խմում ե):

ՄԱՐՏ. Լաւ ասաց:

ԵԳՈՒ. (Մեկուսի Ռուստանին): Օհօ՛, չառ թունդ է կոտորատում:

ՌՈՒՍՏ. (Սեյրանին): Համեցէք, փլաւ կեր:

ՍԷՅՐ. Ես իմ փլաւը կերել եմ վաղուց: Հիմի դո՛ւ կեր: (Երեսը դարձնում է Ռուսսանին):

ՌՈՒՍՏ. (Զգում է անսխորժութիւն, բայց զայրում է իրան, բաժակը բարձրացնելով) Բարեկամ, ո՛վ որ էլ որ ես, բարով հազար բարի ես եկել: Տղերք, խմենք մեր անծանօթ հիւրի կենացը: (Քիչ կում է անում եւ գաւաթը դնում սեղանի վրայ):

ՍՄԷՆՔԸ. Խմենք, խմենք: (Խնում են):

ՍԷՅՐ. (Զոր) Շնորհակալ եմ: (Խնում է մի գաւաթ գինի եւ գաւաթը շարժում յաստի վրայ) Եղի:

ՄԱՐՏ. Ճա՛նճ էր ընկել դաւաթի մէջ, հէ՛:

ՍԷՅՐԱՆ. Ուրիշ դաւաթ տուէք: (Նայում է Ռուսսանին գաղտնի):

ՀԱՄԲ. (Բերում է մի նոր գաւաթ եւ դնում Սեյրանի սոջեւ):

ԵԳՈՒ. (Մեկուսի, Ջաւադին): Այդ բանը ես չհաւանեցի, ի՞նչ կ'ասես:

ՋԱԽԱԴ. (Մեկուսի, Եգոռին): Թող դեռ տեսնենք:

ՌՈՒՍՏ. Գիշին ընտիր գիշի է, նոր եմ ստացել Սաղիանից:

ՍԷՅՐ. (Առանց Ռուսսանին նայելու) Լաւն է, շատ լաւն է. (Գաւաթը բռնելով Մարտիոսի սոջեւ): Էյ, ծիպլի ծատուր, գիշի ածա ինձ համար:

ՄԱՐՏ. (Վշտացած, կոմիսիակն շարժումով): Ի՞նչ, ծիպլի ծատուր, ի՞նչ ասել է ծիպլի ծատուր: (Սեղանակիցներին): Լսեցի՞ք:

ՋԱԽԱԴ. Ասածու հիւր, դա մեր ընկերն է ու բարեկամը: (Լեցնում է Սեյրանի գաւաթը գինով):

ՄԱՐՏ. Յիսուսի խոնարհ ծառայ, Ծրկըտանց Մարտիրոս է անունս: Ծիպլի ծատուրս որն է: Ես վաճառական եմ:

ՍԷՅՐ. Գիտեմ, դուք ամէնքդ վաճառականներ էք: Անում էի, ծախում, փող աշխատում, քէֆ անում եւ պատիւ տալիս այդ մարդուն: (Առանց նայելու ցոյց է տալիս Ռուսսանի կողմը: Խնում է):

ԵԳՈՒ. (Ջաւադին): Ես սխաւեմ եմ կատաղել:

ՋԱԽԱԴ. (Եգոռին): Համբերիր: (Նորից լեցնում է Սեյրանի գաւաթը գինով): Խմիր քեզ հիւրասիրողի կենացը: Ռուսսանի մեր պարծանքն է:

ՍԷՅՐ. Այո՞, պարծանքը: Լաւ, լաւ (Խնում է):

ՄԱՐՏ. (Տակաւին վրդովուած): Ձէ, ի՞նչ կ'ասէք, ա՞, ծիպլի ծատուր: Արիւնս խառնեց: (Գարեջուր է խնում):

ՋԱԽԱԴ. Բայց, բարեկամ, դու մեզ չասացիր թէ՛ ո՛ր տեղից ես եկել, ո՛վ ես:

ՍԷՅՐ. Մի վաղիր, կ'իմանաս:

ՌՈՒՍՏ. Ի՞նչ հարկաւոր է իմանալ ո՛վ է և որ տեղից է եկել: Բաւական է, որ ղարիբ է և հայ քրիստոնեայ: (Սեյրանին): Կեր, խմիր, բարեկամ. ինչպէս քո տանը: Դրանք լաւ տղերք են, աղին, պատուական ընկերներ:

ՄԱՐՏ. Բայց նա ինձ ծիպլի ծատուր անուանեց, թող ասի տեսնենք, ի՞նչն ուղի է:

ԵԳՈՒ. Այո, ե՛ս էլ ուզում եմ իմանալ ո՛վ է մեզ հետ սեղան նստել: (Յուզուած ձայնով Սեյրանին): Է՛յ, պարոն, անուշոյ ի՞նչ է:

ՍԷՅՐ. (Սառը, անուշադի): Սէյրան (Թեքեւ լուրջ):

ՍՄԷՆՔԸ. (Նայում են իրար):

ՍԷՅՐ. Ճանաչեցի՞ք:

ՋԱԽԱԴ. Շահարի Շիրվանում քառասուն Սէյրան կայ: Լեղարդ ասա:

ՍԷՅՐ. Կու՛ժ ու կու՛լա ծախող Հայրապետի տղայ Սէյրան: (Նայում է գաղտնի Ռուսսանին, որ ծեւեւ ի՛նչ սպառնալիկ գործեց նրա վրայ. նորից քեքեւ լուրջ):

ՌՈՒՍՏ. (Յնչում է): Դա նա է: (Զայրում է իրան):

ՍԷՅՐ. (Ամենին, որ միակնեց երեսին են նայում՝ բացի Ջաւադից): Էլի չճանաչեցի՞ք:

ՋԱԽԱԴ. Ես ճանաչեցի: (Ռուսսանին նշաններով խնդրում է չը շուրջնել):

ՋԱԽԱԴ. Հիմի եմ հասկանում, թէ ինչո՛ւ դաւաթը փչրեցիր. բրուտի որդին միայն աման կտարել կարող է սովորել:

ՍԷՅՐ. (Երկխոս): Ճշմարիտ ես ասում, ես աման կոտրող եմ:

ՄԱՐՏ. Թէև դու ինձ ծիպլի ծառուր անուանեցիր, բայց ես կ'ասեմ, որ քո հայրը հեթանոսների մէջ լաւ մարդ է: Նա մի ժամանակ ուղղում էր մեր սուրբ հաւատն ընդունել և Յիսուսի Քրիստոսի աշակերտ դրուել, ձեր հարեւան գերձակ Բարսուղարը չթողեց: Պէտք է ասած, աղա Ռուստամ, որ աներդ Աստծու գառներին թշնամի է: Նա մեզ չի սիրում: Թող Տէրը փրկէ նրան գեհենի կրակից: (Սեյրանին): Բայց դու չմոռանա, որ ինձ ծիպլի ծառուր ասացիր:

ՋԱԻԱԴ. Տղերք, գիշերն անցնում է, ժամանակ է Ռուստամին հանգիստ թողնելու: Գաւաթներդ լեցրէք (չեցնում են):

ՍԷՅՐ. (Լեցնում է իւր գաւարը ու խմոյն եւեթ դասարկում):

ՋԱԻԱԴ. (Սեյրանին): Լաւ ես կոնծում, խօսք չունիմ: Բայց, բարեկամ, մի քիչ սպասիր, բան ունիմ ասելու: (Ոսֆի է կանգնում): Տղերք, չնորհակալութիւն ասենք մեր դարդիմանդ ընկերոջն ու բարեկամին:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Շնորհակալութիւն, չնորհակալութիւն:

ՋԱԻԱԴ. Ռուստամ, Աստուած մի ուրախութիւնդ հաղար անի, հաղար հոգսերդ մի:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Ամէն, Ամէն:

ՋԱԻԱԴ. Ռուստամ, սեղանդ միշտ բաց լինի սրտիդ պէս, սիրտդ ուրախ՝ սեղանիդ պէս: Վատ օրդ այս լինի, լաւ օրիդ օր չհամար: Գործիդ յաջողութիւն, կեանքիդ երկարութիւն:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Ամէն, ամէն:

ՋԱԻԱԴ. (Ոգեւորուելով): Միշտ մեր պարծանքը լինիս քո նամուսով, քո պատուով, քո մեծ ու պստիկ ճանաչելով: Ռուստամ, դու Դադատանում ազնիւ ու քաջ մարդու անուն ես հանել, փառք ու պատիւ քեզ: Մենք հպարտանում ենք, որ ունինք քեզ նման հայրենակից և բարեկամ: Այսպէս է, չէ՞, տղերք:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Այդպէս է, այդպէս է:

ՋԱԻԱԴ. Մենք գիտենք, որ դու քո նամուսի համար առիւծ ես, բայց գիտենք որ դու մեծերի մօտ մեծ ես, պստիկների մօտ պստիկ, զօրաւորների դէմ զօրաւոր, անզօրների համար պաշտպան, որ ո՛չ գայլերից ես վախենում, ո՛չ գառներին ես արհամարհում: (Բարձր): Ապրի՛ մեր Ռուստամը: (Գաւարը դասարկում է):

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Ապրի՛, ապրի՛: (Գաւարները զարկում են Ռուստամի գաւարին եւ խնում):

ՄԱՐՏ. Թող Ենովայի օրհնութիւնը քեզ վրայ լինի: Ամէն: (Նայելով Սեյրանին կասողի հայեացքով): Ծիպլի ծառուր: ՋԱԻԱԴ. Դէ՛հ, տղերք, մէկ էլ լեցրէք բաժակներդ:

ԱՄԷՆՔԸ. (Լեցնում են գաւարները բացի Սեյրանից):

ՋԱԻԱԴ. Տղերք, ես այստեղ եկայ ամէնից առաջ: Եկայ ու Ռուստամին տեսայ ուրախ, զուարթ: Նա նոր իւր ընտանիքից նամակ էր ստացել: Նա ա՛յնքան ուրախ էր, որ տեսնէիք, չէիք ճանաչիլ: Է՛հ, բարեկամներ, մենք պսակուած չենք, հասկանալ չենք կարող ընտանիքի քաղցրութիւնը: Բայց մեր ընկերը, գոհութիւն Աստուծոյ, այդ քաղցրութիւնը վայելում է: Այսպէս է, թէ չէ:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Այդպէս է, այդպէս է:

ՋԱԻԱԴ. Դէ՛հ, խմենք, ուրեմն, Ռուստամի ընտանիքի կենացը: Տայ Աստուած, որ նա միշտ բաղդաւոր լինի, միշտ այնպէս ուրախ, ինչպէս ես տեսայ նրան այսօր:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից) Ռուստամ, ընտանիքիդ կենացը: (Գաւարները զարկում են Ռուստամի հետ եւ խնում):

ՋԱԻԱԴ. Մի բան էլ ասեմ, խօսքս վերջացնեմ: Հասկացող մարդիկ ասում են, որ ընտանիքն առանց դաւակնների բաղդաւոր չէ: Է՛հ, այս էլ խմենք և Աստծուց խնդրենք, որ նա մեր Ռուստամին շուտով պարգեւի իւր նման մի ղո՛չ տղայ:

ԱՄԷՆՔԸ. (Բացի Սեյրանից): Ամէն, ամէն, հուռա...

ՄԱՐՏ. Թիսուսը կը պարգեւի:

ՍԷՅՐ. (Միշտ նստած է, մինչ քոյրը կանգնած են: Խորհում է, շրթունքները կրծոնելով):

ԵԳՈՌ. (Շարունակ դիտել է Սեյրանին, բառախաղով զրգրուած): Էյ, դարձիւ, վե՛ր ես կենալու ոտքի, թէ չէ՞, խմե՛լո՛ւ ես այս կենացները, թէ չէ՞:

ՁԱՀԱՆ. Ղարիբ հարբել է, շարժուել չի կարող:

ԵԳՈՌ. (Մեկուսի Ջաւային): Սատանան ասում է դրա կողքը ծակիր: (Ջեղը սկսում է դաշոյնի դասակին):

ՁԱԻԱԳ. Համբերիր:

ՍԷՅՐ. (Քարձ): Էյ, ո՛վ է հարբած, ե՛ս: Տեսնենք: (Ոսքի է կանգնում, ուղղում իրան, մի հայեացք ձգում բոլորի վրայ եւ, զրոյսը բարձրացնելով, աջ ձեռքը սկսում դաշոյնի դասակին, ձախ ձեռքով զաւարը բարձրացնում): Թամաղա:

ՁԱԻԱԳ. Լսեցէք, լսեցէք, ղարիբն է խօսում:

ՍՄԷՆՔԸ. (Լարում են իրանց ուշադրութիւնը):

ՍԷՅՐ. Թամաղա, ինչպէս հրամայեցիր, ես էլ խմում եմ Ռուստամի կենացը: Ես էլ եմ ցանկանում նրան երկար կենալ, առողջութիւն, հարստութիւն, տուն-տեղ, բաղդու-ւորութիւն, ձեզ նման դարդիմանդ ընկերներ, այսպէս ուրախ ուրախ սեղաններ եւ ինձ նման անկողն հիւր:

ՁԱԻԱԳ. Ապրե՛ս բարեկամ, ապրես:

ՁԱՀԱՆ. Մարդը խօսել իմացել է:

ԵԳՈՌ. Թո՛ղ տեսնենք ի՛նչ է տեսնու:

ՄԱՐՏ. Բայց ես ծիպել ծատուրը չեմ ներել նրան:

ՌՈՒՍ. (Աւերոյ ժամանակ միեւնոյն դիտում կանգնած, շարունակ դիտում է Սեյրանին):

ՍԷՅՐ. Թամաղա, դու ասացիր, որ Ռուստամը ձեր պարծանքն է, որ նա Դադատանում աղնիւ մարդու ու քաջ տղամարդու անուն ունէ: Բայց դու այն էլ ասացիր, որ նա իւր նամուսի համար առիւծ է: Ես հարցնում եմ այդ մարդուն, ի՛նչ ասել է նամուս: (Դաւարը դիտում է սեյրանի վրայ եւ ձեռքը առնելով անուր մեղմում դաշոյնի դասակին: Ամենքը ստախախտակով նայում են նախ միմեանց, ապա Ռուստամին: Իսկոյն իւր հարցի պատասխանը չստանալով, ֆիշ լուռօրէն յետոյ): Հը՛, հարցնում եմ, ի՛նչ ասել է նամուս:

ՌՈՒՍ. (Յուզմունքով հագին զայն): Նամուսը դեռազ գիւղաների կերակուր չէ:

ՍԷՅՐ. (Դառն հեղձութեամբ): Աֆարիմ, աֆարիմ, իսկ եւ իսկ իմ ուղածն ասացիր: (Դաւարը բարձրացնելով): Թամաղա, ինչպէս հրամայեցիր, ես էլ եմ խնդրում Աստուծոյ, որ նա այդ մարդուն պարգեւի մի ղոչ տղայ: Ցանկանում եմ, որ այդ տղան լինի ա՛յնքան նամուսով, որքան ինքը: (Ծիծաղում է դառն ծիծաղով):

ՍՄԷՆՔԸ. (Բացի Ռուստամից): Շատ լաւ, շատ լաւ:

ՍԷՅՐ. Տայ Աստուած, որ տղան լինի հարազատ ծնունդ, որ նա աչքունքով, երես մերհտով նմանուի այդ մարդուն, որ ամէն մի տեսնող ասի, հա, դա Քոչարեանց Ռուստամի զաւակն է, իսկ եւ իսկ նրանն է, ուրիշինը չէ:

ՁԱԻԱԳ. (Լուրջ, խիստ): Յետո՛յ, յետո՛յ:

ՍԷՅՐԱՆ. Որովհետեւ, լսեցէք, որովհետեւ, անէ՛ծք չար սատանին:

ՁԱՀԱՆ. Որովհետեւ գինին գլխիդ չատ է զօռում:

ԵԳՈՌ. (Նորից զրգոյնով): Թողէք, թողէք, տեսնենք ի՛նչ է դուրս տալիս:

ՍԷՅՐ. Որովհետեւ հաստատ գիտեմ, որ Ռուստամի տղան կամ աղջիկը — Աստուծոն է յայտնի — նմանուելու է իւր իսկական հօրը:

ՁԱՀԱՆ. (Հեղձաբար): Բան ասաց. լաւ, տեղդ նստիր, դատարկապորտ:

ՌՈՒՍ. Իսկական հօրը: Ի՛նչ ես ուղղում ասել, տղայ:

ՍԷՅՐ. Հարիֆ ես, հասկացիր ինչ ասացի: Ա՛, եղի: (Առանց խելոյ զաւարը շարունակ է յասակի վրայ: Բնդանուր շփոթութիւն, յուզում: Լուրջութիւն մի քանի վայրկեան):

ՁԱԻԱԳ. Էյ, Ղարիբ, դու հարբած չես, դու խելագար ես:

ԵԳՈՌ. (Կասաղի): Ինչո՛ւ փշրեցիր զաւաթը:

ՍԷՅՐ. Փշրելով զաւաթը, ես փշրում եմ այն մարդու նամուսը, որին այդքան պատիւ էք տալիս:

ՌՈՒՍ. Լակո՛տ: (Կորցնելով ինքն իրան, ուզում է յարձակուել Սեյրանի վրայ, բայց նոյն վայրկեանին զայրում է իրան): Ոչ, ոչ, պէտք է լսել մի՛նչ եւ վերջը:

ԵԳՈՌ. Շուն, չան որդի: (Դաշոյնը մերկացնելով ուզում է զարկել):

ՁԱԽԱԴ. Գնա, կորիր այս տեղից, լիրբ:

ՌՈՒՍ. Կացէք: Ես չեմ թողնիլ այդ մարդու գլխի մի մագին անգամ դիպել: Նա իմ հիւրն է: Մենք մենակ մարդու վրայ յարձակուելը նամարդութիւն է: (Միանգամայն գայելով իրան, դառնում է Սեյրանին): Տղայ, ես քեզ չեմ ճանաչում: Անունդ լսել եմ, բայց քեզ առաջին անգամն եմ տեսնում: Դու եկար, դուստ ծեծեցիր, ես բաց արի: Առաջիկա Աստուծո հիւրն եմ: Ընդունեցի: Ասա, ինչո՞ւ համար ես եկել:

ՍԷՅՐ. (Տանցանկով): Նամուսի համար եմ եկել, նամարդ, նամուսի համար: Տանջանքն ու յուսահատութիւնն են ինձ բերել այստեղ: Սարեր ու ձորեր եմ անցել, անքուն գիշերներ եմ անցկացրել, անհուն տառապանքներ եմ քաշել, որ գամ եւ վերջապէս երեսիդ ասեմ այն, ինչ որ ասացի: Չհակացա՞ր, լաւ, աւելի պարզ կը խօսեմ: Ես մի տղայ էի, որին մայրերը մատով էին ցոյց տալիս: Ծնողներին միակ զաւակն էի: Ես ունէի մի հարսնացու, որ գոհար էր գոհարների մէջ: Նրա կեանքովն էի ապրում, նրա շնչովն էի շնչում ես: Դու նրան խլեցիր իմ ձեռքից: Խլեցիր, օգտուելով նրա գազան հօր խտուրթիւնից եւ քո հարստութիւնից: Դու ինձ անպատուեցիր, ստորացրիր: Այսօր իմ ընկերների երեսին մտիկ անել չեմ կարող: Նրանք ծաղրում են ինձ: Նրանք ինձ անուանում են աննամուս: Ծատ եմ մտածել, շատ եմ տանջուել հէնց այսօր, հէնց այս երեկոյ, մինչեւ որ վճռել եմ գալ այս տեղ, գալ եւ այս աղիւղ երեկոյ, հէնց քո ընկերների առաջ, վրէժս առնել: Դէ, ես իմն արի, արա դու էլ, ի՞նչ որ ուզում ես:

ՌՈՒՍ. Լակոտ, սուտ ես ասում: Իմ կիներ քո հարսնացուն չի եղել:

ՍԷՅՐ. Ամբողջ մեր փողոցը գիտէ: Վկայ են մեր բոլոր հարեւանները:

ՌՈՒՍ. Ես չեմ ուզում ճանաչել քո հարեւաններին: Սուտ ես խօսում, ասում եմ, սուտ է:

ՍԷՅՐԱՆ. Քո աներոջ Աւետարանի կողքին է գրուած:

ՌՈՒՍ. Դրուած է եւ ջնջուած: Լակոտ, ես ուրիշ պա-

տաւր գողացողներից չեմ: Դէ՛, էլ մի երկարացնիլ, չօքիր իմ առաջ, չօքիր եւ ներողութիւն խնդրիր, եթէ կեանքը թանգ է քեզ համար:

ՍԷՅՐ. Եթէ ես քեզ նման մարդուց վախենայի, այստեղ չէի գալ, աննամուս:

ՌՈՒՍ. (Վազում է դեպի ծախ պար, վերցնում է ֆաշ տրած դաշոյնը եւ յարձակում է Սեյրանի վրայ): Կտոր-կտոր պէտք է անել չուն չան ձագին,

ՁԱԽ. (Բռնում է Ռուսանին): Ես չեմ թողնիլ, որ ձեռներդ կեղտոտես:

ՁԱՆԱԳ. (Նոյնպէս բռնելով Ռուսանին): Թող գնայ կորչի լիրբ:

ՄԱՐՏ. (Ձեռներն իրար կցելով, աջիւրն ուղղում է դեպի վեր): Յիսո՛ւս, Յիսո՛ւս, ազատիր մեզ արիւնհեղութիւնից:

ՌՈՒՍ. (Աշխատելով ազատել Ձաւաղի եւ Ձահանգիրի ձեռներից): Թողէ՛ք ինձ, ես նրան չեմ սպանիլ: Ո՛չ, ո՛չ, նրան ուրիշ կերպ պիտի պատժել: Նա տղամարդ է, նա մեն միակ եկել է այստեղ վրէժ առնելու: Դադարտանում այդ պիտի թշնամու հետ կուռում են: Փոխեցէ՛ք յատակի վրայ մի ետինջի: Մենք կը կուռենք դաշոյններով: Եւ ով մեղանից ոտը ետինջուց դուրս դրեց, նա է աննամուսը, նա է վախկոտը: Դէ, չուտ փոխեցէ՛ք ետինջին:

ՍԷՅՐԱՆ. (Արագութեամբ իւր ետինջին փոխում է յասակի վրայ, մերկացրած դաշոյնը ձեռին): Համեցէ՛ք, ես պատրաստ եմ: Կնիկը մի մարդ պիտի ունենայ: Թող մէկն ու մէկը մեզին կորչի:

ՁԱԽԱԴ. (Մոնչարով): Կորիր, լիրբ, կորիր, ասում եմ: Վաղը ես քո հայիւր կը վերջացնեմ: (Ռուսանին, հազիւ պահելով նրան): Ես չեմ թողնիլ քեզ այդ շան հետ մի ետինջու վրայ կանգնել: Դա անպատուութիւն կը լինի:

ՄԱՐՏ. (Ձեռներն իրար կցելով): Ենովա, Ենովա, Աբրահամի եւ Իսահակի Աստուած:

ԵԴՈՒ. Ե՛ս կը կուռեմ նրա հետ ետինջու վրայ: (Ուզում է մեջեղ մտնել, դաշոյնը մերկացնելով):

ՌՌԻՍՏ. (ձիգ անկողնի ազատուել Ջաւադի եւ Ջահանգիրի ձեռներէից): Ո՛չ ոք, ոչ ոք, բացի ինձնից: Նա իմ ձեռքով պիտի պատժուի, միմիայն ի՛մ ձեռքով: (Կրծքսում ե իրան քոկող ձեռները): Ա՛ա՛, թողէք, ասում եմ, ես կը խելագարուեմ:

ՍէՅՐ. (Կասադի ծիծաղով): Հա, հա, հա, ինչպէ՛ս է կապուել: (Դաշոյնը դնում ե պսականի մէջ): Կատաղիւր, փըրփըրիւր, այրուիւր: Գո կնիկն առաջ իմն է եղել:

ՌՌԻՍՏ. (Շնչաւարտ): Ապացոյց, ապացոյց եմ ուզում:

ՍէՅՐ. (Կծու ծիծաղով): Հա, հա, հա, ապացոյց: Գնա, բաց արա կնոջդ կուրծքը ե տես խալը, սե խալը նրա աջ ծծի տակ: (Ետինքին արագ վերցնում ե եւ դուրս վազում խորքի դռնով: Բաւկին վզգալով միւսի կոյսեր ե քափում ներս: Աւեկնը աստապի մէջ են: Լոռքիւն):

ԵԳՈՌ. Նա դուրս եկաւ քո յարկի տակից, այժմ ես կարող եմ նրան սպանել: (Ետինքին վերցնելով, վազում ե փողոց):

ՀԱՄԲ. (Անբողջ տատաւի միջոցին կուշ եկած կանգնած ե մի անկիւնում: Շտապով ծածկում ե խորքի դուրը):

ՏԵՍԻՒ, 5.

Նոյնք, առանց Սէյրանի եւ Յգոռի

ՌՌԻՍՏ. Ի՞նչ առաց նա: Խալը, սե խալը կրծքի վրայ: Ա՛հ, ճաքեց սիրտս, կտոր կտոր եղաւ: Դէ, թողէք, դէ բաւական է, անիրաւներ, բաւական է: (Ազատում ե Ջաւադի եւ Ջահանգիրի ձեռներէից): Խալը, սե խալը: (Թուրացած նրսում ե արողի վրայ, դաշոյնը ընկնում ե ձեռքից):

ՋԱԻԱԴ. Զուր տուէք, ուշքը գնում է:

ՀԱՄԲ. (Շտապով ջուր ե մատուցանում):

ՌՌԻՍՏ. Ոչ, ուշքս վրէժ է: Գնդակներ են պտտում մարմնիս մէջ: (Զուրը մեծելով): Ոչ, ոչ, ես կնիկ չեմ, որ ուշաթափուիմ: Մ'ի վախենաք, չեմ մեռնիլ: Խալը, սե խալը: Համբարձում:

ՀԱՄԲ. Այստեղ եմ, աղա:

ՌՌԻՍՏ. Գնա, ձիւ թամբիր:

ՋԱԻԱԴ. Խելքի եկ, Ռուստամ, շունն սնդամ չի հաւատալ այդ լրբի խօսքերին:

ՋԱՀԱՆԳ. Եզոռը կը սպանի նրան:

ՄԱՐՏ. Եհովան կը պատժի նրան:

ՌՌԻՍՏ. Իսկոյն, խելոյն թամբիր ձիւ, առանց մի բոպէ ուշացնելու:

ՀԱՄԲ. Բուքը սաստկացել է, քամին ծառեր է պոկում արմատից:

ՌՌԻՍՏ. (Կասադի): Լսիր, շուն, ձիւն ասում եմ: (Վեր ե կենում):

ՀԱՄԲ. (Շտապով գնում ե մօտ կողմի դռնով):

ՋԱԻ. Բայց ի՞նչ ես ուզում անել:

ՌՌԻՍՏ. Լաւ խաբեցին, լաւ քանդեցին տունս, լաւ կեղտոտեցին երեսունութիւն տարուայ պատիւս: Ռուստամը մի լստած պատառ ուտող, Ռուստամը մի անառակ կնոջ մարդ: Ո՛վ խլից իմ գդակը զլխիցս: Մայր, մայր, ես այդ աղջկան չէի ճանաչում, ոչ էլ նրա ծնողներին: Ես ո՛չ ոքի չէի ճանաչում այդ անիծուած քաղաքում: Թամբիր ձիւ, Համբարձում, թամբիր, զուլխս ուսերիս վրայ չի կանգնում, բայց ես կը պահեմ նրան: Կը պահեմ, մինչեւ որ տեսնեմ այդ խալը: Ի՞նչ յիշարն եմ ես: Ի՞նչու երբեք չեմ նայել նրա կրծքին: Լաւ, շատ լաւ, հիմա կը տեսնեմք, կը ստուգենք: Թամբիր Համբարձում, թամբիր նժոյգս: Նա ինձ հինգ օրում կը տանի, տեղ կը հասցնի:

ՄԱՐՏ. Ամենակարող Աստուած, այս եղանակին

ՋԱԻ. Ամօթ է, Ռուստամ, խելքի եկ, կինդ անմեղ է:

ՋԱՀԱՆ. Ի հարկէ, անմեղ է:

ՌՌԻՍՏ. Լեցէք. գուք ինձ չթողիր, որ ես ժամանակին նրա լիզուն կարեմ, այժմ ուշ է: Ի՞նչ, անմեղ է: (Դաշոյնը ծիծաղ): Հա, հա, հա, ո՛վ կարող է հաստատել: Եթէ արբերի ետեւում, մի պառաւ կնոջ ձեռքին մէն մեռակ: Խաբեցին ինձ, Ջաւադ, շատ անաստուած խաբեցին: Կրծքի խալը, սե խալը: Ա՛հ, ինչո՞ւ ես թողուն չեմ, որ այս գիշեր հասնեմ այնտեղ: Բայց ոչինչ, իմ ձին լաւն է:

ՋԱՀԱՆ. Այս ուշ գիշերին, այդ զարհուրելի եղանակին:

ՄԱՐՏ. Քամին մոնչում է դայլի պէս: Դու Դաղըստանի ձորերու կը թաղուես ձիւնի տակ:

ՌՈՒՍ. Ինձ համար այսուհետև ո՛չ քամի կայ, ո՛չ ձիւն, ո՛չ Աստուած:

ՄԱՐՏ. (Սարսափած Ռուսաստանի վերջին խօսքերից): Յիսուս, Յիսուս, ի՞նչ ասաց նա:

ՌՈՒՍ. Ամէն ինչ խաւարուեց աչքումս: Ես աննամո՞ւս, իմ երեսան ուրիշի՞նք: Անիծուիս դու, Համբարձում, ինչո՞ւ ուշացար: Հա, պէտք է հազնուել: (Վերցնում է ձախ կողմի անկիւնում դրած երկար կոշիկները, հագնւում է, կապում է մեջքին դաշոյնը, հագնւում է վերարկուն, ուսերին գցում է եւսփընջին եւ գլխին դնում ապիսակ շուրջահին):

ՋԱԻ. Գոնէ սպասէիր մինչև առաւօտ, թող լոյսը բացուի:

ՌՈՒՍ. Լոյսը չի բացուելու. Ջաւադ, արեգակը խաւարեց: Լսեցէք, բարեկամներս, խանութս յանձնում եմ ձեզ: Ո՛վ գիտէ ինչ կարող է պատահել: Եթէ յետ չգամ, ծախսեցէք ամէն բան, գոյացած գումարը մօրս ուղարկեցէք:

ՀԱՄԲ. (Գալիս է ձախ կողմի դռնով): Ձին պատրաստ է:

ՌՈՒՍ. Դէհ, միացէք բարով. տղերք: Ի՞նչ արած Աստուած կամեցաւ, որ մեր ազիզ երեկոն այսպէս վերջանայ: Մնաք բարով:

ՋԱԻ. Գոնէ համբուրուենք (Համբուրում են): Բարի ճանապարհ: (Յուզում): Դեա, պէտք է գնալ:

ՋԱՀԱՆ. (Համբուրուելով): Փող ունի՞ս մօտդ:

ՌՈՒՍ. (Դրպանը շոշափելով): Բաւական է ինչ որ կայ:

Մնաս բարով, եղբայր Մարտիրոս: (Համբուրում է):

ՄԱՐՏ. Յիսուսի օրհնութիւնը լինի քո ընկերը: Տես, չմրսես:

ՌՈՒՍ. (Վերցնելով սրսից ֆաշ արած մսրակը, գնում է ձախ կողմի դռնով):

ՋԱԻ. } (Հետեւում են նրան):
ՀԱՄԲ. }

ՋԱՀԱՆ, Դու չե՞ս ուզում ճանապարհ դնել:

ՄԱՐՏ. Վախենում եմ դուրս գալ, կարող եմ մրսել:

ՋԱՀԱՆ. (Գնում է ձախ կողմի դռնով):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Մարտիրոս եւ Եզոս

ԵԳՈՌ. (Խորֆի դուռը բացում է սուկալի դորդիւնով: Քաւին աւելի է սասկացել: Երեսում է յոգնած եւ ուժասպառ):

ՄԱՐՏ. (Սարսափով): Սպանեցի՞ր:

ԵԳՈՌ. Դժբաղդաբար, ոչ: Գնաց, անյայտացաւ խաւարի ու բուքի մէջ:

ՄԱՐՏ. (Հստացելով): Գոհութիւն Աստծու: Թէ չէ ինձ էլ վկայ պիտի կանչէին: Դուռը ծածկիր: Վո՛ւո՛ւ, ի՞նչպէս է փչում, մարմինս զարգանդում է: (Քաւին դրսից սուրում է սասկիկ):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐՈՐ

Ռ Ո Ւ Ս Տ Ա Մ Ի Վ Ր Է Ժ Բ

Տեսարանը ներկայացնում է Ռուստամի բնակարանը Շամախում: Նոյն սենեակը, ինչ որ երկրորդ գործողութեան ժամանակ, նոյն կահ-կարասին, հարկաւ, բացի ճաշի սեղան-ներից: Պատերի առկա դրած են հնաձեւ ընկուղենու աթոռներ: Զախ պատի առջև դէպի աւանսեն, մի մեծ կլոր միտանի սեղան, առանց ծածկոցի: Աջ պատի առջև, լուսամուտների մօտ մի թախտ. պարսկական գորգով ծածկուած: Վառարան չկայ. նրա փոխարէն սենեակը տաքացնում է թախտից ոչ հեռու դրած մի մեծ երկաթեայ կրակարան (մանդալ)՝ փրէն մի երկաթեայ կրակափայլ (ռնեղի):

Տ Ե Ս Ի Լ 1.

Սանամ եւ Ծպպանիկ

ՍԱՆԱՄ. (Նսած է քախսի վրայ մի ոտը ծալած, միւսը ձգած: Ուրախ տրամադրութեան մեջ է: Զեռին բռնած է մի երկայն, հաստ ծխաւորձ կեռասի կարմրագոյն փայտից: Մեհաֆեսայ փակից վերցնում է ընկեր ծխախոս եւ շեցնում ծխաւորձի կառի կարմրագոյն գլուխը: Հագած է մեխակագոյն քաշեայ արխալուղ, եզերը ուլիթելով զարդարած, կապագոյն մեհաֆեսայ շապիկ, գունաւոր փոխան: Ոսկերին եւրոպական կոշիկներ): Անցեալ օրն ինքն ասաց:

ՇՊՊ. (Նսած է Սանամի դեմնդին ծաղապսիկ: Հագնուած է սւեյի հասարակ ֆան հարսանիքի երեկոյին: Ոսկերին սեւ ջուսեր, գլխին մի հասարակ կիներեղնագոյն շալ: Անկարգ մազերը կիսով չափ սփռել են քույս քույս եւ ջուր ջուր դեմք: Քիչ նսան է զեղունու): Հա՛ա, դէ շուտ ասա, որ ես էլ ուրախանամ է: Ուրեմն քանի՞ ամիս է:

ՍԱՆ. Ի՞մ հաշուով պէտք է որ չորս ամիս լինի:

ՇՊՊ. Սպասիր ես ասեմ: (Հաշուում է մատների վրայ): Հիմի յոշուաւարումն ենք, չէ՞: Հա՛, յոշուաւար, փետուաւար,

մարտ, ապրիլ, մայիս, դա էլ յունիս: Ասածով Համարձ-մանին կ'ուշենաս մի գեղալ թոռնիկ:

ՍԱՆ. Երանի տղայ լինի: (Ծխաւորձը շեցրել է, նշան է անում Ծպպանիկին կրակ դնելու ծխախոսի վրայ):

ՇՊՊ. Անպատճառ տղայ կը լինի, սիրտդ ուրախ պահիր: (Վեր է կենում, երկաթեայ կրակափայլով վերցնում է մի վառ կրակ մանդալից եւ դնում Սանամի ծխաւորձի վրայ: Երբ սա ծխախոսը վառում է, ածուխը վերցնում է ու գցում մանդալի մեջ):

ՍԱՆ. Դու ինչի՞ց պիտեա, որ տղայ կը լինի: (Ծխում է):

ՇՊՊ. Անցեալ օրը պոչաւոր աստղ երեւաց երկնքի վրայ. օրէնք է, որ պոչաւոր աստղ երեւելու տարին միայն տղաներ են ծնւում:

ՍԱՆ. Աստուած քո ասածը կատարէ: (Տեսնելով Սուսանին, աչքով ունիւր գգուշացնում է Ծպպանիկին):

Տ Ե Ս Ի Լ 2.

Նոյնք եւ Սուսան

ՍՈՒՍԱՆ. (Գալիս է ձախ կողմի դռներով, ձեռին մի սկուտեղ, փին երկու բաժակ սուրճ կարով: Գլուխը ծածկած է շփեղ ուլիթաւոր ձուքիսով, կարմիր քոռով: Հագնուած է սևահաւ մեհաֆես, ֆան խո ծնողների սանը: Ոսկերին սւեյի նուրբ եւրոպական կոշիկներ: Սկուտեղը դնում է Ծպպանիկի ու Սանամի առջև եւ ուզում է հեռանալ):

ՇՊՊ. Կանգնիր, մի լաւ մօտիկ անեմ քեզ, ա՛յ մարալ: Երէկ ծնողներիդ մօտն էի:

ՍՈՒՍ. (Հեհափրում): Ինչպէ՞ս են:

ՇՊՊ. Հայրդ ուրախ, մայրդ ուրախ — բաղդաւոր: Ի՛նչ, ապրիր հիմա, լուրջ, տես ի՛նչ տուն/բերեց քեզ Ծպպանիկը: (Սանամին): Բոյր չինար, աչքերը դիւստ դիւստ, ունքերը դաւամով քաշած, մատներ ունէ չիմադի պէս: (Վեր է կենում, պիտը գրկում է Սուսանին եւ համբուրում): Ըհ, Ծըպպանիկը մախմար մախմար թշերիդ մատաղ:

ՍՈՒՍ. (Անթոխածութիւնից, կարմրելով երեսը դարձնում է եւ լուռ գնում է ձախ կողմի դռնով):

ՏԵՍԻԼ 3.

Սանամ եւ Ծպպանիկ

ՍԱՆԱՄ. Խեղճ երեխային ամաչեցրիր:

ՇՊՊ. Հը, ասա տեսնեմ, չնորհակա՞լ ես ինձանից թէ չէ: (Նստում է եւ սխտւում սուրճ խմել պնակից):

ՍԱՆ. Տափից մինչեւ երկինք չնորհակալ եմ, տափից մինչեւ երկինք: (Ծխախոտը դանդաղորեն մի կողմ դնելով, սխտւում է սուրճ խմել բաժակից):

ՇՊՊ. Համ սիրուն, համ խելօք, համ էլ պատուով, մեծ ու պզտիկ ճանաչող:

ՍԱՆ. Եւ ամօթով, օ, շատ ամօթով, շատ պարկեշտ: Տեսնո՞ւմ ես այս լուսամուտները, այս երեք չորս ամսուայ մէջ մի անգամ էլ չի մօտեցել որ փողոց մտիկ անի:

ՇՊՊ. Քեզ էլ սիրում է, ի հարկէ, ու պատուում:

ՍԱՆ. Օրհնուի նրա ծնունդը: Ամէն դիշեր ինքն է շինում տեղերս ու ինձ պառկեցնում: Մինչեւ քնելս մէջքս ճմռում է: Ծաբաթ օրերը գլուխս լուսնում է: Էլ չեմ խօսում եփել կարելու մասին: Խնձորի դոմա է եփում, որ մատներդ էլ հեռը կ'ուտես: Թող գործելում նմանը չկայ: Մի խօսքով, կարող եմ ասել, որ ոսկի է:

ՇՊՊ. (Ուրախ ուրախ): Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես: Դէ, թող օրէս դէն էլ թչնամիներս ասեն Ծպպանիկն այս է, Ծպպանիկն այն է: Դիդիրի դի, դիր դիդիրի դիր: (Զըրնա է զարկում եւ նստած տեղը պարում): Դիւ, դիւ, դիւ:

ՍԱՆ. Աղջի դէ պար ես գալիս, մարդավարի պարիր, որ քէֆս բացուի:

ՇՊՊ. Աչքիս վրայ: (Ետը գլխից դեմ գցելով, առագ ոսփի է կանգնում եւ սխտւում է պարել, ջըրնա զարկելով): Այ, հաա, հա... Ծափ տուր, ծափ տուր, Սանամ խանում: Դիրիրի, դիրիրի, դիդի, դիդի, դիդի, դիդի: Ծափ տուր հա, ու... խայ, ուխայ, չալղուս բոնեց, չալղուս բոնեց: (Պարում է):

ՍԱՆ. (Ծափ տալով, շարունակ կուշ կուշ ծիծաղում է քարճրաճայն): Չմեռնես, դու Ծպպանիկ, չմեռնես, սպանեցիր ինձ: Դէ, լաւ, հերիք է, թէ չէ, իմ պարս էլ բռնում է: (Նստած տեղը պարում է):

ՇՊՊ. (Դադարում է պարել եւ, շարը գլխին գցելով, նստում է): Օհ, քամիս դուր եկաւ:

ՍԱՆԱՄ. (Տակալին ծիծաղելով): Օ'հ, թուլացայ, թուլացայ: Սատկած, գիշեր-ցերեկ պարում ես:

ՇՊՊ. Ինչո՞ւ չեմ պարել: Ո՛չ փող ունիմ, ոչ պարաք: Մի մարդ ունիմ գուռնաչի, գիշեր ցերեկ փչում է: Չփչելիս՝ կոնծում է: Հէնց որ գլխին դարկում եմ, լափաշւում է ձկնի պէս, խռմփում է խողի պէս: Այս քաղաքն իմ տունն է, քոռ ու քաշալ իմ դուլն է: Սյտեղ ուտում եմ, այնտեղ խմում, աղջիկներին պսակում, խալաթները ստանում: Բայց քեզանից նեղացած եմ, Սանամ խանում, շատ եմ նեղացած:

ՍԱՆ. Ինչո՞ւ, ա կնիկ:

ՇՊՊ. Մի՞տդ է ինչ օյին բերեցիր գլխիս հարսանիքի միւս օրը, երբ եկել էի խալաթս ստանալու:

ՍԱՆ. Ախ, Ծպպանիկ, մի՛ խօսիր դրա մասին: Օ', չը գիտես Ռուստամս ի՞նչ դրութեան մէջ էր այդ երեք օրը: Տունը քանդուի բամբասողների, ի՞նչ ասեմ:

ՇՊՊ. Ախար չէ՞ որ ես Ծպպանիկն եմ: Քաղաքը կաթսայ է, ես չերեփ, կարող եմ այսպէս էլ խառնել, այնպէս էլ: Բայց ես աննամուս չեմ, չէի թողնի, որ քեզ նման պատուաւոր կնոջ տունը թքած պատառ մտնէ:

ՍԱՆ. Դէ, անցածն անցել է. թողնե՛ք: Հիմա որդիս ինձանից այնքան չնորհակալ է, այնքան, որ ասել չեմ կարող: Նա Սուսանին սիրում է իւր աչքի լոյսի պէս:

ՇՊՊ. Ընհ, Ծպպանիկը Ռուստամիդ ջանին մատաղ, երբ է՞ գալու:

ՍԱՆ. (Հառաչելով): Վալլահ, չգիտեմ: Առաջ գրել էր, թէ Զրօրհնէին այստեղ կը լինի. չեկաւ: Հիմա դրում է, թէ Զատիկն է գալու:

ՇՊՊ. Նամակ գրելիս ինձանից շատ շատ բարով արաւ գրիր, որ այն սատկած մարդու համար մի կտոր լեզու շալ բերի չուխացու:

ՍԱՆ. Աչքիս վրայ: Մատիս թել կապիր, որ չմոռանամ: (Մեկնում է ձեռք):

ՇՊՊ. (Իւր շալի ծուկերից մի քեղ պոկելով, կապում է Սա-
նաւի մասին): Երեք տարին մի չուխա է մաշում: ա՛յնքան
հարբում է ու փողոցներում չնթռնում: Հոգիս դուրս եկաւ
շատ ծեծելուց: (Լսում է երեկոյեան զանգերի ձայն):

ՍՍՆ. (Երեւին խաչակնկելով): Զանգերը տուին: Այսօր
կիրականում է, պէտք է եկեղեցի գնալ: (Բարձր): Աղջի,
Սուսան: (Վեր է կենում):

ՏԵՍԻԼ 4.

Դոյնք և Սուսան

ՍՈՒՍ. Համէ: (Երեւում է ձախ կողմի դռների մէջ):

ՍՍՆ. Զարչավս տուր ինձ:

ՍՈՒՍ. (Գուրս է գալիս ձախ կողմի դռներից Սանաւի
ջարշով ձեռքին):

ՇՊՊ. (Վեր է կենում): Է՛, ես էլ գնամ, մի քանի տը-
ներ ունեմ մանկու: (Սուսանին): Եկ, մին էլ պահեմ այդ
թշերդ: (Հանքուրում է Սուսանին): Բարով մնաս: (Գնում է
խորքի դռներով):

ՍՍՆ. (Սուսանի օգնութեամբ փաքարուել է չարշովի մէջ):
Ես եկեղեցի եմ գնում. չտխրես առանց ինձ: (Գնում է
խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 5.

Սուսան մենակ, յետոյ Սուսամբար

ՍՈՒՍՍՆ. (Ուղեկցելով Սանաւին եւ Շպարսիկին մինչեւ
խորքի դուռը, յետ է գալիս, դասարկ բաժակները վերցնում է,
սանում ձախ դռներով, վերադառնում է մի սեւակ յովում: Հա-
ռաջում է: Նորից գտնի ձայն: Ցնցում է, երեւին խաչակնկում:
Զոխում է յասակի վրայ երեսը դեպի արեւելք եւ աչքորում, երեք
անգամ ձախսը կպելով յասակին): Երկնային դատաւոր, մի
բան եմ խնդրում քեզանից՝ արտասուքը աչքերիս, որ այն
խեղճ աղան ինձ մոռանայ եւ իմ անբաղդ ծնողները բաղդա-
ւորուեն: Ամէն: (Ոչի է կշռում):

ՍՈՒՍՍՐ. (Գալիս է խորքի դռներով՝ չարշաւով եւ եւ-

րոպական կոշիկներով): Բարով, Սուսան: (Հանքուրում է:
Զարշովը վերցնում է ու մի կողմ դնում):

ՍՈՒՍ. (Ուրախանալով): Ի՞նչ լաւ արիւր, որ եկար, սիրտս
հաքում էր տխրութիւնից:

ՍՈՒՍՍՐ. Դռների մօտ սկեսրիդ պատահեցի, ասաց
մենակ ես, եկայ: (Նստում է):

ՍՈՒՍ. Ո՞րտեղ էիր: (Նստում է):

ՍՈՒՍՍՐ. Մարիամ բաջու մօտ:

ՍՈՒՍ. (Հետաքրքրւած): Ի՞նչպէս է խեղճ կինը:

ՍՈՒՍՍՐ. Է՛, խեղճ ասես, թողնես: Պառաւել է,
լղարել, կուշ եկել:

ՍՈՒՍ. (Տխուր): Անիծում էր ինձ:

ՍՈՒՍՍՐ. Նա քեզ չի անիծում, Սուսան, ծնողներիդ
է անիծում: Զանգերի ձայնը որ լսեց, սկսեց կուրծք թա-
կել, Աստուած կանչեց. «Կնիկդ օրս ընկնի, Բարխուդար,
ասում էր: Տափը փուշ դառնայ, նա ոտաբաց, ֆառաւանք
ընկնեն նրա ետեւից, վաղ տայ, վաղ տայ, տեղ չհասնի,
աման ալլահը, կսկծալի հառալը, դադ ու բեղապը, երկինք
բարձրանայ, Աստուծոն չհամնի»: Ի՞նչ գիտեմ, էլի այս տե-
սակ հազար ու մի անէծքներ:

ՍՈՒՍ. (Խորին սարսափով): Աման, աման, Սուսամբար,
իմ ծնողներն այդ անէծքների տակից դուրս դալ չեն կա-
րող: Իմ գիշեր ցերեկուայ աղօթքները չեն փրկիլ նրանց:
Օ՛, սարսափելի է: Նրան էլ տեսա՞ր:

ՍՈՒՍՍՐ. Սէյրանի մասին ես հարցնում: Նա այստեղ չէ:

ՍՈՒՍ. Այստեղ չէ՞:

ՍՈՒՍՍՐ. Ահա մօտ երկու շաբաթ է գնացել է Դաղստան:

ՍՈՒՍ. (Վախեցած): Դաղստան, ինչո՞ւ համար է գնացել:

ՍՈՒՍՍՐ. Աղբու շալ բերելու: Մայրն ասում է, ու-
ղում է այժմ առուտուրով պարապել: Բայց դու ինչո՞ւ վա-
խեցար, սպրտնեցիր:

ՍՈՒՍ. Ոչինչ, ոչինչ: Սիրտս մի կասկած ընկաւ: (Աշ-
խատում է գույքը իրան):

ՍՈՒՍՍՐ. Ես դարմանում եմ քեզ վրայ, Սուսան,
որ դու էլի մոռնում ես Սէյրանի մասին:

ՍՈՒՍ. Կարող եմ չմտածել, քանի որ ես եմ նրա անբաղդութեան պատճառը:

ՍՈՒՍԱՄԲ. Իսկի էլ դու չես, հայրդ է մեղաւոր:

ՍՈՒՍԱՆ. Ոչ ոչ, Սուսամբար, ես եմ մեղաւորը: Ճշմարիտ է, հայրս խիստ մարդ է, բայց նա իւր նամուսի գերին է ու իւր խօսքի տէրը: Նա պատուիրել էր, որ ես մինչև պսակուելս չտեսնուեմ Սէյրանի հետ, չպիտի տեսնուէի:

ՍՈՒՍԱՄԲ. Էհ, ի՞նչ պատահեց, որ տեսնուեցիր, աշխարհը տակնուվրայ եղաւ:

ՍՈՒՍ. Հարցրու հօրս, տես ի՞նչեր էր մտածում իմ մասին:

ՍՈՒՍԱՄԲ. Գիտեմ: Նա կարծում էր, որ դու...

ՍՈՒՍ. (Բնդհանրապէս): Հապա, հէնց այդ էր, որ տանջում էր նրան: Պէտք է տեսնէիր, թէ ի՞նչ օր էր քաշում նա մինչև պսակուելս: Շատ անգամ ամօթից անից դուրս չէր գալիս:

ՍՈՒՍԱՄԲ. Գիտեմ: Հարսանիքիդ երրորդ օրը ես ձեր տանն էի: Ա՛հ, ի՞նչպէս ուրախացան ծնողներդ երբ Շապա-նիկը պարելով և երգելով մտաւ և աչքալոյս ասաց: Մայրդ ասում էր, որ հայրդ թող էր սապնել վզովը գցելու, եթէ դու պարզերես դուրս չգայիր: Երանի գիտենայի այժմ նա զղջում է, որ քեզ փչացած էր համարում:

ՍՈՒՍ. Զղջում է, Սուսամբար, զղջում է: Ամէն անգամ ինձ տեսնելիս ամօթից կարմրում է: Բայց ի՞նչ օգուտ, որ ինձ էլ անբաղդացրեց, այն խեղճ սողային էլ: Լսիր, Սուսամբար: Սրանից երեք օր առաջ երազումս տեսայ նրան: Աստուած իմ, ի՞նչպէս էր փոխուել: Ես մօտեցայ նրան, ձեռք բռնեցի: Փռում է, որ մենք երեսնաներ ենք, թթի ծառի տակ: Խօսիր, ասացի, խօսիր, Սէյրան, ինչո՞ւ ես տխուր: Հայրդ ծեծե՞լ է քեզ: Նա չխօսեց, ձայն չհանեց: Ծուռ-ծուռ մտիկ արաւ երեսին, չուռ եկաւ և հեռացաւ: Մնացի մենակ: Ա՛հ, նա փախչում էր ինձանից՝ ինչպէ՞ս մի զգուշի օձից: Ես գոռացի և ինքս իմ ձայնից զարթնեցի:

ՍՈՒՍԱՄԲ. Կարող եմ ասել, որ դա շատ լաւ երազ է: Նա քեզ է մոռացել, դու էլ նրան կը մոռանաս, պրծաւ, դնաց:

ՍՈՒՍ. Ես առաւօտեան բաց արի «Երազագիրք»ը, նայեցի: Այնտեղ ասուած է. «Օրը չար է, երազը երրորդ օրը կատարի»: Այսօր երրորդ օրն է, առաւօտից դէս ես ա՛ն ու սարսափի մէջ եմ: (Գոկրում և Սուսամբարին և հանդարտ լալիս):

ՍՈՒՍԱՄԲ. (Համբուրելով Սուսանին, շոյում և նրա գրշոյի): Լաւ, հանգստացիր: Հոգե՛ս Երազագիրք շինողի գըլուխն էլ: Իսկի չտեսայ, որ նրա ասածը կատարուի:

ՍՈՒՍ. Սիրտս, սիրտս է վկայում, որ իմ գլխին մի փորձանք է գալու:

ՍՈՒՍԱՄԲ. Ո՛ւՖ, հոգիս բերանս բերեցիր քո աս ու վախով: Դէ, հերիք է ինչքան լաց եղար: Գնա դարմօնդ բեր, ածեմ, մի քիչ քէֆդ բացուի:

ՍՈՒՍ. (Այֆերը արեւոյ ու Սուսամբարից քաժանուելով): Գարմօն, չունիմ, Սուսամբար, կտարուեց, դէն գցեցի:

ՍՈՒՍԱՄԲ. Գիտես ի՞նչ. եթէ այսուհետեւ էլ լաց ես լինելու, ես քո տունը ոտ չեմ դնիլ:

ՍՈՒՍ. (Ժպտալով): Լաւ, լաւ, մի՛ նեղանար, էլ լաց չեմ լինիլ:

ՍՈՒՍԱՄԲ. Աւելի լաւ է եկ նստենք սյուսեղ և մտիկ անենք փողոցով անցնողներին: Դա մեր միակ զուարճութիւնն է: (Մօտենալով և շուտաւելի և նստել քախի վրայ: Լուսանցից դուրս նայելուց յետոյ): Սպասիր, սպասիր, աղջիկ, այդ ձիաւորն ո՞վ է, որ մօտենում է ձեր դռներին: Աղջիկ, մարդդ գալիս է, մարդդ: (Ծափ և ծափ ուրախ ուրախ: Այս էլ քո երազը: (Վեր և կենում):

ՍՈՒՍ. (Յնկուն է): Սխալում ես, մարդս Զատիկից առաջ չի կարող գալ:

ՍՈՒՍԱՄԲ. Քեզ բան եմ ասում: Նա ինքն է, սպիտակ ձիով. շուրջահիւսից ճանաչեցի: Այ, տես, ձիուց ջած եկաւ, ներս է մտնում: (Յնկ զայն): Դէ, աչքդ լոյս: Բայց ի՞նչ պատահեց քեզ:

ՍՈՒՍ. (Գունատու է, դողում է): Դա լաւ նշան չէ, Սուսամբար:

ՍՈՒՍԱՄԲ. Յիմար յիմար մի խօսիր: Վաղիր առաջը,

վիշուր փաթաթուիր: Դէհ չուտ. լաւ, ես կը գնամ, որ պաշ-
պրէիդ չտեսնեմ:

ՍՈՒՍ. (Իշխելով իրան): Ահ, Սուսամբար, աղաչում եմ,
ինձ մնակ չթողես:

ՍՈՒՍԱՄԲ. Գնա, գնա:

ՍՈՒՍ. (Գնում է խորի դռներով):

ՏԵՍԻՒ 6.

Նոյնի եւ Ռուսամ

ՍՈՒՍԱՄԲ. (Չարչովը վերցնում է եւ պատասխանում է գնալու):

ՌՈՒՍ. (Գալիս է խորի դռներով ճանապարհի հագստով,
ձեռքին մի խուրջին: Դեմքը հոգեկան անցանքներից եւ յոգնա-
ծուքիւնից աղաւաղուել է: Ներս մտնելով, խուրջինը դնում է մի
սնկիսնում, վերցնում է ուտերից հրացանն ու ետքին: Նայում
է Սուսամբարին եւ գլխի շարժումով պատասխանում է նրա
բարեւին):

ՍՈՒՍԱՄԲ. (Երեսը շարով ծածկելով): Բարով հազար բա-
րի եկար: (Տեսնելով, որ խոր ներկայութիւնն անախորժ է Ռուս-
սանին, փաքաքում է շարչովի մեջ եւ գնում է դեպի խորի
դուռը, ուր հանդիպում է Սուսանին):

ՍՈՒՍԱՆ. (Յեռ է գալիս խորի դռներով: Նշաններով
խնդրում է Սուսամբարին իրան մենակ չթողնել):

ՍՈՒՍԱՄԲ. (Մտնում է Սուսանի խնդրով եւ դուռն գնում):

ՏԵՍԻՒ 7.

Ռուսամ եւ Սուսան

ՍՈՒՍ. (Սուսան է գալիս. ձնշուած է, քայքայ ուշքը ժողովել
է: Կանգնում է Ռուսամից հեռու, սպասողական դիրքում):

ՌՈՒՍ. (Բաւական լուրջութեամբ): Ո՞վ էր այդ կինը:
(Շուրջանին վերցնում է եւ մի կողմ դնելով նստում):

ՍՈՒՍ. Վաղադանց Սուսամբարը:

ՌՈՒՍ. Ո՞րտեղ է սկեսուրդ:

ՍՈՒՍ. Եկեղեցի է գնացել:

ՌՈՒՍ. (Մեկնալի): Ինձ համար աղօթք անելու: (Հա-
նալում է): Ծառան ձին տարա՞ւ ախոռատուն:

ՍՈՒՍ. Տարաւ:

ՌՈՒՍ. Պիտի ասէիր, որ դարի ու դարման չատ տայ:

ՍՈՒՍ. Ասացի: (Վերցնում է խուրջինը, հրացանն ու ետ-
քինը, անում միւս սենեակ եւ խնդով վերադառնում):

ՏԵՍԻՒ 8.

Նոյնի եւ Սանամ

ՍԱՆԱՄ. (Դուրից): Ղօթ ես ասում: Ահ, ահ: (Շտապով
ուրախ ուրախ գալիս է խորի դռներով): Ռուսամ, բաւա՞ս,
թարթափիլ անեմ ոտներիդ տակ: Եկա՞ր: Բարով հազար
բարի ես եկել: (Չարչովը վերցնում է եւ Ռուսամին մի փանի
սնկով հանդուրում): Կարօտած մայրդ բոյիդ մատաղ: Աստ-
ուած աղօթքներս լսեց: Աղաչում էի նրան, որ ինձ չուտ
արժանացնի տեսութեանդ, արժանացրեց: Թող մէկ էլ կա-
րօտս առնեմ: (Ուզում է կրկին հանդուրել):

ՌՈՒՍ. (Սաս, քայքայ ոչ կոպիտ, հրում է Սանամին, ոտի
է կանգնում): Բուռեկան է:

ՍԱՆ. (Հիասթափուած): Չե՞ս թողնում, որ քեզ համ-
բուրեմ, ամօթ քեզ: (Տոնը փոխելով): Ա՛ի, կուրբանամ ես,
խելքս Աստուած առել է: Դու ցրտից ես գալիս: Աղջի,
Սուսան, ծառային հրամայիր սամովարը գնի, որ մարդդ
տաք տաք չայ խմի:

ՍՈՒՍ. (Ուզում է գնալ ձախ կողմի դռներով):

ՌՈՒՍ. Հարկաւոր չէ:

ՍՈՒՍ. (Կանգ է առնում):

ՍԱՆ. Ի՞նչ է պատահել քեզ, որդի, ի՞նչու աչքունքդ
թթուած է:

ՌՈՒՍ. Հինգ օր ու հինգ գիշեր եմ անցկացրել ձիու
վրայ:

ՍԱՆ. Հինգ օր ու հինգ գիշեր. քար կարուի մայրդ:
Նա տաք տնում նստի, դու Դադասանի սարերը չափչփե՞ս

ձիւն ու ձմեռ: Հանգստացիր, որդի, հանգստացիր: Աղջիկ, Սուսան, տեղեր պատրաստիր մարդուդ համար: Կ'ուզե՞ս:

ՌՌՒՍՏ. Թող պատրաստի: (Ծխախոտի և ծխում, վեր ե կենում ու սխտւմ յիս ու սուսք փայլել):

ՍՈՒՍ. (Միւս սենեակից բերում է մի վերմակ, մի ներքնաւի եւ սխտւմ անկողին պատրաստել քախսի վրայ: Յետոյ վառում է երկու մոմ սեղանի վրայ):

ՍԱՆ. Բայց առաջ մի բան կէր, յետոյ կը հանգստանաս: Երեւի, քաղցած ես, լաւ ճաշեր ունիմ, փլաւ պատրաստեմ:

ՌՌՒՍՏ. (Ներուային): Ես ոչինչ չեմ ուզում, ո'չ ուտել, ո'չ խմել, գլուխս մի' ցաւեցնիր:

ՍԱՆ. (Վշտացած): Լաւ, լաւ, չեմ եփիլ, մի' նեղանար, բայց գիտես...

ՌՌՒՍՏ. (Անհամբեր ընդհատելով): Գնա սենեակդ:

ՍԱՆ. Դու ինձ դո՞ւրս ես անում: Լաւ, լաւ: (Յանկարծ մի բան յիշելով, նենգամիտ ժպիտով): Հա, հասկացայ, ի՞նչ միտմիտն եմ: Լաւ, լաւ, գնում եմ: Դէ, ի հարկէ, դու ջանիլ, նա ջանիլ: Մի բարձի ծերանաք, վայելեցէք:

ՌՌՒՍՏ. (Վրդովուելով): Յիմար-յիմար բաներ ես խօսում, պառաւ:

ՍԱՆ. Ես մեղայ Աստծու, ե'ս մեղայ Աստծու, էլ չեմ խօսիլ. ի՞նչ անեմ, ուրախութիւնից խելքս կորցրել եմ: Տեսա՞ր, Սուսան, տեսա՞ր: Չասացի՞ քեզ, որ այս գիշեր լաւ երազ եմ տեսել: Դիտե՞ս, Ռուստամ, դու նստած էիր սպիտակ ձիու վրայ: Սպիտակ ձին անմեղութիւն է:

ՌՌՒՍՏ. (Խիստ): Մի երկարացնիր: Բարի գիշեր:

ՍԱՆ. Գնում եմ, գնում եմ, որդի: Բարի գիշեր: Տէրը քեզ հետ: (Հանդարտ փայլելով զնում է ձախ կողմի դռներով, քաղուն արսասուելով):

Տ Ե Ս Ի Լ 9.

Ռուստամ եւ Սուսան

ՌՌՒՍՏ. (Անցողւորա՞ն է անում, բեղերը ներուային դռներով: Առանց Սուսանին նայելու): Կողպիր այդ գռները:

ՍՈՒՍ. (Որ վերջացրել է գործը, կանգնել է մի անկիւնում շխտը, հեզ, քայքայ արդեւ վնասակաւ դիտելով. ծածկում է ձախ դուռը):

ՌՌՒՍՏ. (Նստում է անկողնի վրայ եւ նայում Սուսանին զննակաւ հայեացքով): Մ'օտ եկ:

ՍՈՒՍ. (Անշարժ է):

ՌՌՒՍՏ. (Չայնը քարծրացնելով): Մ'օտի՛կ եկ, ասում եմ:

ՍՈՒՍ. (Մի փակի փայլ սուսք է գալիս):

ՌՌՒՍՏ. Մտիկ արա աչքերիս:

ՍՈՒՍ. (Նայում է նրա աչքերին եւ սարսափած երեսը դարձնում):

ՌՌՒՍՏ. Ինչո՞ւ վախեցար:

ՍՈՒՍ. Աչքերդ արիւն է կոխել, մի' նայիր ինձ այդպէս: (Երեսը ծածկում է ձեռներով):

ՌՌՒՍՏ. Դուռը կողպեցի՞ր:

ՍՈՒՍ. Ծածկեցի:

ՌՌՒՍՏ. Ես քեզ հրամայեցի կողպել: (Վեր է կենում, արագ մօտենում ձախ կողմի դռն, կողպում եւ քանաչին վերցնում): Ահա, այսպէս: Ա'հ, եթէ կարելի՛ լինէր ձեր ամօթը այսպէս կողպել եւ բանալին չարտել աղբանոց: (Բանալին ձգում է յաստի վրայ): Անպատկա՞ռ:

ՍՈՒՍ. (Ուժգին ցնցում է, քայքայ իշխում է իրան եւ գրաւիւր հպարտ քարծրացնում): Ինչո՞ւ ես ինձ անպատուում:

ՌՌՒՍՏ. Նրա համար, լի՛րբ, որ դու ինձ խայտառակել ես ամբողջ քաղաքում:

ՍՈՒՍ. Ինչո՞վ եմ քեզ խայտառակել:

ՌՌՒՍՏ. Հարցրու այս անկողնին: Ասա՛, քանի՞ անգամ ես անպատուել այդ անկողնին նրա հետ:

ՍՈՒՍ. Չեմ հասկանում, ի՞նչ ես ուզում ասել:

ՌՌՒՍՏ. Անմեղ մի՛ ձեւանար, ես համբերութիւն չունիմ: Պատմիր բոլորը, ի՞նչ որ արել ես:

ՍՈՒՍ. Ես ոչինչ չեմ արել, թո՛ղ ինձ հանգիստ:

ՌՌՒՍՏ. Խոստովանիր, ասում եմ, քանի որ ուշ չէ:

Առա: Ճանաչո՞ւմ ես Կուժ Ժախոյ Հայրապետի տղայ Սէյ-
րանին:

ՍՈՒՍ. (Յնկշում է, բայց եւ իսկոյն ստիանում): Ո՞րտե-
ղում եմ:

ՌՌԻՍՏ. Դէ, դէ, շարունակիր, պատմիր:

ՍՈՒՍ. Ես պատմեալու ոչինչ չունիմ: Բոլորը յայանի է
քեզ: Սէյրանը մեր հարեւանի որդին էր: Մեր ծնողները երե-
խայ ժամանակներս մեզ նշանել են այնպէս, ինչպէս սովո-
րութիւն է մեզանում նշանել: Մենք մեծացել ենք, նա
փչացել է: Հայրս չի հաւանել նրան և ինձ տուել է քեզ:
Քայքայ ինչու համար է հարց ու փորձը, քանի որ դու ամէն
բան գիտես:

Բան գիտես:
ՌՈՒՍՏ. Ես էլ կարծում էի յիմարի պես, որ ամէն բան
գիտեմ: Անպատկա՛ռ:

ՍՈՒՍ. Մի՛ անպատուիր ինձ անմեղ տեղը, գլխիդ վրայ
Աստուած կայ:

Աստուած կայ։
ՌՌԻՍՏ. Ձկայ իմ գլխին Աստուած։ Նա ինձանից խոտ-
վել է այն օրից, երբ զուռ ոտք ես դրել իմ տունը։ Դէ, մի՛
երկարացնիր, առա. սիրե՞լ ես այդ լակոտին։
Սիրե՞լ եմ։

ՍՈՒՍ. (Քիչ հասանելիով, շնորհակալ)։ Սիրելի եմ,

ՌՈՒՄՏ. (Յնքունելով): Ահ, լաւ, չարունակի՛ր:

ՍՈՒՍ. (Սերխանադոյ): Ականջ դիր, Ռուստամ, ես ո՛չ մարդկանց զրպարտութիւններից եմ վախենում. ո՛չ քո դաշտից, որի վրայ այդպէս սեղմել ես ձեռք: Ես միայն մի երկիւղ ունիմ: Դա Աստծու ահեղ դատաւարանն է: Այն օրը, երբ դու ե ես կը կանգնենք այդ դատաւարանի առաջ, դու կը զղձաս քո ասածների համար: Ես անմեղ եմ քո անկողնի մօտ:

մօտ։

ՌՌԻՍՏ. Սուտ ես ասում, լիբբ, սրանից հինգ օր ասած
քո սիրականը իմ խանութում, չորս ընկերներին և ծառայիս
առած, խոստովանեց, որ դու պատկանել ես նրան։

ՍՈՒՍ. (Անցյալի գայրացած): Այդ անկարելի է, սուտ է:
Մէյրանը չէր կարող այդ ասել:

Հանր. Հեր կարող այդ ասել:
ՌՈՒՍՏ. Բաց արա կուրծքդ: (Դողում է յուզմունքից):

ՍՈՒՍ. Ես վախենում եմ քեզանից: Դու կարող ես
խնձ սպանել:

ՌՌԽՍՏ. (Ս.հեղագոյ): Կաւրժքդ:

ՍՈՒՍ. Մի արա, մեղք եմ, մի արա:

ՌՈՒՄՏ. Կուրծքդ: (Յարձակչունը ե Սուլանի վրայ):

ՍՈՒՍ. (Փախչում է դեպի խորքի դուռը): Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, նա ուղում է ինձ մորթել:

ՌՌԻՍՏ. (Մտեանում է եւ բռնում Սուսանին): Չայնդ կըտ-
րիր, չա՜ն աղջիկ:

ՍՈՒՍ. (Զոհում է Ռուսսանի առաջ): Աղաչում եմ, մի՛ սպանիր, խեղճ եմ, խնայիր:

ՌՌԻՍՏ. (Ձևնում է Սուսանի կործինը): Ահա, ահա նա,
քո անմեղուկիւնը, Սե խալը, խալը, Ես խանչալիս ծայրով
դուրս կը բերեմ և չներին կը չալտեմ: Սատկի՛ր, անառակ:
(Դաշոյնը խռում է Սուսանի կործինը):

ՍՈՒՍ. (Ընկնելով յաստիկի վրայ): Արդանդիս երեխան ՎԷ-
կայ, անմեղ եմ:

86011, 10.

Enigf be Vangand

ՍՍՆՍՄ. (Մինչև Սուսանի մեռնելը յոների ետևից գո-
ռում է): Ի՞նչ պատահեց: (Ուժգին զարկելով յոներին): Բայ
արեք, բայ արեք:

ՌՌԻՍՏ. (Կանգնում է մի անկիւնում, արիւնք դաշտը)
ձեռքին եւ նայում է Սուսանին):

ՍԱՆԱՄ, Ի՞նչ պատահեց :

ՌՌԻՍՏ. Աստուծու դատաստանը կատարուեց, մայր: Ու-
րախաղիւր քո բերած հարսով:

ՍԱՆԱՄ. (Տեսնելով Սուրանիի դիակը, տարտախած): Գա-
ղան, գաղան, այդ ի՞նչ արիր: (Վազում է դիպի շուսանուտ,
կոտրում սպակիկն և դիպի փողոց): Օգնութի՛ւն, օգնութի՛ւն,
այստեղ եկէ՛ք:

ՏԵՍԻՒ 11.

Նոյն, Հարեանքներ երկու սեռից եւ Սէյրան

ՀԱՐԵԻԱՆՆԵՐ. (Ներսէս խաժուր խորհի պոնտիկ կա-
նայ եւ տղայիցի: Ոմանք գիշերուայ հագստով են):

ՍԷՅՐԱՆ. (Վազուր եւ ներս խորհի պոնտիկ համապարհի
հագուստով: Գունաս եւ, մագերը զգգուած, աչկերը կարմրած:
Խեղագար է): Բռնեցէք Ռուստամին, մի՛ թողնէք մօտենայ
թուրի ծառին: Ես սուտ եմ ասել: Սուսանն անմեղ է: Խա-
լը մայրս է անեղ բաղնիսում, ես չեմ տեսել:

ՌՈՒՍ. (Յնչուր եւ Սէյրանի խօսակցից): Նա անմեղ է
հոգիս էլ կորաւ: (Դաշոյնը ձեռքից բաց քողկելով, ընկնում
հարեանների գիրկը):

ՍԷՅՐԱՆ. (Տեսնելով Սուսանի դիմը, արձակում է վա-
րենի ձի): Ա՛ա, ա՛ա, նա ընկած է: Վե՛ր կաց, Սուսա-
ն, վեր կաց, քեզ համար թուր եմ թափ տալիս: (Բռնում է
ներկայ եղբայրներից առաջինը արտասովոր իմաստով):
Վե՛ր կաց, (Կաստի ձի): Ա՛հ, ա՛հ, ա՛հ...

ՄԻ ՀԱՐԵԻԱՆ. Նա խելագարուել է. կապրտենք նրան:
ՍԱՆԱՄ. Բալաս վա՛յ, վա՛յ բալաս: (Կուրծքը կեղեքում է):

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ռ. Յ. Բ.

Վ Ե Ց Զ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՍԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՆՅԻ ՀԱՅԻ ԱՂԱՆ, 3 արար, Յ. Ամիրենց . . .	20
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ, 5 արար, Պարոնեան . . .	50
ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՈՒՏԻՆԵՐԸ, 1 արար . . .	10
ԳԱՆՆՈՒԿԸ, Մանկական, Վրթ. Փափաղեան . . .	15
ԳՈՂԸ, 1 արար, Տ. Միրզո . . .	10
ԵՐԱՆՈՍ ԱՂԱՆ, 1 արար . . .	10
ԶԱՎԱԼԸ, 1 արար, Եր. Օտեան . . .	10
ԽԵԼԻՔԻՑ ՊՈՏՈՒՀԱՆ, 4 արար . . .	50
ԿԻԿԼՈՊ, 1 արար . . .	5
ԶԵՆՈՐԱ ՉԱՐԱՆ, 1 արար, Եր. Մկրտիչեան . . .	25
ՄԵՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ, 1 արար » . . .	25
ՄՈՂՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴ, 1 արար . . .	10
ՇՈՂՈՐՈՐԴԸ, 3 արար, Յ. Պարոնեան . . .	25
ՉԱՐԵԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ, 3 արար, Օտեան-Կիւրճեան . . .	15
ՉԱՇՏՈՆԻ ԽՈՐԵԱԼ Է, 1 արար . . .	7,50
ՌԲԱՓԷՆ, 3 արար, Մարիէն . . .	30
ՂԱՇԽԱՌՈՒՆ, 1 արար, Եր. Մկրտիչեան . . .	25
ՂԵՑՈՒԿԷՍ ՊՈՐՏԻ ԺԱՌԱՆԳ, 1 արար . . .	15
ՓՐԿԻՉՆԵՐ, 4 արար, Առանձար . . .	40

ԼՈՅՍ ՏԵՍԻՒ

Մեր Դպրոցական Հրատարակութեանց շարքէն

ՀԱՅԿԱՇԷՆ ԱՅԲԵՆԱՐԱՆ

Կազմեց՝ ՍՈՍՎԱԿԻ.

Նորագոյն մանկավարժական մէթոդով խմբագրուած գործ մը՝

Որուն կողքը կը դարձարեն

ՀԱՅԿԱՎԱՆ ԳՐՈՇԸ, ՀԱՅԿԱՎԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Եւ

ՄԻՋՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Նոր եւ մանրամասն փարէսը՝ ըստ Հայաստանի Գաղութիւն.

Գին 15 Դր.

Մեծապատիւ համար խիստ մատչելի գեղ:

Թական Հաստատութիւններու եւ Ուսուցիչներու 5 զրէ. փոխարէն
նմոյշ կը դրկուի:Ծանօթ. — Պատրաստութեան մէջ է ներկայ Այբբանարանին
պարզեցման Բնութագրական շարքը:

ԳՐԱՏԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ, ՏԷՂԵԿԱԳԻՐ Յ. ՊԱՍԿԵԿՆԻ .	12,50
ԱՐԻԻՆԻ ԶՈՐԸ, ՍԺՐԱՄ ԲԻՆԲԱՄԻ	20
ԱՐԵՒԵԼ. ԽՆԴԻՐ ԵՒ ՀԱՅԿ. ՀԱՐՑ, ՍԺՐ. ԲԻՆԲԱՄԻ	10
ՀԱՅ. ԲԺՇԿՈՒԹ. ՏՈՒՄՆ ԶՈՀԵՐԸ, Հ. Բ. ՄԻՈՒԹ.	—
ՀԱՅՐԵՆԻԲԻՆ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ, ԳՐ. ՄՈՒՐԱՄԵՆԻ	50

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՀԱՅԿԱՇԷՆ» — Ա. ՇԱՐԲ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ, ԴՐԱՆԱ 4 ԱՐԱՐ, ՇԻՐՈՒՆԳԱԳԷԻ .	40
ԱՐՈՒ ԼՈՒՍ ՄԱՀԱՐԻ, ՔԱՍԻՏ, Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ .	20
ԽՈՆԱՐՀՆԵՐԸ, ՏԻՍԵՐ, Յ. ՕՀԱԿԱՆԻ	50
ՆԱՄՈՒՍ, ԴՐԱՆԱ 4 ԱՐԱՐ, ՇԻՐՈՒՆԳԱԳԷԻ	50
ԶԱՐ ՈՐԻ, ԴՐԱՆԱ 4 ԱՐԱՐ, ՇԻՐՈՒՆԳԱԳԷԻ (ՄԱՆՈՂԻ ՏԱԼ)	50

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻՆ ՊԻՏԻ ՅԱՆԶՆՈՒԻՆ

ԵՐԱԶՆԵՐԻՍ ԱՇԽԱՐՀԸ, Ա. ԱՆԱՐՈՆԵԱՆ

ԿԻԼԻԿԻԱ ԵՐԳԱՐԱՆ, ԴՐԱՍՈՒ, 400 Է աւելի ԿՐԳԵՐՈՎ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆԵՐԸ. — ՊՈԼՏՈՅ ԿԵՂԵՐՈՆԱՄԵՂԻ

“ԿԻԼԻԿԻԱ,” ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ԹԻՒ 37, ԴԱՍԿԻՍԺԱՆ ՓՈՂՈՑ, ԲԵՐԱ — Կ. ՊՈԼԻՍ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՂ

The “CILICIA,” BOOK STORE

10 Victor Ave., H. P.

(U. S. A.)

DETROIT, MICH.

ՀՀ Ազգային գրադարան



NL0352973

48324